



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆՀԵՐՔԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY



THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

М. Г. НЕРСИСЯН

НЕОПРОВЕРЖИМЫЕ
ДОКУМЕНТЫ О ГЕНОЦИДЕ
АРМЯН

Издательство "Гитутюн" НАН РА
ЕРЕВАН 2005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ՊԱՏՄԻԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԿՐՏԻՉ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՆՀԵՐՔԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Դ)
Լ 633

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Դիստոնոթյան և Արևելագիտության
ինստիտուտների գիտական խորհուրդների որոշմամբ

*Հրատարակության պատրաստեց՝ Ն. Վ. ԴԵՐՈՅԱՆԸ
Խմբագրությանը՝ Պ. Մ. ՄՈՒՐԱՅԱՆԻ*

Լ 633 Մկրտիչ Լեւոնիսյան. *Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր. Ե., «Գիտություն» հրատ., 2005, 336 էջ:*

Բազմազգի և բազմալեզու ազրյուրների համադրմամբ ու լուսարանմամբ Հեղինակը սահմանում է ցեղասպանության ծրագրված բնույթը, ասպեցուցում ինքնապաշտպանության կատարած դերը և մերժում թուրքերի «քաղաքակրթական» առաքելությունը:

Հասցնագրվում է ընթերցող լայն հանրությանը:

0503020913

Ե

703(02) – 2005

2005

ԳՄԴ 63.3(2Դ)

ISBN 5 – 8080 – 0604 – X

©22 ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2005



ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ավագ. Ակրտիչ Ներսիսյանին ու նրա գիտական պատկառելի ժա-
նանդությունը ծանաչողներս գրեթե համոզված էինք, թե կյանքի ին-
ներորդ տասնամյակ ուտք դնող գիտնականը (1909–1999) «Պատ-
մության կեղծարարները» գրքով ու նրան հաջորդած մի քանի փաս-
տալից հողվածներով ավարտում է իր ասելիքը, ի մասնավորի այն
անփոփոխով «Հայկական հարցի ծագումը և Մեծ տերությունները»
(ՊՐՀ, 1999, -1, էջ 101–108) հրապարակմամբ: Արխիվային նյութերը
դաստասելիս պարզվեց, սակայն, որ ըննության սթափ կարողությու-
նը պահպանած և գիտական թեմաներ ընտրելիս անվիեպ հետևողա-
կանություն ցուցաբերող գիտնականը ծրագրել է եղած հրապարա-
կումներից մի երկուսի լրամշակմամբ ու նոր շեշտադրումներ բովան-
դակող ըննությունների կցմամբ կազմել «Հայոց ցեղասպանության
անհերքելի փաստաթղթեր» նոր մենագրություն:

Հանգուցյալ գիտնականի ցանկությունն ու հիշատակը հարգելու
պարտավորվածությունը չէ միայն, որ մեզ թելադրեց առկա նյութերը
ի մի բերել և Հայոց ցեղասպանության ցավալի 90-ամյակի օրերին
ընթերցողների ուշադրությանը հանձնել այս գիրքը: Աշխատության
բոլոր հինգ գլուխները գրված են տևականորեն հավաքած ու նոր
հարցադրումներով լուսաբանվող փաստական հարուստ նյութի վեր-
լուծությամբ, արդիական թելադրանքներ հրահրող ընդհանրացում-
ներով ու գիտական ճշմարտություններ բացահայտող փաստաթ-
կումներով: Ս. Ներսիսյանը չէր հանդուրժում պատմական իրողու-
թյան որևէ խեղաթյուրում, ինչպես որ մերժում էր նաև վստահելի աղ-
յուրին վերաբերող ամեն մի սեթևեթանք:

Մեզանում Մ. Գ. Ներսիսյանը առաջինը քաղաքացիական համար-
ժակություն և գիտական խստունություն ունեցավ հաղթահարելու
քաղաքական ու գաղափարական արգելանքները և 1946 թ. դոկտո-
րական թեզ ներկայացնելու «Հայ ժողովրդի ազատագրական պայ-
քարը թուրքական բռնապետության դեմ 1850–1870 թթ.» խորագրի
տակ: Մեղադրանքի տարափին հակառակ՝ նա վերանայեց Բաֆֆու
և Ռ. Պատկանյանի ժառանգության զնահատությունը, թուրքական

բռնապետության դեմ հայոց պայքարը հայտարարեց ազատագրական, իսկ թուրքական պատմագրության բարբառաբանները՝ կեղծարարություն: Դարձյալ Սկրտիչ Ներսիսյանն էր, որ 1965-ին «Պրավդայում» տպված հոդվածով ԽՍՀՄ-ում բարձրածանյա խոսք ասեց Դայոց ցեղասպանության մասին, ապա և առաջինը խմբագրեց վավերագրերի այն ժողովածուն, որով հիմք դրվեց Դայաստանյան ցեղասպանագիտությանը («Դայերի Գեմնոցիդը Օսմանյան կայսրության մեջ», 1966, 1982, 1991):

Գրքում արծարծվող հիմնական խնդիրների հատկապես ընդգծելի են երկուսը՝ Դայոց ցեղասպանության ապացույցները այնքան շատ են և այնքան հավաստի, որ թուրքական իշխանությունների և նրանց պատվերով պատմագիտությանը զբաղվող թուրք կամ թուրքամետ պատմաբանների մեղքումը վերածում է կեղծարարության, և ապա՝ օսմանյան պետությունը իր սկզբնավորման օրից քաղաքակրթական որևէ առաքելություն չի ունեցել և չէր էլ կարող ունենալ. թուրք զինվորն ամենուր իր հետ տարել է արյունահեղություն, կոտորած, թալան, ավերածություն և քաղաքակրթական նվաճումների ոչնչացում: Մ. Ներսիսյանը դժվարանում է առանց վրդովմունքի ու որակումների խոսել այդ իրողությունների մասին:

Խմբագրությունից հետո էլ գրքում կան որոշ կրկնություններ, գուցե և մեղմելու կարոտ որակումներ, սակայն ամբողջության մեջ այն ուսանելի և նպատակային աշխատություն է:

Դեղինակային շարադրանքը կատարված էր մասամբ հայերեն, մասամբ՝ ռուսերեն լեզուներով: Միասնական դարձնելու համար հայերենը թարգմանեցինք ռուսերենի և հակառակը:

Դավելվածում ներկայացվող փաստաթղթերը հիմնականում քաղված են Մ. Ներսիսյանի խմբագրության կազմվող և մատվածք կիսավարտ մնացած «Դայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» վավերագրերի ժողովածուի երկրորդ հատորից՝ գիտնականի քաղմանյա աշխատակից Լուսն Դերոյանի խմամածու ընտրությամբ:

Պրոֆ. ՊԱՐՈՒՅԲ ՍՈՒՐԱՂԱՅԱՆ

Ա..

ԱՐԵՎԱՏԱՅԱՅԵՐԻ 1915–1916 թթ. ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ԵՈՒՐՁԸ¹

Արևմտահայերի 1915–1916 թթ. ցեղասպանության՝ Մեծ եղեռնի մասին, ինչպես հայտնի է, գոյություն ունի Հարուստ գրականություն: Դեռևս Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին գրվեցին և Հրապարակվեցին արժեքավոր աշխատություններ, որոնցում լուսաբանված են հայ ժողովրդի այդ մեծ ողբերգության պատմության շատ էջերը: Ընթացող տարիները բացահայտող գրքերով ու հոդվածներով հանդես եկան ոչ միայն հայազգի հեղինակներ, այլև ռուս, անգլիացի, ֆրանսիացի, ամերիկացի, գերմանացի և այլ ժողովուրդների գիտնական պատմաբաններ ու առաջավոր Հրապարակասուներ: Հայ ընթերցողն այսօր էլ Հարգանքով ու երախտագիտությամբ է արտասանում լորդ Ջեյմս Բրայսի, Առնոլդ Թոյնթրիի, Յուրի Վեյսելովսկու, Վալերի Բյուսովի, Անատոլ Գրանսի, Անրի Բարբիեի, Հենրի Մորգենթաուի, Հերբերտ Ադամ Գիրբոնսի, Յուհանես Լեպստուսի, Արմին Վեգների և քաղմամբիվ այլ ազնիվ ու արի մարդկացի անունները: Ավագ սերնդի այդ ներկայացուցիչներին ավելի ուշ փոխարինեցին երիտասարդ ուսումնասիրողներ, որոնք, շարունակելով նախորդների գործը, լույս բնծայեցին գիտական նոր աշխատություններ: Ես այստեղ չեմ թվում անուններ, քանի որ նրանք մեզ լավ հայտնի են:

Վերջին տարիներին տեղի ունեցան միջազգային գիտաժողովներ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում: Հի-

¹ Լողվածի Համառոտ տեքստը գեկուցված է Մեծ եղեռնի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում, որը տեղի ունեցավ Երևանում 1995 թ. ապրիլի 21–23-ին:

չենք, օրինակ, որ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ 1990 թ. ապրիլին Երևանում կայացավ միջազգային գիտաժողով նվիրված Հայերի ցեղասպանության պատմության և տեսության Հարցերին: Գիտաժողովում զեկուցումներով Հանդես եկան մեծ թվով անվանի մասնագետներ Հայաստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ավստրալից, Գերմանիայից, Եգիպտոսից, Իտալիայից, Իսրայելից, Կանադայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից և մի շարք այլ երկրներից: Ինչպես մյուս միջազգային, այնպես էլ այդ գիտաժողովը զգալի չափով նպաստեց Հայերի ցեղասպանության պատմության շատ Հարցերի լուսարանմանն ու մեկնաբանմանը²:

Սակայն, ընդգծելով ու լիովին ընդունելով կատարված գրական մեծ գործը, այնուամենայնիվ, չպետք է անտեսել այն Հանգամանքը, որ Մեծ Եղեռնի պատմության մի շարք Հարցեր դեռևս կարիք ունեն Հանգամանալից ուսումնասիրության: Ավելին. քննարկվող խնդրի վերաբերյալ Հրապարակված որոշ աշխատություններում առկա են զգալի թերություններ ու սխալներ: Հիշատակենք դրանցից մի քանիսը:

Առաջին. երիտթուրքերի՝ իթթիհազականների մասին տարրեր լեզուներով գրված մի շարք աշխատություններում անբավարար է լուսարանվել 1909—1914 թթ. նրանց վարած քաղաքականությունը ազգային Հարցում: Մասնավորապես, քաջա-Հայտոված չեն երիտթուրքերի այդ տարիներին ունեցած Հակահայկական ծրագրերը: Համախ մոռացության են տրվել կիլիկիահայերի կոտորածները: Հարկ եղած խորությամբ ուսումնասիրված չեն Մայրնիկ քաղաքում երիտթուրքերի 1910—11 թթ. կայացած գաղտնի խորհրդակցություններին և Համագումարի խիստ ազգայնամոտիական, ռովինիստական և Համագումարի որոշումները, որոշումներ, որոնցում արտահայտված են իթթիհազականների պանիսլամիստական, պանթուրքական ծրագրերը ինչպես Հայերի, այնպես էլ

բոլոր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ: Գաղտնիք չէ, որ գլխավորապես Հենց այդ որոշումները կանխորոշեցին 1915—16 թթ. ցեղասպանությունը: Պետք է ավելացնել, որ շատ աշխատություններում անտեսվել ու չեն հիշատակվել բազմաթիվ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ արդեն 1912—13 թթ. երիտթուրքերը գործնական քայլեր են կատարել Հայերի Համընդհանուր կոտորածներ կազմակերպելու ուղղությամբ: Այդ մասին կան Հարուստ նյութեր և կարևոր վկայություններ ինչպես պետական արխիվներում, այնպես էլ իր ժամանակի պարբերական մամուլում: Կարծում եմ ավելորդ չէ բերել մի քանի օրինակ:

Դեռևս 1911 թ. Հոկտեմբերի 8-ին Ռուսաստանի դեսպանը Կ. Պոլսում իր Արտաքին գործոց մինիստրությանը ուղղած շտապ Հաղորդման մեջ նշում էր այն Հանգամանքը, որ Թուրքիայի Հայ բնակչության նկատմամբ խիստ ուժեղացել են Հայամանքները, որ Հայերի սպանություններն ու թալանը, ըսնի իսլամացումը և այլ կարգի այլ գործողությունները զարժել են ավելի Հանախակի: Առանձնապես ընդգծվում էր այն, որ Հայերի դեմ կատարվող այդ Հայամանքներին գործուն մասնակցություն են ունենում պաշտոնական անձինք, և որ Թուրքական կառավարության Հրամանով Հայերից գրավվում են նրանց բոլոր սեսակի դեմքերը³: 1912 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի Հայոց պատրիարքին ուղարկված զեկուցման մեջ Աղթամարի կաթողիկոսության ներկայացուցիչները Հայտնում էին այն Հայամանքների, սպանությունների մասին, որոնք անելի են ունենում թեմի վաճաններում ու գյուղերում⁴: Էրզրումի ուսական գլխավոր Հյուպատոս Աղամովը 1913 թ. զեկտեմբերի 7-ին Հեռագրում էր Կ. Պոլսի իր դեսպանին, որ քաղաքում մասնեղականներին արհեստականորեն զրգոում են Հայերի դեմ: Այդ արվում է իթթիհազականների (երիտթուրքերի)

² Միջազգային այդ գիտաժողովի մասին մանրամասն ինֆորմացիա տպագրվել է «Պատմա-բանասիրական Հանդեսում», տե՛ս 1990, № 2:

³ Տե՛ս Գեոցիդ армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией проф. М. Г. Нерсисяна. Ереван, Изд. АН АрмССР, 1966, с. 201—202.

⁴ Архив внешней политики Российской империи (АВПРИ). Политархив, д. 3459, л. 68—69.

սներում տեղի ունեցող գաղտնի ժողովներում: Իթթիհազականների միությունը քաղաքային կոմիսար ԱՀՏեղ Հիլմիի գլխավորությամբ վարում է խիստ Հակահայկական պրոպագանդա⁵: Նույն Ազատովի 1913 թ. դեկտեմբերի 29-ի Հեռագրում Հաղորդվում էր. «Այստեղ (Էրզրումում) տեղի ունեցող գաղտնի ժողովներում սկսել են խոսել Հայկական կոտորածների մասին: Մոլլաների հրամանով մահմեդականները սկսել են գլուխները ծածկել սպիտակ շավաներով: Ըստ տարածված լուրերի՝ ամեն ինչ պատրաստ է Ջարդերի Համար, միայն սպասում են մայրաքաղաքի (Կ. Պոլսի) ազդանշանին»⁶:

Նման փաստերի մասին խոսում էին նաև շատ լրագրեր: Այսպես, Լոնդոնի «Թայմս» թերթը Հայտնում էր, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքը 1912 թ. դեկտեմբերին այցելել է թուրքական կառավարության ներքին գործց մինիստրին և ըողոքել, որ թուրքական թերթերը սանձարձակ պրոպագանդա են ծավալել Հայերի դեմ⁷: Նույն թերթը 1913 թ. փետրվարի 6-ին գրել է, որ Վանից ու Ադրդից ստացվել են Հեռագրեր այն մասին, որ Հայերի ու մահմեդականների հարաբերությունները օրեցօր սրվում են⁸: Նույնանման բազմաթիվ տեղեկություններ Հրապարակվեցին նաև Հայկական, ուստական ու Քրանսիական թերթերում:

Այս բոլորը կատարվում էր 1911—1913 թթ., այսինքն մի ժամանակ, երբ ոչ մի խոսք չկար Հայերի «ապստամբություններ» մասին: Իսկ ինչպես Հայտնի է պատմության թուրք կեղծարարները Հայերի զեպորտացիայի ու կոտորածի պատճառը Համարում են 1915 թ. «Հայկական ապստամբությունները»: Զարմանալի տրամաբանություն:

Այսպիսով, կարելի է ասել, որ եթև Հանգամանորեն բացահայտվեր երիտթուրքերի 1909—1914 թթ. ազգայնական քաղաքա-

կանությունը, ապա այդ մեծապես կնպաստեր ավելի Հստակ պատկերացնելու և Հասկանալու Մեծ Եղեռնի պատմության Հետ կապված շատ Հարցեր:

Երկրորդ. Թուրքիայի նոր պատմությունը նվիրված պատմագիտական մի շարք ուսումնասիրություններում զարգացվում է այն տեսակետը, թև Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին գերմանացիներն են ղեկավարել Թուրքիայի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականությունը, որ երիտթուրքերը միայն կատարել են գերմանացի զինվորականների ու զիվանաղեկների կամքը: Այս սխալ կարծիքը արտահայտել է, օրինակ, ռուս նշանավոր թուրքագետ Անատոլի Միլլերը իր մի քանի գրքերում ու Հոդվածներում՝ նվիրված Թուրքիայի նոր և նորագույն պատմության Հարցերին⁹:

Իրականությունը, սակայն, այն է, որ 1915—16 թթ. ցեղասպանությունը ոչ այլ ինչ էր, եթև ոչ երիտթուրքերի տարիներ առաջ մտածված ու մշակված բարբարոսական ծրագրերի իրագործումը: Գերմանացի ազդեցություններ, իհարկե, Հանդես են եկել երիտթուրքերի Հետ միասին ու պաշտպանել նրանց: Հայտնի է, որ գերմանական բանակի շատ սպաներ անզամ մասնակցել են Հայերի կոտորածներին, բայց այնուհանդերձ կասկածից վեր է, որ Մեծ Եղեռնի գլխավոր, Հիմնական մեղքը ընկնում է էնվեր, Թալեաթ, Ջեմալ փաշաների և մյուս ռազմաշունչ գործիչների վրա, գործիչներ, որնեք Հայկական Հարցում Հետևողականորեն և ամենայն Համառությամբ Հետապնդում էին իրենց խիստ էքսպանսիոնիստական, շարդարարական ու ավանտյուրիստական ծրագրերը: Նրանք ձգտում էին ոչնչացնել Հայաստանը, Հայությունը, որպեսզի զբաղվեին իսկ նպատեն իրենց պանթուրքիստական նպատակների իրագործմանը: Եթև գերմանացիները օգտագործում էին երիտթուրքերին, ապա վերջիններս էլ օգտագործում էին գերմա-

⁵ Сборник документов Министерства иностранных дел России. Пг., 1915, с. 125.

⁶ Նույն տեղում, էջ 133:

⁷ The Times. London, 20, 12, 1912.

⁸ Նույն տեղում, 6, 2, 1913:

⁹ См. А. Ф. Миллер. Очерки новейшей истории Турции. М., 1948; Он же. Турция под гнетом германского империализма в годы мировой войны (1914—1918 гг.).—Исторический журнал, 1942, №12.

նացիներին: Հայտնի է, որ երբեմն առաջանում էին լուրջ տարա-
ձայնություններ նրանց միջև. դա ամենայն սրույթյամբ տեղի ու-
նեցավ Հատկապես 1918 թ., երբ թուրքական զորքերը ներխուժե-
ցին Անգղիզիկաս: Այսպիսով, երիտթուրքերը սուկ գործակալներ
և կամակատարներ չէին, այլ ունեին իրենց սեփական մտածված
ու մշակված ծրագրերը:

Հայերի ցեղասպանության պատճառների մասին գոյություն ունի նաև այլ սխալ կարծիք: Այսպես, անգլիացի ակամավոր պատմաբան Վ. Գոտլիբը «Գաղտնի գիմանազիտությունը Առա-
ջին Համաշխարհային պատերազմի ժամանակ» արժեքավոր աշ-
խատության մեջ Հայերի ցեղասպանության հարցում խիստ գե-
րազնահատում է կրոնական գործոնը, Հայ և թուրք բուրժուա-
զիայի միջև եղած Հակամարտության հանգամանքն ու քրդական
ավազակախմբերի դերը: Նա անհրաժեշտ հստակությամբ չի
ընդգծում այն ճշմարտությունը, որ Մեծ եղեռնի գլխավոր պա-
տասխանատուությունն ընկնում է թուրք մոլեռանդ ու ռազմա-
շունչ զինվորականների կլիկի վրա¹⁰:

Երրորդ կարծում եմ զգալի թերություն պետք է Համարվի
այն հանդամանքը, որ Հայերի ցեղասպանությանը նվիրված աշ-
խատություններում, մասնավորապես, արևմտաեվրոպական ու ամե-
րիկյան հեղինակների ուսումնասիրություններում դեռևս քիչ են
օգտագործված Ռուսաստանի պետական արխիվներում պահ-
պանված փաստաթղթերը: Իհարկե, շատ կարևոր նյութեր կան Ա-
մերիկայի Միացյալ Նահանգների, Գերմանիայի, Ավստրիայի,
Ֆրանսիայի արխիվներում, դա անվիճելի է: Բայց չի կարելի թե-
րազնահատել ու չօգտագործել այն փաստաթղթերը, որոնք կան
ուսուական արխիվներում: Ավելորդ չեմ Համարում նշել, որ տա-
րիներ շարունակ ես աշխատել եմ այդ արխիվներում, ուստի և
կարող եմ ասել, որ դրանցում գտնվող հարուստ նյութը կարևոր

նշանակություն ունի Հայերի ցեղասպանության, Հայկական հար-
ցի և ընդհանրապես Հայ մոլոդոլոչի նոր պատմության շատ հար-
ցերի բազմակողմանի ուսումնասիրության համար: Ի դեպ, հարկ
եմ համարում նշել, որ ուսական արխիվների պաշտոնական
նյութերը Հիմնովին հերքում են ուսաֆորքների հնարած այն ա-
ռասպելը, թե ուսական պետությունը ինչպես 1890-ական թթ.,
այնպես էլ Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին
իր ցանկացել է «գրավել Արևմտյան Հայաստանը առանց Հայե-
րի»: Գտնություն կեղծարարների այդ թեզը, որ ժամանակին
լայն տարածում գտավ թե՛ Կովկասում, թե՛ Եվրոպայում, ճիշտ
չէ: Չի կարելի առանձին հետադեմ, սեհարյուրակալին չի նովնիկ-
ների Հայացքները նույնացնել ուսական պետության քաղաքա-
կանության հետ, ինչպես փորձել են կատարել քաղաքական նպա-
տակներ հետապնդող շատ հրապարակախոսներ:

Հայերի 1915–16 թթ. ցեղասպանության մասին հարուստ,
կարևոր նյութեր են պարունակում իր ժամանակի նաև ուսական
պարբերական մամուլը, ինչպես և Մոսկվայում, Ս. Պետերբուր-
գում, Քիֆիլիում, Օդեսայում ու այլ քաղաքներում լույս տես-
նող ուսականի բազմաթիվ ուսուպեղծ թերթեր և հանդեսնե-
րը: Վերջիններս հրատարակվում էին Ռուսաստանում գործող
Հայ Հասարակական-քաղաքական ու բարեգործական կազմակեր-
պությունների կողմից:

Հարկ է նշել, որ Համեմատաբար քիչ են օգտագործված
նաև Հայաստանի արխիվներում ու գրադարաններում պահվող
փաստաթղթերը, որոնցում կան կարևոր տեղեկություններ Հայ-
կական կոտորածների, երիտթուրքերի անտրինակ գաղափարա-
կանների, Հայ կամավորական շարժման, Հայության քաղաքական
կողմնորոշման և այլ հարցերի մասին: Այդ նյութերը կասկած չեն
թողնում մասնավորապես այն մասին, որ Հակառակ թուրք պատ-
մաբանների պնդումների, արևմտահայերը կազմակերպել են ոչ
թե՛ «գաղազրական ապստամբություններ», այլ ստեղծված են եղել
զինվու ի ն ք ն ա պ շ ա պ ն ա կ ա ն մ ա ր տ ե ր ի, որոնցից
մի մասը ավարտվեց Հաղթանակով: Փաստերը խոսում են նաև

¹⁰ В. В. Г о т л и б, Тайная дипломатия во время Первой мировой войны. М., 1960. *ան՝ անգլերենը՝* W. W. G u t l i e b, Studies in Secret Dip-
lomacy during the First World War. London, 1957.

այն մասին, որ ռուսական բանակի կազմում կոչող Հայ կամավորական ջոկատները զգալի դեր են խաղացել արևմտահայ խաղաղ բնակչության փրկության գործում: Այս Հարցերի վերաբերյալ Հարուստ նյութեր են կենտրոնացված Հանրապետության պետական արխիվներում ու Մենարտ Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող էջմիածնի կաթողիկոսության զիվանում:

Զորքող մի շարք պատմաբաններ ու հրապարակախոսներ այն կարծիքն են հայտնել, որ անցյալ դարի 90-ական թթ. Աբգուլ Համիդ II սուլթանի կողմից իրականացված հայկական կոտորածները չպետք է Համարել ցեղասպանություն, այլ պատժողական նպատակներ Հետապնդող Ջարդեր ու հալածանքներ, որոնք ձեռնարկվել են ի պատասխան Հայկական Հեղափոխական կոմիտեի գործունեության: Այս տեսակետն արտահայտողները կամ թե ակամա տուրք են տվել պատմության կեղծարարներին: Պատմական փաստերի բարեխիղճ ու մանրազնին ուսումնասիրությունը բերում է այն եզրակացություն, որ զուգանաբար «կարմիր սուլթանը» նույնպես կիրառել է ցեղասպանության քաղաքականություն, այնպիսի քաղաքականություն, ինչպիսին իրազորածեցին երկտխուրքեր 1915–16 թթ.: Այստեղ կարևորը զուհերի քանակը չէ. մի դեպքում 300 հազար, մյուս դեպքում միլիոնուկան: Մենք դեռևս, որ ինչում են ինչպես մեծ, այնպես էլ փոքր մեծալի ցեղասպանություններ:

Ընկերորդ. Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված շատ աշխատություններում բավարար չափով բացահայտված չէ թուրքական սուլթանների ու փաշաների թալաններ, դատան ճնշումների ու ջարդերի այն քաղաքականությունը, որ կիրառվում էր ոչ թուրք ժողովուրդների, հատկապես քրիստոնյաների նկատմամբ: Եստ Հեղինակների վրա ըստ երևույթին ազդել է թուրք պատմաբանների այն քարոզչությունը, ըստ որի Հայերն իբր մինչև XIX դարի երկրորդ կեսը ունեցել են ապահով կյանք ու լայն իրավունքներ, որ իբր Բ. Դուռը դիմել է ճնշումներին միայն այն ժամանակ, երբ «ոչ երախտապարտ» Հայերը սկսել են խռովություն ու ապստամբություններ օսմանյան պետության

դեմ: Կարծում եմ պետք է վճռականորեն Հերքվի այս շինքուև արտառոց Հերքաթը, պետք է հրապարակել բոլոր աղբյուրներն ու ճշգրիտ վկայություններն այն մասին, որ Հայերը Օսմանյան կայսրության մեջ ապրել են ստրկական ու ճորտական վիճակում, որ նրանք մշտապես ենթարկվել են ջարդերի, բարբարոսական ճնշումների և անտանելի կեղեքումների: Բերենք մի քանի վկայություն:

Յարանիացի Հայտնի արևելագետ ու զիվանագետ Ա. Ժոբերը 1805 թ. Արևմտյան Հայաստանի մասին գրել է. «Այս երկրում Հողագործը իդուր է սերկից ցանում: Լուսնը խլում են դեռ չհասունացած: Ավազակների կատաղությունից և նահանգում իշխող փաշաների հարստահարությունից ազատվելու համար գյուղացին ստիպված է լքել դաշտերը, փախչել ընտանիքով և իր հոտերով: Այս դժբախտ երկրում գոյություն չունի ո՛չ Հայրենիք, ո՛չ ապահովություն, ո՛չ հանգիստ»¹¹:

Ռուս գեներալ Մ. Լիխուտինը, որի զորամասերը 1854 թ. գրավեցին Արևմտյան Հայաստանի Անդրկովկասի սահմանակից գավառները, տարիներ Հետո գրած իր Հուշերում խոսելով արևմտահայ գյուղացիների ծանր վիճակի մասին, նշել է. «Հայերի, ինչպես և մյուս քրիստոնյաների դրությունը Թուրքիայում անտանելի է... Ես տեսա մի քանի Հայեր կարգված ականջներով ու քթերով, մի քան, որ արված էր ոչ թե կատարանով, այլ կամայականությունամբ ու բռնությամբ՝ այս կամ այն ազդեցիկ և հարուստ գյուղապետի կամ տեղական դատարանի անզստի կողմից: Հայերը մշտապես գանձվում էին տազնապի մեջ, ունեին ահաբեկվածի տեսք»¹²:

Մեր ականավոր ազգային գործիչ, ազգագրագետ Գարեգին Սրվանձալյանը Մուշ գավառում տիրող վիճակը 1864 թ. պատկերել է հետևյալ ձևով. «Փնդակներու հարձակում, արյան

¹¹ Ը ո Վ Հ և կ ո բ յ ա ն Ուղեգրություններ, Հատոր Զ, ԺԹ դարի ստանդերն քանակակ: Հրատարակություն Միչքոնյան Փնդի, Երևան, 1934, էջ 150:

¹² М. А. И у т и н. Русские в Азиатской Турция в 1854—1855 годах. СПб, 1863, с. 168.

Հոսում, ընչից ավար, ընտանյաց բռնաբարություն, եկեղեցոց կոզոպություն, օրինաց եղծում, կենաց զբաղում...»¹³:

1876 թ. արևմտահայերի մի մեծ խումբ, գիմելով Էջմիածնի կաթողիկոս Գևորգ Դ-ին, գրում էր. «Ջօր ու գիշեր տաղանայի մեջ ենք գառնորեն տառապում ենք զավտուական պաշտոնյաների, Հարկահանների, կառավարիչների և այլ բռնակալների ձեռքին, ընդհուպ մինչև այն, որ նրանք անպատվում են մեր եկեղեցական Հովիվին, մեր կանանց Համեստությունը, մեր աղջիկների պատիվը, Հեղում են մեր երիտասարդների և ծերերի սրտունը, անարգում են մեր տաճարի ու ձեռքերի սրբությունը»¹⁴:

Եվրոպայում գործող Հայ Հայրենասերների կոմիտեն, 1885 թ. գիմելով մեծ տերություններին, նշում էր այն Հանգամանքը, որ Բ. Դուան կողմից նախօրոք մշակված ծրագրի Համաձայն Արևմտյան Հայաստանում «գոհվում են մարդիկ, ավերվում են տնտեսություններ, կենսազործվում է ժողովրդի բնաջնջման քաղաքականություն: Բեռլինի վեհաժողովի 61-րդ Հոդվածի ընդունումից Հետո թուրքական կառավարությունը իր բոլոր ջանքերը գաղտնի ուղղում է Հայ ազգը իր Հայրենիքում ոչնչացնելու նպատակին»¹⁵:

Իսլանդացի ճանաչված արևելագետ Էմիլ Դիլլոնը, խոսելով արևմտահայերի ծանր վիճակի մասին, նշել է, որ Արևմտյան Հայաստանում Հաստատված է կառավարման գաղափարային այնպիսի սխտեմ, որի Հետ Համեմատած Ամերիկայի Միացյալ Նահանգների Հարավային շրջաններում մի ժամանակ գոյություն ունեցող ստրկական կարգերի «գաժանությունները միայն անն-

շան չարաշահություններ են»¹⁶: Նույն Դիլլոնը մի այլ կապակցությամբ գրել է. «Օտարերկրացի նշանավոր մի պետական գործիչ, որը սովորաբար Համարվում է Համոզված թուրքասեր, վերջերս ինձ Հետ ունեցած ժամանավոր խոսակցության ժամանակ նկատեց, որ թուրքական տիրապետությունը Հայաստանում կարելի է ճիշտ բնորոշել որպես կազմակերպված ավաակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն»¹⁷:

Այս կարգի վկայությունները, որոնց թիվը շատ մեծ է, Իհարկե, անհերքելի են: Ուստի զժվար չէ Հասկանալ, որ խիստ ծանր, օրհասական պայմաններում գտնվող ժողովուրդը պետք է ուտքի կանգներ, պայքարեր իր կյանքը, պատիվը, գոյությունը պահպանելու համար: Այդ նրա բարոյական իրավունքն էր ու սրբազան պարտքը: Բայց զարմանալիս այն է, որ մի շարք պատմաբաններ, փոխանակ նշելու Հայ ազատագրական պայքարի ներքին սոցիալ-տնտեսական ու քաղաքական լուրջ պատճառները, գրել են, որ այդ շարժումը զրսի ուժերի, մասնավորապես, ռուսահայ մտավորականների կողմից արհեստականորեն Հրահրված գործ էր: Նման տեսակետ արտահայտել է, օրինակ, մեր ըազմավատական պատմաբան, պրոֆեսոր Լեոն իր այն աշխատություններում, որոնք նա ստեղծեց խորհրդային շրջանում՝ 1920-ական թթ.: Ռուս Հայտնի պատմաբան Միխայիլ Գուկոսկու վուլգար-սոցիոլոգիական զոգոմաների ազդեցության տակ: Ուստի նշված տարիներին Լեոնի գրած մի շարք աշխատությունների նկատմամբ պետք է Հանդես բերել քննադատական մոտեցում: Մի ուրիշ Հեղինակ՝ Բազումա Բոդյանը, զնկավարվելով նույն վուլգար զոգոմաներով ու քաղաքական այլևայլ նկատառումներով, այնքան Հեռու գնաց, որ Հակառակ պատմական

¹³ Մ. Գ. Ն եր ա յ ա ն. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երևան, 1955, էջ 70. Ս Հրատ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002, էջ 63:

¹⁴ Մարտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, փ. 2:

¹⁵ АВГРИ, Посольство в Константинополе, А. 3133, А. 27 - 28.

¹⁶ E. J. D i l l o n. The Condition of Armenia (The Contemporary Review, N. Y., London, August, 1895).

¹⁷ Նույն տեղում: Տե՛ս նաև՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ. Երևան, «Հայաստան» Հրատ., 1991, էջ 87:

փաստերին, նորից կրկնեց այն արտառոց տեսակետը, թե Օսմանյան կայսրության լծի տակ գտնվող Հայ բնակչությունը եղել է ապահով ու բարեկեցիկ վիճակում¹⁸: Բորյանը և նրա հետևորդները փաստորեն կրկնել են պատմության բացահայտ կեղծարարներին:

Վեցերորդ. Մի շարք աշխատություններում արտահայտված է այն կարծիքը, թե հայերի ցեղասպանության հարցում բոլոր մեծ պետությունները ցուցաբերել են անտարբերություն և ոչինչ չեն ձեռնարկել դադարեցնելու երիտթուրքերի ոճրագործությունները: Այս տեսակետը, որ իշխում է նաև մամուլում տպագրված հրապարակախոսական հոդվածներում, թերի է և չի բացահայտում ամբողջ ճշմարտությունը: Բանն այն է, որ մեզ այստեղ հետաքրքրող հարցերում տարբեր պետություններ վարել են տարբեր քաղաքականություն:

Հանրահայտ է, որ կայգերական Գերմանիան՝ Թուրքիայի ռազմական դաշնակիցը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ամեն կերպ հովանավորել ու պաշտպանել է թուրք ռասիստներին: Ավելին. գերմանական զինվորականությունը մասնակցություն է ունեցել արևմտահայերի դեպորտացիայի (բռնի տեղահանություն) ու զանգվածային կոտորածների ծրագրերը մշակելու և իրականացնելու գործում: Այլ քաղաքականություն են վարել Անգլիան ու Յրանսիան, որոնք պատերազմում էին Թուրքիայի ու Գերմանիայի դեմ և այդ տարիներին չունեին հակահայկական ծրագրեր: Ամերիկայի Միացյալ Նահանգները, որ 1914–1916 թթ. չէին մասնակցում պատերազմին, կարող էին որոշ ճնշում գործ դնել երիտթուրքերի վրա, բայց ամերիկյան կառավարությունը, չցանկանալով իր հարաբերությունները սրել Թուրքիայի ու Գերմանիայի հետ, իսկապես բռնեց անտարբեր դիրք, չնայած նրան, որ ամերիկյան առաջավոր, մարդասեր շատ գործիչներ ու այլևայլ հասարակական կազմակերպություններ ի-

րենց բողոքի ձայնը բարձրացրին թուրքական վայրագությունների դեմ: Հիշենք թեկուզ Հենրի Մորգենթաուի ազնիվ և համարձակ ելույթները թուրք բարբարոսների դեմ:

Ինչպիսի՞ն էր ցարական Ռուսաստանի դիրքորոշումը: Ցարական կառավարությունը, իհարկե, բռնապետություն էր, վարում էր սոցիալական ու ազգային ճնշման քաղաքականություն, մերժում էր հայկական պետականություն ստեղծելու գաղափարները, նա էր, որ փակեց հայկական դպրոցների մեծ մասը, XX դարի սկզբին բռնազրավեց Հայոց եկեղեցու գույքն ու կալվածքները և այլն, և այլն: Դրանք հայտնի փաստեր են: Սակայն, չնայած այդ բոլորին, Ռուսաստանը, ելնելով իր արտաքին քաղաքականության շահերից, հավատարիմ հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների դարավոր ավանդույթներին, 1915–1917 թթ., ինչպես նաև նախորդ ավելի քան երկուհարյուր տարիների ժամանակաշրջանում, աշխատել է ապահովել, պահպանել հայության ֆիզիկական գոյությունը, հանդես է եկել թուրք ազգայնականների հայաջինջ քաղաքականության դեմ, փորձել է խաթարել պանթուրքիստների ծրագրերը: Հայկական հարցում համընկել են Ռուսաստանի և հայ ժողովրդի շահերը:

Մենք արդեն նկատեցինք, որ մի շարք հեղինակներ, անտեսելով փաստերը փորձում են հիմնավորել այն կարծիքը, որ իբր ինչպես 1890-ական թթ., այնպես էլ 1915–16 թթ. Ռուսաստանը ցանկացել է գրավել Արևմտյան Հայաստանը և այն հայաթափ անել: Որոշ հեղինակներ պնդում են, որ ռուսական բանակի 1915 թ. ամռան նահանջը, օրինակ, հետապնդել է մի նպատակ՝ հնարավորություն տալ թուրքական զորքերին կազմակերպել արևմտահայ բնակչության նոր կոտորած: Համառ ռուսաֆորներին այս և այլ «փաստարկները» իհարկե չեն համապատասխանում իրականությանը: Տարիներ առաջ դա հաջողություն մը ցույց են տվել Հայաստանի Արխիվների վարչություն պետ, պատմական գիտությունների դոկտոր, գնդապետ Աշոտ Հարությունյանը և այլ հեղինակ-

¹⁸ Б. Б о р ь я н. Армения, международная дипломатия и СССР. Ч. 1, М. — Л., Госиздат, 1928.

ներ¹⁹: Հարկ է այստեղ մեկ անգամ ևս ընդգծել այն Հանգամանքը, որ չի կարելի զինվորական առանձին գործիչների տրամադրությունները և ցանկությունները նույնացնել Ռուսաստանի պետական քաղաքականության հետ:

Ռուսաստաց, թուրքոֆիլ ու արևմտյան կողմնորոշում ունեցող հեղինակները զարմանալիորեն անտեսում, «մոռանում են» փաստերը: Սակայն ռեժիմը հայտնի չէ, օրինակ, որ 1915 թ. մայիսի սկզբին ռուսական զորքերը փրկեցին Վանում պաշարված Հայությանը անխուսափելի կոտորածից: Ինչո՞ւ չհիշել այն փաստը, որ միայն 1916 թ. ռուսական կառավարությունը արևմտահայ գաղթականությանը օգնելու համար տրամադրել է 250 միլիոն ռուբլի (սովորդ): Հայ գաղթականությանը ո՞վ պատսպարեց Հյուսիսային Կովկասում, սեռնախնայ քաղաքներում ու Ռուսաստանի այլ վայրերում: Մի՞թե Հայտնի չէ, որ Կովկասյան ճակատում քաջարար կռիվող ռուս զինվորներն ու կազակները փրկեցին Հաղարամյոր Հայ որդիներին: Ի դեպ, այդ մասին շատ կարևոր էջույթներ են տպագրվել «Արմյանակի վեստնիկ», «Արմյանե ի վայնա» և այլ պարբերականներում: Բայց սահմանափակվենք այսբանով:

Ի վերջո, Հարկ է կանգ առնել նաև մի այլ Հարցի վրա: Հայտնի է, որ մեր պատմագրությունը միշտ էլ բավական լրջութամբ իր քննադատական խոսքն է անել պատմության թուրք և օտարերկրյա կեղծարարների մասին: Բայց անհասկանալի պատճառներով լուրջություն է պահպանվում այն հայ հեղինակների նկատմամբ, որոնք նույնպես աղավաղում են մեր ժողովրդի նոր պատմության շատ կարևոր էջերը: Ահա մի օրինակ:

Երկու տարի առաջ, 1993 թ. Վենետիկում լույս տեսավ «Նյույթեր Հայ ժամանակակից քաղաքական պատմության» խ-

¹⁹ А. О. А р у т ю н я н. Кавказский фронт. 1914—1917. Ереван, ИЗД. «Абастан», 1971. Մ. Ն է ր = ք = յ = ն. Հարցուսական քաղաքական Հարաբերությունների պատմության մի քանի Հարցերի շուրջը (Պատմաքաղաքագրական Հանգան, 1994, №1—2):

բազիրը կրող մի աշխատություն²⁰, որը Հրատարակության է պատրաստել Հ. Տաճատ վրդ. Եարտըմյանը: Հավաքելով ու կարգի բերելով վրդ. Սահակ Տեր Մոզեսյանի (1878—1956) մեր զարի սկզբին (1912—1915 թթ.) կատարած զրառումները, վարդապետ Եարտըմյանին Հաջողվել է լույս աշխարհ բերել մի գիրք, որի մասին նա գրում է. «Մեր Համեստ կարծիքով, Հանրության մասունցած այս Հրատարակությունը, վերջուժումներն ու տեսություններն թեթև ամենին հանդուգն ու շահեկան ուսումնասիրությունն է, որ ցարդ Հրապարակ ելած ըլլա, մեր ազգային նորագույն պատմության ամենին զժախտ ժամանակաշրջանին նվիրված» (տե՛ս «Առաջարանը», էջ 6):

Աշխատության մեջ, իհարկե, կան իրատես զատողություններ և քննադատական ճիշտ դիտողություններ: Բայց, զժախտաբար, մեր ժողովրդի պատմության շատ կարևոր զրվագների մասին այդ գրքում թույլ են տրված մի շարք կուպտ սխալներ ու արատոց մաքեր: Այնտեղ, օրինակ, փաստորեն զարագցվում է այն տեսակետը, որ Մեծ Եղեռնի մեղքը ընկնում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքի և արևմտյան ռուսասեր մտավորականության վրա: Քարոզ է կարգացվում այն մասին, որ արևմտահայերը պետք է ընդունեն իրիտիոսիքի առաջարկները և Հրամարվին ռուսական կողմնորոշումից: Եթե այդ կատարվեր, այս իրիտիոսիքերը կերականացնեին նախատեսված բարենորոգումները Արևմտյան Հայաստանում, և զրանով իսկ կկանխվեր ցեղասպանությունը: Անտեսելով պատմական փաստերը՝ մեր Հարգելի վարդապետները, ոգևորված իրենց «վերջուժումներով», փորձում են Համոզել ընթերցողին, թե ցարական կառավարությունը եղել է արևմտահայության թշնամին, որ նա է ինչպես 1890-ական թթ. կոտորածների, այնպես էլ Մեծ Եղեռնի զլխավոր մեղավորը: Ավելորդ Համարելով կանգ առնել մյուս անհիմն կարծիքների վրա՝

²⁰ Տե՛ս Հ. Սահակ վրդ. Տեր Մոզեսյանի և Նյույթեր Հայ ժամանակակից քաղաքական պատմության (1912—1915). Պատմաքաղաքագրական վերլուծումներ. Վենետիկ, Սր. Հաղար. 1993, 347 էջ:

նշենք, սակայն, որ գրքում կան նաև Հակասական պնդումներ ու փաստական սխալներ:

Հնարքերը է նկատել, որ Մեծ Եղեռնի պատմությունն աղավաղող նման կարծիքներ վերջին տարիներին արտահայտեցին նաև այլ Հայ հեղինակներ: Այսպես, Հայաստանի պարբերական մամուլի մի շարք օրգաններում տպագրվեցին հոդվածներ, որոնցում փորձեր արվեցին տարածել Հակառուսական, ըստ էության թուրքոֆիլական գաղափարներ: Այդ պրոպագանդան, սակայն, ինչպես որ պետք էր սպասել, հաջողություն չուներ, մեր Հասարակության լայն շրջանները մերժեցին այն:

Հարց է ծագում: Ինչ՞ով բացատրել Հայ մարզկանց վերը նշված կոպիտ սխալները: Գլխավոր պատճառը, իմ կարծիքով, այն է, որ պատմության հարցերի մասին գրող այդ հեղինակները ոչ թե մասնագետներ, պրոֆեսիոնալներ են, այլ պատմագիտություն մարզում պարզապես գիշտանտներ, սիրողներ: Գիտական խորը ուսումնասիրությունների փոխարեն նրանք լույս աշխարհ են հանում մտերեսային, ակադեմիական գիտության հետ առնչություն չունեցող աշխատություններ: Զարմանալին հատկապես այն է, որ նրանք անտեսում են մեր իմաստուն նախնիների՝ Հովսեփ Էմինի, Շահամիր Շահամիրյանի, Հովսեփ Արղուիթյանի, Ներսես Աշտարակեցու, Խաչատուր Աբովյանի, Ստեփաննոս Նազարյանի, Գրիգոր Արժրուեսու, Բաֆֆու, Կոմիտասի, Հովհաննես Թումանյանի, զորավար Անդրանիկի, Ավետիք Իսահակյանի, Վրլյամ Մարտյանի և ուրիշ ականավոր գործիչների վկայություններն ու պատգամները, անտեսում են պատմության դասերը:

Այսպիսի պարագաներում մասնագետները պետք է վճարեն հատապարտեն նաև Հարցին անտեղյակ Հայ հեղինակներին: Կարծում եմ, նրանք քաջություն կունենան ընդունելու իրենց սխալները: Այդպիսի դեպքեր եղել են անցյալում: Հիշենք զրանցից միայն մեկը: Հայ նշանավոր քաղաքական գործիչ Արմեն Գարոն Հայերի քաղաքական կողմնորոշման մասին XIX դարի վերջերին և XX դարի սկզբին ուներ այլ տեսակետ: Բայց պատմական իրադարձությունների ազդեցության տակ նա իր

կյանքի վերջին տարիներին եկավ ուրիշ եզրակացություն. 1921 թ. դեկտեմբերին գանվելով Վաշինգտոնում Ա. Գարոն Բուստոնում լույս տեսող «Հայրենիք» թերթի խմբագրին հղեց մի նամակ, ուր կան այսպիսի տողեր. «Առանց ռուսական active աջակցության մենք հնարավորություն չենք ունենար գոնե կիսով չափ իրականացնել մեր ազգային իդեալը՝ ունենալու սեփական Հայրենիք մը՝ անկախ կամ թնկյալ կիսանկախ, ուր մեր ժողովուրդը հնարավորություն ունենա յուր Հայալ աշխատանքով ապրելու հետև թրքական սուրեն և հուրեն... Միայն Խուսափում են է, որ կարող է մանդատոր լինել: Ուրիշ ոչ ոք չի գնալու Հայաստանի սարերու վրա յուր զինվորները սացնելու: Այս վերջին կետը խնդրեմ ամուր մը խոթեն մեր բյուզանդական և եղիպտական Հոստաներու գլխին մեջ»²¹:

Նշանավոր Հայրենասերի այս եզրակացությունը անհերքելի է: Նրա վերը բերած իրատես մտքերը ճշմարիտ և խիստ այժմեական են նաև մեր օրերի համար:

²¹ «Հայրենիք» տարիվրք, Բոստոն, 1946:

Բ.

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ «ԲԱՂԱԲԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՍԻՎՅՈՒՄ» ՄԱՍԻՆ

Պատմության թուրք կեղծարարները մեծ ճիգեր են գործադրում, որպեսզի Հիմնադրոսն իրենց իսկ կողմից ստեղծված առասպելն այն մասին, թե օսմանյան պետությունը եղել է աշխարհի զարգացած և առաջագնծ պետություններից մեկը, որ թուրք սուլթանները քաղաքակրթություն են սերմանել և տարածել Ասիայի, Եվրոպայի շատ երկրներում, ազատություն, օրինակաչություն են պարգևել բազմաթիվ ժողովուրդների, կարգ ու կանոն են Հաստատել նրանց երկրներում և այլն, և այլն: Այս արտատոնց «սեսուլթյան» տարածողների զերում Հանդես են եկել Տանաչված պատմաբաններ Աֆետ Ինանը, Մեհմեդ Քյոթրեյուլյուն, Իսմայիլ Ուզունչարչիին, Օմեր Բարկանը և ուրիշներ: Ի. Ուզունչարչիին, օրինակ, սուլթանական թուրքիայի պատմությանը նվիրված իր չորսհատորանոց աշխատության մեջ այն տեսակետն է Հայտնում, որ օսմանյաների նվաճումներն առաջադիմական նշանակություն ունեցան, որ թուրքական իշխանությունները իրենց տիրապետության տակ գտնվող ժողովուրդների նկատմամբ վարել են արդար ու միանգամայն բարյացակամ քաղաքականություն: Հեղինակը իրատեսակն կրկնում է թուրք պաշտոնական պատմագրության այն տեսակետը, թե Օսմանյան պետությունը, զբաղվելով շատ երկրներ, կատարեց քաղաքակրթական միսիա¹: Թուրքպիրություն մեջ ոչ քիչ Հեղինակություն ունեցող Օ. Բարկանը ևս ամեն կերպ փորձում է Համոզել ընթերցողին, որ օսմանյան թուրքիայում իրը եղել են իդեալական կարգեր՝ Հասարակական տարբեր շերտերի Հիանալի Համագործակցություն, ա-

զատություն ու արդարություն, որ սուլթանական պետությունը նոր, առաջավոր զաղափարներ է տարածել «Հետամնաց» եվրոպական երկրներում և այլն: Ավելին. Թուրքական պատմագրական ընկերության 1943 թ. կայացած նիստում շատ պատմաբաններ այն կարծիքն են Հայտնել, թե իրը «թուրքերն են վառել Համաշխարհային մշակույթի ստալին ջահերը»²: Նույն մտքերն այս կամ այլ ձևով արտահայտել են ռասիստ և պանթուրքիստ բազմաթիվ բարձրատիճան պաշտոնյաներ, զինվորականներ, ազգայնամոլ Հրապարակախոսներ:

Կարևոր է նշել այն Հանդամանքը, որ պատմությունն ազգավարողներին Հովանավորել են իշխանությունները: Գաղանիք էլ, որ Թուրքիայի կառավարության անմիջական նախաձեռնությամբ ու ֆինանսական օգնությամբ 1930-ական թթ. լույս տեսավ չորս հատորից բաղկացած "Tarih"-ը՝ «Պատմությունը», որի զլխավոր նպատակն է եղել զովբեղել, իդեալականացնել օսմանյան պետությունը, ամեն կերպ արդարացնել սուլթանների կողմից Հրի ու սրի միջոցով կատարված նվաճումներն ու անօրինակ բարբարոսությունները և այդպիսով, կամակատար զբաղների օգնությամբ, նորից կյանքի կոչել թուրքական նացիոնալիզմը, շոփինիզմը:

Պատմությունը ազգավարողների նշված քարոզները, սակայն, զանազան նկատառումներով կրկնել են նաև արևմտյան երկրների մի շարք արևելագետ պատմաբաններ: Վերջիններիս մասին պատմաբան Բ. Տ. Գորյախովը իրավացիորեն գրել է, որ նրանք ևս փորձում են թուրք սուլթաններին և զրանց թվում նաև բյուզանդական պետությունը կործանող արյունարար Մեհ-

² Ö. İ. Barkan. XV ve XVI asırlarında Osmanlı İmparatorluğunda hukukî ve mali esaslar. C. I. Kanunlar, İstanbul, 1945.

³ Մ ա ն վ ի լ Ջ ու լ յ ա ն. Հայոց պատմության խզաթյուրումը արդի թուրք պատմագրության մեջ. Երևան, 1995, էջ 8:

¹ I. H. Uzunçarşılı. Osmanlı tarihi. Cilt I-IV, Ankara, 1947-1959.

մեղ (Մուհամմեդ) II (1451-1481) պատերեկի որպես պրոպագանդի գործիչներ⁴:

Պատմության այդ կեղծարարների մասին, ինչպես Հայտնի է, գոյություն ունի հարուստ գրականություն, սակայն մեզ այսօրվա հետաքրքրող խնդրին՝ օսմանյան պետության «բաղաբակր-թական միսիայի» «սեսուսթյանը» հարկ եղած ուշադրություն չի դարձվել: Ուստի անհրաժեշտ է հատուկ քննարկման առարկա դարձնել այդ հարցը, քանի որ իրականում հիշյալ պետությունն իր ամբողջ գոյության ընթացքում աչքի է ընկել անօրինակ բարբարոսություններով, դարեր շարունակ արգելակել է իրեն հպատակ երկրների տնտեսության, մշակույթի զարգացումը և դաման Հայաստանի, կեղեքումների ու կոտորածների է ենթարկել բազմաթիվ ժողովուրդների և ազգությունների:

I

Թուրք-օսմանյան պետությունը, որ կազմավորվեց XIV դարի սկզբներին Փոքր Ասիայի Հյուսիսարևմտյան տարածքում, Հնեց սկզբի ևեթ ծավալեց խիստ ագրեսիվ, նվաճողական քաղաքականություն Հարևան երկրների նկատմամբ: Իշխանության գլուխ անցած սուլթանները և ավատական վերնախափի ներկայացուցիչները իրենց նյութական ապահովության ու հարստացման հիմնական աղբյուրը դարձրին թալանչիական արշավանքները, պատերազմները, նվաճված երկրների կողոպուտը, մեծ մասշտաբներով կատարվող գերեզմարությունը, ուղղափառազանքի ու ծանր հարկերի բռնագանձումը և այլն:

⁴ Б. Т. Гор я н о в. Фальсификации истории турецкого завоевания и военно-феодалного строя Османской Турции в трудах Запада и США (տե՛ս ՀԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1957, N10): Թուրքոֆիլական տեսակետներ են Հայտնի մեծ մասամբ XVI-XVII գ. ֆրանսիացի հեղինակները, բայց որ այդ դարերում առկա էին դաշնակցային կապեր Թրանսիայի և օսմանյան պետության միջև: Եման Հայացքներ է արտահայտել նաև սուլթանական արքայների Հնա սերտ կապեր ունեցող, ծագումով պոլսահայ Իզմետինս Մուրադեան Դ Օտտոնը (տե՛ս նրա բազմաՀատորյալը՝ M. d'O h s s o n. Tableau général de l'Empire Ottoman. Vol. I-VII. Paris. 1785-1824).

Օսմանյան բռնապետության էություն, ինքնատիպության ու բնորոշ Հատկանիշների կամ, այլ կերպ ասած, նրա կողմից կատարված անօրինակ շարագործությունների մասին գրել են անցյալ դարի այնպիսի նշանավոր գիտնականներ, գրողներ ու Հասարակական-քաղաքական գործիչներ, ինչպիսիք են՝ գերմանացիներ Հեգելը, Կարլ Մարքսը, ռուսներ Ն. Գ. Ջերնիևսկին, Լ. Ա. Կամարովսկին, Ս. Գլինկան, անգլիացի Վ. Գլադստոնը, իտալացի էմիլ Դիլյոնը, ֆրանսիացիներ Վիկտոր Հյուգոն, Անատոլ Ծրանսը, թիվրիացի Մ. Գ. Խոյնե-ժեկմենը, ամերիկացիներ Զր. Գրինը, Ե. Մ. Բլիսը և ուրիշներ: Մանթանանք նրանցից մի քանիսի կարծիքներին:

Խոսելով XIII դարում բուլղար օսմանցիների կողմից Կարահիսարում Հիմնած իշխանության մասին, իշխանություն, որը Հնասալյում գարձավ օսմանցիների պետության հիմքը և հիմնական բաղկացուցիչ մասը, Կարլ Մարքս այն բնութագրել է որպես «ավազակային»: Մերձավոր Արևելքում 1230-ական թթ. կատարված մի շարք քաղաքական անցքերի կապակցությամբ Մարքսը նշել է. «Գրեթե այդ նույն ժամանակ թուրք օսմանցիների հորդան ներխուժում է Փոքր Ասիա, ուր նրանք ամենից առաջ հիմնում են Կարահիսարի ավազակային պետությունը»⁵: Մի այլ կապակցությամբ Մարքսը թուրքական իշխանության հիմնադիր Օսմանի գիեղորենիլին ուղղակի անվանում է «ավազակներ»⁶:

Մարքսը գրել է նաև այն բարբարոսությունների մասին, որ կատարեցին թուրք սուլթանները Հաջորդ դարերում: Այսպես, օրինակ, նա նշում է 1430 թ. Թոպուրիկի և 1453 թ. Գ. Պոլսի գրավման ժամանակ տեղի ունեցած գազանությունները⁷: Հիշատակելով օսմանյան զորքերի կողմից 1458 թ. Պելլոպոնեսում կա-

⁵ Архив К. Маркса и Ф. Энгельса. Т. V, с. 223.

⁶ Տե՛ս նույն տեղում, Հ. VI, էջ 170:

⁷ Գ. Պոլսի գրավման և այնտեղ կատարված կողոպուտների ու բարբարոսությունների մասին լույս են տեսել բազմաթիվ վկայություններ և ուսումնասիրություններ: Դրանցից է, օրինակ՝ G. S c h l u m b e r g e r. Le siege, la prise et la sac de Constantinople par les turks en 1453. Paris, 1914.

տարված վայրագությունները՝ նա գրել է, որ թուրքերը այնտեղ «կազմակերպեցին շարժեր, անմարդարնակ դարձրին երկիրը, դերի տարան բնակիչներին»։ Ընդհանրացնելով իր խոսքը՝ Մարքան այնուհետև նկատում է. թուրքերը «Հրի ու սրի էին մատնում քաղաքներն ու գյուղերը... կատարում էին վայրագություններ, ինչպես կանեիբալներ»⁵։ Գրավված երկրներում, գրել է նա, օսմանցիները հաստատում էին ռազմական ռեժիմ՝ Մարքսը անհրաժեշտ է համարել ընդգծել նաև այն փաստը, որ թուրք բարբարոսները վաղուց արդեն իրենց ցույց են տվել որպես ամեն մի պրոգրեսիվ նշանիներ⁶։ Ահա այն գեահատականը, որ տվել է գիտնականը «բաղադրակրթություն տարածող» պետությունը։

Մտավորապես նման տեսակետ է արտահայտել ռուս նշանավոր հրապարակախոս Ն. Գ. Չեռնիշևսկին։ Վճռականորեն մերժելով իր հայրենակից իդեալիստ ու հետադեմ հեղինակ Մ. Ստասուլևիչի այն կարծիքը, թե սուլթան Մուհամեդ II (Մեհմեդ II) եղել է խաղաղասեր, հուճարտաւ և չի ցանկացել գրավել Բյուզանդիայի մայրաքաղաք Կ. Պոլիսը, Չեռնիշևսկին գրել է. «Եվ մի՞թե կարելի է կարծել, որ Մուհամեդ II չի կամեցել նվաճել Բյուզանդիան, այլ այդ արել է Հարկադրված։ Դա ստնվազն տարօրինակ է։ Թուրքերը սարել են միայն զավթումներով, սահմանների ընդլայնումն է եղել նրանց միակ վստահակը... Բալկանյան թերակղզում ուղղափառներից (Հույներ, սերբեր) Հետդհետև խլելով մի շրջանը մյուսի Հետևից՝ թուրքերը մտածում էին ուղղակի այդ շրջանների զավթման, թալանի, Հարկերի և տիրակալելու մասին... Բնական է մտածել, ինչպես և առանց բացառության ապացուցում են թուրքական պատմություն XV-XVI դարերի բոլոր փաստերը, որ թուրքերը, նվաճումներ կատարելով, Հետպաղարծ էին Հենց ավար և զավթումներ»¹⁰։

Իր հոդվածում, որն ունի «Ն. Գ. Չեռնիշևսկին Կոստանդնուպոլիսը թուրքերի կողմից շրջապատելու և գրավելու մասին» խորագիրը, Ի. Ն. Բորոզդինը ճիշտ է նկատում, որ Չեռնիշևսկին մի շարք աշխատություններում հատկապես ընդգծում է այն չարքերը, որ Բալկանյան թերակղզու սլավոնական ժողովուրդների բերեց օսմանյան դաժան լուծը։ Նա խոսում է ստեղի զավթիչների կողմից ճնշվող ժողովրդի իրավագուրկ վիճակի, սանձազերծ ենթչերական հողատերերի կատարած գազանությունների մասին, որոնք վայրագորեն բնաջնջում են սլավոնական երկրների Հիմնական բնակիչներին։ Իր Հայտնի բնորոշումը տալով իրեն այնքան ստեղի «ասիականությունը», Ն. Գ. Չեռնիշևսկին նկատի ունի նախ և առաջ թուրքական բռնակառությունը։ «Ասիականություն է կոչվում,— ասում էր նա,— այնպիսի իրավիճակը, որի ժամանակ կամայականությունից պաշտպանված չեն ոչ անհատը, ոչ աշխատանքը, ոչ սեփականությունը։ Ասիական պետություններում որևէք միանգամայն անուժ է։ Այնտեղ բացառապես իշխում է բռնությունը»¹¹։

Գաղմբարան, հրապարակախոս Սերգեյ Գլինկան, Հենցվելով Հարուստ փաստերի վրա, գրել է, որ բոլոր գրաված երկրներում թուրք-օսմանները ստեղծում էին ոչ թե քաղաքական ու քաղաքացիական հաստատություններ, այլ «միայն ռազմական ճամբարներ։ Ամենուրեք, ուր փայտատակում էր նրանց սուրը, այնտեղ միշտ էլ Հնչում էր սարկություն շղթաների շառաչույնը»¹²։

Վիլյամ Գլադստոնը «Բուլղարական ստրագիաները և Արևելյան հարցը» իր Հայտնի աշխատության մեջ գրել է, թե օսմանցիները «ամենուր, որտեղ որ Հայտնվել են՝ իրենց Հետևի թողել են խորը արշուճոտ Հետք, և նրանց տիրակառության ողջ տարածքում վերացել է քաղաքակրթությունը։ Նրանք ամենուրեք հանդիսացել են ուժի միջոցով կառավարման ներկայացուցիչներ,

⁵ К. М а р к с. Хронологические записки. Т. VII, с. 202.

⁶ К. Маркс, Ф. Энгельс. Полное собрание сочинений. Т. IX, с. 395.

¹⁰ Н. Г. Чернышевский. Полное собрание сочинений, Т. II, М., 1949, с. 641.

¹¹ Византийский Временник. Т. VII, М., 1953, с. 92.

¹² С. Г л а и н к а. Картины исторические и политические. М., 1840, с. 108.

ի Հակոբոսութուն օրհներթ միջոցով կառավարման»¹³: Անգլիացի լիբերալ գործիչը արևմտահայերի 1894 թ. կոտորածների առիթով ունեցած իր ելույթներից մեկում ասել է: «Թուրքիայի պատմութունը տխուր և չար գործերով լի մի պատմութուն է»¹⁴:

Օսմանյան բռնապետության գազանությունների մասին բազմիցս գրել է Վիկտոր Հյուգոն: Նա ևս ընդգծել է այն ճշմարտությունը, որ այնտեղ, ուր հայտնվել են օսմանյան գորբերը, թողել են արյունոտ հետքեր, ավերակներ ու ամայություն¹⁵:

Օսմանյան պետության և նրա սուլթանների մասին Հետաքրքիր տեղեկություններ կան Ֆ. Շյոսերի «Համաշխարհային պատմություն» Հանրահայտ բազմաշառուրյակում, որը Հրապարակվեց XIX դարում: Երկու վիճակություն նրանից. 1430 թ., երբ սուլթանական բանակը զբաղեց Քեսայոնիկը, թուրքերը գերեզարեցին և ստրուկ դարձրին ավելի քան 7000 տարբեր Հասակի տղամարդկանց ու կանանց, թալանեցին բնակիչների ունեցվածքը, ավերեցին եկեղեցիներն ու վանքերը¹⁶: Կ. Պոլիսը զբաղող և թուրք պատմագրության մեջ փառաբանված սուլթան Մեհմեդի մասին ասված է, որ նա վարել է բազմաթիվ արյունոտ պատերազմներ, կործանել է շատ քաղաքներ, ամայացրել է ամբողջ երկրներ, կիրառել է դաժան ու տանջալից պատիժներ¹⁷: Ի դեպ, թուրքիայի պատմությունը նվիրված մի գրքում, որը Հրատարակվել է Բեռլինում 1788 թ., և Հաջորդ տարի լույս տեսել նաև Ռուսերեն Ս. Պետերբուրգում, գրված է, որ այդ վայրագ սուլթանի Հրամանով երկու Հրեա բժիշկների մաշկազերծ են արել միայն

նրա Համար, որ նրանք չեն կարողացել բուժել դաժան բռնապետի անբուժելի Հիվանդությունը¹⁸:

Մուհամեդ II-ի և նրա Հետնորդների դաժանությունների մասին գրել է նաև Ստեֆան Ցվայգը: Խոսելով այն մասին, թե այդ սուլթանն ինչպես կողոպտեց ու ավերեց Կ. Պոլիսը, նշանավոր գրողը նրան անվանում էր վայրենարար, նեղ, երկերեսանի ու ստախոս: Օսմանցիների կործանարար ռազմական Հզորությունը զարբեր շարունակ, նշել է Ցվայգը, արգելակել, խափանել է Եվրոպայի զարգացումը¹⁹:

Գերմանացի սոցիալ-դեմոկրատ, նշանավոր Հումանիստ-պացիֆիստ Հենրիխ Ֆիրրյուխսերը իր «Armenien 1915» աշխատության մեջ նշել է այն իրողությունը, որ Օսմանյան կայսրությունը ստեղծվել է բազմաթիվ ավերիչ արշավանքների, պատերազմների ու նվաճումների Հետևանքով և զոյատեւել է Հրի ու սրի շնորհիվ: Թուրք սուլթանները, սակայն, իրենց պետության մեջ ևս կատարել են անօրինակ բռնություններ ու բարբարոսություններ: Աշխարհի ոչ մի երկրում, ընդգծել է անվանի Հրապարակախոսը, բռնությունը չի եղել այնքան կործանարար և սուբը՝ այնքան սարսափելի, ինչպես թուրքիայում: Օսմանյան սուլթանների Համար սովորական երևույթ էր եղբայրասպանությունը և Հաճախ նաև ազգականների դավադրարար ոչնչացնելը: Բնորոշ է, որ 200 մեծ վեզիրներից 76-ը մահացել են ոչ բնական մահով, սուլթանների մեկ երրորդին ևս վիճակվել է նույն բախաբ²⁰:

Հայտնի է, որ XX դարում զգալի զարգացում ապրեցին արևելագիտությունը և նրա մաս կազմող թուրքագիտությունը:

¹³ Г л а д с т о н. Болгарские ужасы и Восточный вопрос. СПб, 1876, с. 6.

¹⁴ Լ և օ. Գլադստոն. Քիֆլիս, 1899, էջ 243:

¹⁵ В и к т о р Г ю г о. Собрание сочинений в 15 томах. Т. I, М., 1953, с. 393.

¹⁶ Ф. Ш л о с с е р. Всемирная история. Т. 9, СПб, 1861, с. 74.

¹⁷ Նույն տեղում, Հ. 12, էջ 76:

¹⁸ Барон Тог. Новейшие известия о Турецкой империи. СПб, 1789, с. 325.

¹⁹ С т е ф а н Ц в е й г. Собрание сочинений в семи томах. Т. 3, М., 1963, с. 31.

²⁰ Heinrich Vierbücher. Armenien 1915. Hamburg, Bergedorf, 1930.

Հանդես եկան բազմաթիվ գիտնականներ, որոնք հրապարակեցին արժեքավոր ուսումնասիրություններ օսմանյան պետության և կաշաբության մասին: Կարծում եմ՝ մեզ այստեղ հետաքրքրող հարցերի վերաբերյալ կարևոր է լսել նաև նրանց՝ պրոֆեսորնալ հեղինակների կարծիքները:

Անվանի թուրքագետ Ա. Ս. Տվերխովսկու, որ հրատարակել է թուրքիայի միջնադարյան պատմության մի շարք հարցերին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններ, ընդգծել է, որ օսմանցիների թալանչեական արշավանքներն ու պատերազմները եղել են նրանց մշտական և կարևորագույն «արհեստը»: Լայնորեն օգտագործելով թուրքական պաշտոնյաներ, գիտնականը գրել է. «Փալանք ու զանգվածային զերկարություններ թուրքական արշավանքների գլխավոր շարժառիթն էին: Ըստ սկզբնաղբյուրների ծանոթանալով թուրքերի կողմից Բալկանյան թերակղզու երկրների նվաճման պատմությանը մենք գտնում ենք սարսափելի պատկեր: Արշավանքները, Սերբիայի, Բուլղարիայի յուրաքանչյուր քաղաքի ու շրջանի գավթումը ուղեկցվում էր բնակչության մի մասի կոտորածով և մյուսի կողոպուտով, բնակավայրերի ավերումով և տանյակ հագարավոր մարդկանց գերեզարումով ու նրանց ստրկացմամբ: Աղբյուրներում ամեն մի արշավանքի նկարագրությունը ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Ողջ չըջապատը ամայացնելով զինվորները ձեռք բերեցին անհամար ավար», կամ «Վերադառնալով արշավանքից՝ տանում էին իրենց հետ անթիվ-անհամար ավար, գերիներ և կորված զուկներ»: Հաճախ առանձին երկրամասեր գրավելու ժամանակ ամբողջ շրջանների բնակչությունը տարվում էր Անատոլիա և այլն: Հունգարիայի հարավային շրջանների վրա 1438 թ. արշավանքին մասնակից տարեգիր Աշիկ Փաշա-զաղեն Հայտնում էր, որ այդ արշավանքի ժամանակ գերի վերցվածները Հայտնում շատ էին, որ սարուկ գերի կին կարելի էր ստանալ մի զույգ կոշիկի փոխարեն»:

Գիտնականը միանգամայն ճիշտ է նկատել նաև այն, որ «սուլթանը և նրան շրջապատող վերնախավը նվաճված երկրների բնակիչներին դիտում էին միայն որպես ստրուկներին»: Պատահա-

կան էլ, որ թուրքիայում լայն ծավալ էր ստացել ստրկավաճառությունը: Հանդես գալով պատմության կեղծարարների դեմ, Տվերխովսկուսն պնդում է այն անհերքելի փաստը, որ օսման սուլթանները իրենց ենթակա ժողովուրդներին բերեցին ոչ թե բաղաբակրթություն, այլ ստրկատիրական կարգեր, կողոպուտ և կոտորածներ: Ընդհանրացնելով իր խոսքը՝ հեղինակը գրել է. «Ռուբրական տիրակալությունը նվաճված երկրների համար դարձավ մեծագույն պղծ»²¹:

Թուրքագետ Ա. Ֆ. Միլլերը նույնպես գրել է, որ Օսմանյան պետության հարստության գլխավոր աղբյուրը նվաճված երկրների «կողոպուտն էր՝ ռազմական ավարի, ստրուկների և հարկերի ձեռքբերումը: Իրենց ամբողջ էներգիան, ուշադրությունը և ժամանակը թուրքերը նվիրում էին մարտունակ բանակ ստեղծելու գործին»²²:

Խոսելով սուլթանական թուրքիայի բանակի ու պետական կառույցվածքի մասին, Միլլերը արժանապարհում էր շատ բնորոշ մի հանգամանք. «Կանոնավոր բանակի զինվորները և սպաները (ենիչերիներ, հեծելազոր ու հրետանավորներ) կոչվում էին «կառավարության ստրուկներ»: Սուլթանի ստրուկներ էին համարվում նաև ընդհանրապես բոլոր պետական ծառայողները (բացի հոգևորականներից) ... Ստրուկների միջոցով սուլթանները ձգտում էին սպիլի ամբաստնողի իրենց դիրքերը կառավարող ֆեոդալական դասակարգի տարասեռակ ներկայացուցիչների նկատմամբ»²³:

Իրավադուրկ ուսյայի մասին նույն հեղինակը գրել է, որ նա «ենթարկվում էր փաշայի անկանխելի ճնշումներին ու կամայականություններին: Բրիտանյաններից զանձվող հարկը զատնում էր ստրկացուցիչ և անտանելի: Հարկ սկսեցին հավաքել ան-

²¹ Տե՛ս Ա. Ս. Տվերխովսկուի «Фальсификация истории Турции в кемалистской историографии» հոդվածը, որ հրապարակված է Византийский Временник ժողովածուի 1953 թ. VII հատորում:

²² А. Ф. М и л л е р. Краткая история Турции. М., 1948, с. 16.

²³ А. Ф. М и л л е р. Османская империя (Султанская Турция). М., 1946, с. 6.

չափահասաներից, մինչև իսկ փոքր երեխաներից: Գյուղացիները թե՛ մուսուլման, թե՛ ոչ մուսուլման, թողնում էին Հոգեբը և փախչում քաղաք, բայց նրանց համար այնտեղ աշխատանք չկար»²⁴:

Բալկանյան ժողովուրդների պատմության անվանի մասնագետ Ի. Ս. Դոստոյանը բազմաթիվ ազդեցությունների ու փաստերի հիման վրա հանգել է հետևյալ եզրակացությանը. «Հայտնի է, որ պատերազմները միջնադարում սովորաբար ուղեկցվում էին թալանով, խաղաղ բնակչության սպանություններով, հրդեհներով, բռնազրավումներով և այլն, սակայն թուրք նվաճողները ակնհայտորեն գերազանցեցին միջնադարյան դաժանությունների բոլոր օրինակները: Նվաճած տերտորիաների թալանը թուրքական ռազմավարատարիական պետության համար ռազմական գործողությունների գլխավոր նպատակներից մեկն էր: Հպատակեցված ժողովուրդներին ռազմական ուժի միջոցով թալանելը XIV-XV դարերում սուլթանի և թուրքական ֆեոդալների գանձարանի ծախսերի հիմնական աղբյուրն էր: Թուրքական բանակի ամեն մի զինվոր պատերազմ էր գնում հաղթվածներին թալանելու և հարստանալու հույսով»²⁵:

Մի այլ առիթով Ի. Ս. Դոստոյանը իրավացիորեն գրել է. «Նվաճողական պատերազմները հանդիսանում էին սուլթանական գանձարանի զբաղակուսուսկման, թուրքական վերնախավի հարստացման, թուրքական բանակի սպաների ու զինվորների ապրուստի միջոցների հիմնական աղբյուրը: Բալկանյան թերակղզու գանձարան շրջանների վրա հարձակվելով թուրքերը բնակչությանը զանգվածաբար ստրկության էին մատնում, թալանում և էին խաղաղ բնակչության ունեցվածքը»²⁶:

«Օսմանյան քաղաքականությունը ռայայի վերաբերմամբ եղել է՝ ձեռն նրա կենսունակ հյուսիսը, խլել նրանից այն ամենը,

ինչ ուժ. գեղեցկություն, բնդունակություն էր ներկայացնում», նկատել է Հայտնի պատմաբան Լեոն²⁷:

Օսմանյան սուլթանների բարբարոսությունների մասին գրել է նաև թուրքագետ Յու. Ա. Պետրոսյանը: Թուրքական զորքերի արշավանքները Բալկաններ, բնդգծում է նա, «ստակալի ողբերգություն դարձան տեղական բնակչության համար: Տասնյակ քաղաքների և հարյուրավոր գյուղերի ավերում, խաղաղ բնակչության զանգվածային կոտորածներ, թալան ու ավազակություն — այսպիսին էր Բալկանների նվաճման պատկերը»: Թուրքական նվաճողների գազանությունները ակնհայտորեն գերազանցեցին նույնիսկ միջնադարյան պատերազմների դաժանությունները: Նվաճված տարածքների ժողովուրդների տառապանքները իսկապես անչափ էին»²⁸:

Նեղինակը հատուկ բնդգծում է թուրք սուլթանների դաժանությունը: Այսպես. սուլթան Մեհմեդ II-ի մասին ասված է, որ նա խիստ գաղտնապահ, նենդ, դաժան, անսանձ ու իշխանասեր բռնապետ էր: Նա անխնա ոչնչացնում էր բոլոր նրանց (անգամ իր հարազատներին), ովքեր կարող էին մրցակից լինել զահին տիրելու համար: «Մուհամեդ II-ի դաժանությունն այնքան անապրելի էր, որ նրա միայն անունը սարսափեցնում էր Հպատակներին»²⁹: Սուլթան Սելիմ I-ի (1512-1520) մասին նշված է. «Սելիմի հրամանով խեղդամահ արվեցին նրա եղբայրներն ու ազգականները, բնդ որում ոմանց սպանեցին իր սուլթանի ներկայությամբ»: Սուլթան Սելիմի վայրագությունները ավելի շատ արտահայտվեցին նրա նվաճողական պատերազմների ժամանակ: Բնորոշ է, որ Սելիմին Հաջորդող սուլթան Սուլեյմանը, գրավելով Հունգարիան, իրագործեց զանգվածային կոտորածներ, որոնց ընթացքում սրի քաշվեց 200000 մարդ»³⁰:

²⁴ Լույն տեղում, էջ 9:

²⁵ Византийский Временник. Т. VII, с. 38.

²⁶ И. С. Д о с т я н. Борьба сербского народа против турецкого ига. XV — начало XIX вв. М., 1958, с. 17.

²⁷ Լ և ո. Հայոց պատմություն. Հ. 3, Երևան, 1946, էջ 112:

²⁸ Ю. А. Петросян. Османская империя, могущество и гибель. Исторические очерки. М., 1990, с. 23.

²⁹ Լույն տեղում, էջ 40:

³⁰ Լույն տեղում, էջ 57, 62:

Պետրոսյանի գրքում բերված են բազմաթիվ փաստեր այն մասին, թե օսմանյան զորքերը ինչ վայրագություններ են կատարել նաև Անդրդովկասում: Հայերն ու վրացիները մի անգամ էլ, որ ընդգրկել են սուլթանական ծանր լծի դեմ, բայց ուժերը եղել են անՀավասար: Այդ է պատճառը, որ նրանք իրենց Հայացքն ուղղել են Ռուսաստանին՝ Հույս դնելով այդ երկրի Հովանավորության և օգնության վրա³¹:

Պատմարանը ցույց է տվել, թե ինչպիսի ծավալ է ստացել գերեվարությունը օսմանյան պետության մեջ. «Ստամբուլը ստրկավաճառության խոշոր կենտրոն էր: Ստրկավաճառության շուկաները քաղաքում մի քանիսն էին: Այստեղ վաճառում էին ռազմագերիներ և նվաճած երկրների ստրկացած բնակիչներ, այդ թվում ռուսներ ու ուկրաինացիներ, որոնք Հարազատ բնակավայրերից գերեվարվել էին Ղրիմի թաթարների կողմից: Ստամբուլի ստրկավաճառության շուկաներում տարեկան վաճառվում էին տասնյակ հազարավոր ստրուկներ»³²:

Հեղինակը միաժամանակ արդարացիորեն նշել է թուրք ժողովրդական մասսաների ծանր վիճակը և նրանց պատամարհան շարժումները օսմանյան սուլթանների դեմ:

Հանգուցյալ բյուզանդագետ-արևելագետ Ջ. Վ. Ուլայցոֆյան գրել է. «Թուրքական նվաճումները Հույներին, ինչպես նաև Բալկանյան թերակղզու մյուս ժողովուրդներին պատճառեցին դաժանադույն տառապանքներ, Հազարավոր մարդկանց մահ, ստրկություն և ավերում... Թուրքերի կողմից Բյուզանդիայի և Բալկանյան թերակղզու մյուս երկրների զբաղման խորապես սևակցիտն դերը այն էր, որ այդ ավազակային նվաճումները մի քանի դարով կասեցրին ժողովուրդների Հետագա առաջընթաց անտեսական զարգացումը, անկման Հասցրեցին և քայքայեցին նրանց արտադրողական ուժերը, խեղդամահ արեցին նոր բուրժուական Հարարբությունների այն ծիլերը, որոնք արդեն սկսել

էին ի Հայտ գալ, վերականգնեցին ավատատիրական կարգերի ամենահետամնաց մեկերը»³³: ժխտելով Բյուզանդիայի վերնախավին պատկանող մի շարք ունեցողաների փարիսեցիական պնդումները, նա ցույց է տվել, որ Կ. Պոլիսը նվաճող սուլթան Մեհմեդ II-ը եղել է ոչ թե «առաջադեմ», «փայլուն» դեմք, այլ արյունարբու, վայրագ բռնապետ: Հինքնք թեկուզ միայն այն, թե ինչպես էր նա կործանում արվեստի և մշակույթի Հիասթափ հուշարձանները իր կողմից զբաղված բոլոր երկրներում: Ջ. Ուլայցոֆյան իրավացիորեն քննադատել է պատմաբան Ն. Յորգայի «Օսմանյան պետության պատմությունը» երկհատոր աշխատությունը³⁴, որտեղ փորձ է արվում ցույց տալ, թե Բյուզանդիայում իբր լայն տարածում է ունեցել թուրքոֆիլությունը: «Բյուզանդիայում ժողովրդական զանգվածների կարծեցյալ «թուրքոֆիլության» առաջավելք.— գրում է նա,— ստեղծված է թուրքերի բուրժուական ջատագովների կողմից, ոչ մի դիտական Հիմք չունի և աղբյուրներում Հաստատում չի գտնում...: Հօգուտ թուրքերի դավաճանական քաղաքականություն էին վարում [բյուզանդական] վերնախավի մի բուռն ունեցողներ, որոնք ձգտում էին մատուցել գնով փրկել իրենց Հարստությունն ու կյանությունը»³⁵:

«Օսմանյան կայսրությունը մարդկության պատմության տարեգրքում գրել է արյունահեղ պատերազմների, նվաճումների և Ասիայի ու Հարավարևելյան Եվրոպայի բազմաթիվ ժողովուրդների ստրկացման մտայն էջեր»,— գրում է մեկ այլ Հեղինակ³⁶:

Բուլղարիայի պատմության Հայտնի մասնագետ ակադ. Ն. Ս. Դեթաժիկը ցույց է տվել, որ Օսմանյան պետության զորքերը, ներխուժելով Բալկաններ, «ամայացնում էին երկիրը, թալանում, սպանում էին և բնակիչներին զանգվածաբար գերեվարում, ապա նրանց որպես ստրուկներ վաճառում Փոքր Ասիայի շուկանե-

³¹ Византийский Временник. Т. VII, с. 120-121.

³² S'w N. Y o r g a. Geschichte des Osmanischen Reiches. Bd. I-II. Gotha, 1908-1909.

³³ Византийский Временник. Т. VII, с. 120.

³⁴ Նույն տեղում, էջ 122.

³⁵ Նույն տեղում, էջ 159:

³⁶ Նույն տեղում, էջ 85:

բում»³⁷: Լատ բուլղարագետ Ա. Ա. Ռովյակովի, թուրքերը Բուլղարիայում Հաստատեցին ռազմաֆեոդալական սեփմ: «Օսմանցի ֆեոդալները գրավեցին երկրի լավագույն հողերը, բուլղարներին ղուրս մղեցին քաղաքներից, բնակիչներին դարձրին իրավազուրկ «սայա»՝ ձգտելով արժատախիչ անել ոչ միայն նրանց ազգային ինքնազիտակցությունը, այլև «բուլղարներ» անվանումը»³⁸:

Բուլղարիայի պատմությանը նվիրված երկհատոր աշխատության Հեղինակները գրել են. «Թուրքերի կողմից Բուլղարիայի գրավումը XIV դարի վերջին բուլղար ժողովրդին մասնաց հինգդարյա անհույս ստրկության: Թուրքական տիրապետության ժամանակը Բուլղարիայի պատմության ամենամանր շրջանն է. իր կյանքի, իր լեզվի, իր ազգային մշակույթի Համար ժողովրդի դաժան ու անհավասար պայքարի շրջան: Թուրքական նվաճողները, բուլղար ժողովրդին գրկվողի անկախություններից, խոստովեցին պատմական զարգացման նորժուլ ընթացքը, կասեցրին Բուլղարիայի արտադրողական ուժերի զարգացումը: Թուրքական տիրապետության մի քանի դարից հետո բուլղար ժողովուրդը անտեսապետ և քաղաքականապես դարձավ Եվրոպայի ամենահետամնաց ժողովուրդներից մեկը»³⁹:

Օսմանյան սուլթանների բարբարոսություններին մասին բուլղարներն լեզվով տեղծվել է բազմական Հարուստ գրականություն: Հրապարակվել են ինչպես փաստաթղթերի ժողովածուներ, զիտական ուսումնասիրություններ, այնպես էլ ընդհանրացնող, ուրվագծային բնույթի բազմաՀատոր աշխատություններ:

II

Օսմանյան պետության ազդեցիվ քաղաքականության, ազգակային պատերազմների, զանգվածային կոտորածների ու այլապես բարբարոսությունների մասին կարևոր ու ճշգրիտ տեղե-

³⁷ Н. С. Державин. История Болгарии. Т. 2. М.-Л., 1946, с. 157.

³⁸ А. А. Ровняков. В борьбе за свободу. А., Наука, 1980, с. 7.

³⁹ История Болгарии. Т. I, М., 1954, с. 163.

կություններ են Հաղորդում իր ժամանակի շատ տարեգիրներ, ահանատես գործիչներ և պատմիչներ:

Բուլղարիայի վանքերից մեկի կրոնավոր Խայյե, որպես սկանառես, վկայել է, որ թուրքական զորքերը, 1371 թ. Մարիցայի Հայտնի ճակատամարտից հետո, Հարավարևելյան Եվրոպայում բազմաթիվ քաղաքներ ու շրջաններ կողոպտեցին ու սպիրեցին, բնակչության զգալի մասը սրի քաշվեց, շատերը զերեվարվեցին կամ մահացան Համաարած սողից: Մի այլ հոգևորական գրում է, որ 1393 թ., երբ թուրքական Հրոսպակոժերը գրավեցին Բուլղարիայի մայրաքաղաք Տրևնովոն, տեղի ունեցան սարսափելի ջարդեր. քաղաքը ենթարկվեց ահավոր թալանի, Հազարավոր մարդիկ զերե տարվեցին»⁴⁰:

Անտրինակ վալազուլություններ կատարվեցին 1453 թ. մայիսի վերջերին: Երկար ժամանակ չկարողանալով կոտրել Կ. Պոլսի դոչտոպանների Համառ և Հերոսական դիմադրությունը, սուլթան Մեհմեդ II-ը խոտուացավ իր զորքերին Կ. Պոլսը գրավելու ղեկավարում նրանց թույլատրել երեք օր ու երեք զինք ազատ ու անկաշխակ կողոպուտել այդ Հարուստ, շքեղ քաղաքը և գերեվարել նրա բնակիչներին, ինչքան կարողանան և ինչպես ցանկանան: XV դարի պատմաչիր, ամենացի Լատինի Հալիփոնզիրը Հաղորդում է, որ վճռական գրոհի նախօրին, դիմելով ենիչերիներին, սուլթանը ասել է, թե գնացե՛ք նոր գրոհի, Հաղորդության ղեկավարում ձուլե՛ք կուսենեաք ստրուկներ, որոնց Համար ձեզ շատ կվճարեն, զուրկ կունենաք և՛ կանայք, և՛ երեխաներ, և՛ այդ քաղաքի մեծ Հարսությունը»⁴¹: Խոստումն կատարվեց:

Կ. Պոլսի Հերոսական պաշտպանության ժամանակից, ողբերգական այդ ղեկերի ականատես, XV դարի Հայտնի բյուզանդական տարեգիր, պատմարան Գեորգի Սֆրանձեսը իր «ժամանակագրություն» գրքում պատմում է, որ թուրքական զորքերը, մա-

⁴⁰ St' s. U. Դայայանի Հողվածը Византийский Временник ժողովածուի VII Հատորում:

⁴¹ Византийский Временник. Т. VII, с. 440.

յիս 29-ին ներխուժելով քաղաք, անմիջապես սկսեցին կոտորածն ու թալանը, ընդ որում «մի շարք տեղերում զիակների թիվը այնքան շատ էր, որ հողը բոլորովին չէր երևում, և կարելի էր տեսնել անտո՞ր տեսարան. լաց ու հնկնկանք, բազմաթիվ ազնվական և ազնվատուն կանանց, աղջիկների և Աստուծոս նվիրված միանձնուհիների զերեվարում, որոնց, շնայած նրանց աղաչակներին, անողորմարար հյուսներից քաշելով, զուր հին բերում եկեղեցիներից, երկնայեների լաց ու կոծ, սրբությունների և սուր տաճարների կողոպուտ...»⁴²: Լաչակում Ս. Սոփիա եկեղեցին բարբարոսաբար թալանելուց հետո, շարունակում է տարեկիբը, այնտեղ «Թուրքերը ուսում, խմում էին և իրականացնում իրենց անստակ ցանկություններն ու տոփանքը կանանց, աղջիկների և անչափաչառ աղաների նկատմամբ: Ամենուրեք կատարվում էր շարագործություն: Բնակարաններում լաց ու սրտունջ, ամենուրեք ողբ, եկեղեցիներում արցունքներ, ամեն տեղ տղամարդկանց հատաչանք և կանանց հեծեծանք. թուրքերը հափշտակում էին մարդկանց և նրանց դարձնում ստրուկներ... Հրապարակներում, փողոցներում և այլ վայրերում տեղի ունեցան ամեն տեսակի վայրագություններ: Այլ մի տեղ չմտց չխուզարկված և չթալանված... Որպեսզի գտնեն թաքցված գրամները, սրբապեղծները տակնուվրա արին ողջ աղջիկներն ու տները»⁴³:

Այս դեպքերի մի այլ ժամանակակից, հույն հայտնի պատմաբան Դուկասը իր «Բյուզանդիայի պատմությունը» գրքում նույնպես պատմում է Կ. Պոլսի զրավման ու ավերման մասին: Ներխուժելով Կ. Պոլսի, գրել է նա, «Թուրքերը, փաղցկելով բոլոր կողմերը, սպանելով և զերի վերցնելով, վերջապես հասան տաճարին և, տեսնելով որ դարպասները փակ են, ժամանակ չկորցնելով կացիներով շարժեցին նրա զուները: Երբ նրանք, սրբով զինված, ներս խուժեցին և տնհամար բազմություն տեսան, սկսեցին գերները հափշտակել...: Ո՞վ կպատմի այնտեղ պատահածը, ո՞վ

կպատմի երկյամների լաց ու կոծի մասին, մայրերի ողբի ու արցունքների մասին»⁴⁴:

Ազդյունները Հաղորդում են, որ թալանի ու զերիների մեծ բաժինը վերցնում էր ինքը՝ սուլթան Մեհմեդ II-ը: Բացի դրանից, իր հարեմի համար սուլթանը գերիներից «ընտրում էր զեղեցիկ աղջիկներ ու տղաներ»: Ասկայն ավելի բնորոշ փաստ: Մի խրատականի ժամանակ, գրել է Դուկասը, Հարրամ սուլթանը հրամայում է իր մտա բերել Բյուզանդական կայսրության առաջին մինիստր (ազմիրայ) Լուկաս Նուսարայի փոքրիկ որդուն, «որովհետև Ի՞նչ տարեկան այդ տղան զեղեցիկ էր»: Տղայի հայրը բնականաբար փորձում է թույլ շտապ, որ սուլթանը պղծի իր որդուն: Հաջորդ օրը այդ հույն իշխանավորը և նրա երկու որդին զլխատվում են⁴⁵: Այսպիսով Կ. Պոլսը զրավող ու ավերող Մուհամեդ II-ը, հակառակ նրա մասին հորինված զոփասանական հեքիաթների, ոչ միայն խիստ զսպան, այլև ապականված, այլատերված մարդ էր:

Օսմանյան բարբարոսությունների մասին հետաքրքիր տեղեկություններ է Հաղորդում XV դարի սերը տարեկիր Կոստանտին Միխայլովիչը, որը երիտասարդ հասակից զերվելով Թուրքերի կողմից, ստեղծված է եղել մասնակցել սուլթան Մեհմեդ II-ի մի շարք արշավանքներին: «Թուրքերը (իմա՛ սուլթանները Մ. Ն.) երբեք չեն գտնվում հանգիստ վիճակում, միշտ պատերազմներ են վարում բազմաթիվ երկրների հետ և եթե հաշտություն են կնքում, միայն այն դեպքում, երբ զա իրենց ձեռնառու է եղել... Նրանք այլ երկրներում միայն չարիք են գործում: Հափշտակում են մարդկանց, զերվարում, իսկ ոչքեր անկարող են բայել, սպանում են»⁴⁶:

⁴² Կույն տեղում, էջ 402:

⁴³ Կույն տեղում, էջ 406-407:

⁴⁴ Записки князя. Написаны Константином Михайловичем из Остравины. Введение, перевод и комментарии А. И. Рогова. М., 1978, с. 114.

⁴⁵ Կույն տեղում, էջ 428-429:

⁴⁶ Կույն տեղում, էջ 429:

Միխայլովիչի տարեգրութեան մեջ սուլթան Մեհմեդ II-ի մասին ասված է. «Նա շատ խորամանկ էր և ում որ կարող էր՝ խաբոււմ էր՝ խաղաղութիւնն առաջարկելով: Նա հազվագուտ դեպքում էր իր խոսքի տերը լինում և, երբ որևէ մեկը դրա համար նրան մեղադրում էր, ապա խելագարի նման հարձակվում էր նրա վրա»: Տարեգիրը նշել է նաև, թե այդ սուլթանը ինչ ջարդեր ու կողոպուտ կազմակերպեց Կ. Պոլիսը 1453 թ. մայիսին գրավելու օրերին: Երբ օսմանյան զորքերը ներխուժեցին քաղաք, տեղի ունեցան համընդհանուր կոտորած ու կողոպուտ. «տղամարդկանց ոչնչացրին, իսկ կանանց ու երեխաներին գերեզմարեցին»⁴⁷:

1458 թ., Պելոպոնեսը օսմանյան զորքերի կողմից գրավելու ժամանակ, Կ. Միխայլովիչը նորից գտնվում էր օսմանյան բանակում: Որպես ականատես նա գրել է, որ սուլթան Մեհմեդ II-ը «անձամբ սպանում էր մարդկանց, ջարդում էր նրանց ոսկորները և կատարում այլ գազանութիւններ»⁴⁸:

Կ. Պոլսի անկումից ընդամենը երկու տարի հետո՝ 1455 թ. սերբական Նովո Բրդո քաղաքն առանց դիմադրութեան հանձնվեց թուրքերին, բայց չնայած դրան սուլթան Մեհմեդի հրամանով քաղաքի հազարավոր տղամարդիկ ոչնչացվեցին, իսկ 320 պատանիներ և 700 կանայք, որպես գերիներ, հանձնվեցին բռնակալի մերձավորներին⁴⁹:

Սուլթանական զորքերը 1461 թ. գրավեցին Տրապիզոնը: Հավատարիմ իրենց սովորութեանը, գավթիչները դաժան դատաստան տեսան քաղաքի բնակչութեան հետ, շատերը գերեզմարվեցին, կոտորվեցին կամ տեղահանվեցին Ստամբուլ: Սուլթանի հատուկ զորամասի համար բռնի կերպով հավաքեցին 1500 մանուկներ⁵⁰: Տրապիզոնի կայսրութեան գահակալը և նրա ընտանիքի անդամները, Մուհամմեդի հրամանով, նենգաբար սպանվեցին:

⁴⁷ Նույն տեղում, էջ 72:

⁴⁸ Նույն տեղում, էջ 81:

⁴⁹ Византийский Временник. Т. VII, с. 39.

⁵⁰ Նույն տեղում, էջ 118:

Բյուզանդական պետութեան կործանումը շատ երկրներում ընկալվեց որպես մեծ դժբախտութիւն: Կ. Պոլսի ավերումը, այնտեղ կատարված բարբարոսութիւնները ծանր տպավորութիւն թողեցին ժամանակակիցների վրա: Գրվեցին բանաստեղծութիւններ, պոեմներ, օրագրեր և այլն, որոնցում դառնորեն ողբացին Բյուզանդական պետութեան անկումը: Հանդես եկան ողբասացներ Բալկաններում, Հայաստանում՝ հայերի մեջ:

Կատարված անցքերին հայ հեղինակներից անդրադարձան տաղերգուներ Աբրահամ Անկյուրացին, Առաքել Բաղիչեցին և ուրիշները: Անկյուրացին 392-տողանոց բանաստեղծութեան մեջ, օրինակ, գրել է, որ չար սուլթան Մեհմեդի արյան ծարավի զինվորները, երբ ներխուժեցին Կ. Պոլիս, ապա՝

Չամենեսան կոտորեցին
Այլ և ըզայրս և ըզկանայս
Ի գերութիւն իսկ վարեցին:
Եւ զնորահաս տըզայս նոցին
Ի մօր գըրկացըն խլէին,
Առեալ զքարի հարկանէին,
Ձծերացըն սրով խողխողէին:
.....
.....
Ձթագաւորաց ըզգերեզմանցըն,
Որ ի մարմար տապանս կային,
Բացեալ զնոսա կողոպտեցին,
Չոսկերս ամենքն փըշրեցին⁵¹:

Կ. Պոլսում կատարված վայրագութիւնների մասին անգլիացի պատմաբան Ստիվեն Ռանսիմենը 1969 թ. հրատարակեց

⁵¹ Հ. Ս. Ա ն ա ս յ ա ն. Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին. Երևան, 1957 թ.: Անկյուրացու և Բաղիչեցու բանաստեղծութիւնների ուսուկներն թարգմանութիւնները, որ կատարել է Սեն Արևշատյանը, տպագրվել են Византийский Временник ժողովածուի VII հատորում:

Հատուկ աշխատություն՝ «Կոստանդնուպոլսի անկումը 1453 թ.» խորագրով, որ գրված է քաղաքի վաղ շրջանի պաշտպանության և հարուստ գրականության հիման վրա: Հեղինակը գրում է, որ երբ թուրքական զորքերը ներխուժեցին քաղաք, «բոլոր անմիջապես նետվեցին ավարի Համար վայրերի որսի: Սկզբում դեռևս չհասցրած լինելով, որ դիմադրություն արգեն դադարել է, նրանք սպանում էին բոլորին, ում հանդիպում էին փողոցներում տղամարդկանց, կանանց, երեխաներին: Արյան Հեղեղներ էին Հասում Կոստանդնուպոլսի գլուխվայր փողոցներով: Սակայն շուտով սպանելու ծարավը Հազեզից, և դինավորները զբաղվեցին ավելի շահավետ գործով՝ մարդկանց գերելով ու իրերի բռնագրավումով... քաղաքի կողոպուտը շարունակվեց ամբողջ օրը: Թուրքերը խուժում էին տղամարդկանց և կանանց վանքերը և կապկապում էին այնտեղ աղբյուրներին: Մի քանի երիտասարդ կրոնավորներ նետվեցին ջրհորները: Քաղաքի բնակիչների բոլոր տները ենթարկվեցին թալանի: Մարդկանց իրենց ունեցվածքով էին տանում: Ով ուժասպառ ընկնում էր, անմիջապես սպանում էին: Այդպես էին վարվում նաև շատ մանուկների Հետ, որոնց Համար ոչինչ չէին կարող ստանալ»⁵²:

Ոչադրուժյան արժանի է Հետևյալ Հանգամանքը: Ինչպես պատմագիտական Հին աղբյուրներում, այնպես էլ ավելի ուշ դարերի թուրքագիտական գրականության մեջ բազմիցս նշված է, որ Կ. Պոլիսը գրավող սուլթան Մեհմեդ II-ը իր գահակալության ընթացքում 1451-1481 թթ., վարել է Հափշտակողական բազմաթիվ պատերազմներ, նվաճել է շատ երկրներ, աչքի է ընկել իր անորինակ դաժանությամբ, եղել է, ինչպես տեսանք, անբարոյական ու անառակ մարդ: Նա ավելի ուժեղացրեց ճշունքներն ու կեղեքումները նվաճված երկրներում⁵³: Բայց չնայած դրան քիչ

փորձեր չեն կատարվել փառաբանելու այդ սանձարձակ բռնակալին: Բնորոշ է, օրինակ, որ նրան Հաճախ կոչել են Մեծ նվաճող, Անհաղթ ու Հերոս Փառչյաւ:

Օսմանյան Թուրքիայի XIV-XV դարերի պատմության վերաբերյալ կարևոր տեղեկություններ են Հազորդում XIX դարի եվրոպական մի շարք թուրքագետ պատմաբաններ, մասնավորապես, ավստրիացի գիտնական ու ղրվանագետ Ջ. Համմերը: Նրա բազմաճանաչ աշխատության մեջ Հանգամանքներն լուսաբանված են այն ահավոր բարբարոսություններ, որ կատարել են թուրք սուլթանները դարերի ընթացքում: Ահա մի փոքր մասն այն բազմաթիվ փաստերից, որոնք բերված են նրա աշխատության միայն առաջին Հատորում: 1396 թ. Նիկիպոլիս քաղաքում սուլթան Բայազիդի Հրամանով դաժանորեն սպանվեցին 10000 քրիստոնյա գերիներ: 1453 թ. սուլթան Մուհամեդ II-ը, գրավելով Կ. Պոլիսը, կատարեց անօրինակ գազանություններ: Նույն սուլթանը 1458 թ. թալանեց ու ավերեց Պիտոպոնսը, կազմակերպեց Չարդեր, գերվարեց Հազարավոր մարդկանց: 1459 թ. թուրքական զորքերը, ներխուժելով Սերբիա, թալանեցին ու ավերեցին բազմաթիվ ամրոցներ, բնակավայրեր և գերվարեցին 100000 մարդ: 1492-1493 թթ. Ավստրիայում կատարվեց ստակի վայրագություններ: Թուրք կաննիբալները երեխաներին սպանել են՝ նրանց գլուխները խփելով պատերին: Աղջիկներին մայրերի ու տղամարդկանց աչքի առաջ բռնաբարել են և Հետո սպանել, կտրված գլուխները բարձրացրել են ցյցերի վրա և այլն, և այլն⁵⁴:

III

Օսմանյան սուլթաններն իրենց «քաղաքակրթական միսիան» շարունակեցին իրագործել նաև XVI-XVIII դարերում: Ար-

⁵² С. Р ансим ен. Падение Константинополя в 1453 году. М., 1983, с. 131-133 [Steven Runcimen. The Fall of Constantinople in 1453. Cambridge, 1969].

⁵³ Բարբոսի կամատի վանքերից մեկում 1460-ական թթ. գրված մի Հիշատակարանում նշված է, թե ինչպիսի ծանր վիճակում էին գտնվում քրիստոնյաները

սուլթան Մուհամեդ II-ի օրը: Ժամանակագիրը բնագրում էր մասնավորապես Հայ ժողովրդի ողբալի վիճակը (անս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N6273):

⁵⁴ Joseph von Hammer-Purgstall. Geschichte des Osmanischen Reiches. I Band. Pest, 1840.

դեն XVI դարի սկզբին նրանք «ազատություն և արդարություն» բերեցին վրաց ժողովրդին: Ահա ինչ են գրել այդ մասին վրացի պատմաբանները. «1510 թ. Թուրքական մեծ բանակը ներխուժեց Արևմտյան Վրաստան... Օսմանցիները ավերեցին քաղաքները, քանդեցին գյուղերը, թալանեցին ու Հրզնհեցին եկեղեցիները»: Վրացի բնակիչները դիմեցին զանգվածային փախուստի: «Ենարաքի բռնազանձուժք, բարբարոսական ձևեր ընդունած օսմանյան կոտ ու թեզարը ծանր հետևանքների հասցրին: Անշեղորեն ավերանում էր գյուղացիների կողմից լքված գյուղերի թիվը: XVI դարի վերջում Օսմանյան-Սասանյան պատերազմում արդեն կային 296 լքյալ գյուղեր, իսկ մնացյալ 344 գյուղերում հաշվվում էր 1-ից մինչև 11 ծուխ յուրաքանչյուրում»⁵⁵:

Թուրք ճայտնի պատմիչ Իրրահիմ Փեչեկին, խոսելով օսմանյան բանակի 1553 թ. հաղթանակների մասին Հայաստանում և Իրանում, հպարտությամբ արձանագրում էր, որ երբ սուլթանական զորքը մտավ Շորապյալ (Շիրակ), «ամբողջությամբ քանդեց ու ավերեց այդ քարեշեն գյուղերը, շինությունները ոչնչացրեց և Հոդին հավասարեցրեց»: Նույնը կատարվեց նաև Երևանում. բոլոր կառույցները, պարտեզներն ու այգիները հրդեհվեցին: 27-րդ օրը զորքերը Հասան Նախիջևանի դաշտ: «Հաղթական բանակի» սարսափեց քաղաքներն ու գյուղերը, տներն ու բնակավայրերն անասայել և բուսերի ու ագռավների բնակավայր էին դարձել: «Որսի ու ալարի ծարավ «աթ-օղյաները» և այլ զինվորները հարձակվեցին շահի և նրա որդու պալատների, բնակավայրերի վրա՝ կոռուպտեցին թաքցրած հարստությունները, ավերեցին, քանդեցին, քարը քարի վրա չթողին: Բացի այդ, 4-5 օրվա տարածություն վրա գտնվող ճանապարհի բոլոր գյուղերն ու ավանները, դաշտերն ու շինությունները այն ստիճան քանդեցին ու ա-

վերեցին, որ շինության ու կենդանության հետքն անգամ չմնաց»⁵⁶:

1579 թ. Թուրքական զորքերը, ներխուժելով Հայաստան ու Վրաստան, ապավ է մի հիշատակարանում, «Հիմնահատակ ավերեցին շատ եկեղեցիներ ու վանքեր, կոտորեցին շատ քրիստոնյաների՝ վարդապետների ու եպիսկոպոսների, հոգևորականների ու ժողովրդի, տանջահար արին շատերին և գերի տարան անթիվ անհամար մարդկանց: Նախիջևան քաղաքից և ուրիշ չրջաններից գերի տարան ավելի քան 40000 մարդ»⁵⁷:

XVI դարի մի Հայ տարեգիր, պատմելով 1581 թ. Անդրկովկաս ներխուժած Թուրքական զորքերի գաղափարությունների մասին, գրել է. Թուրք զինվորները «զրազում քաղաքս, զգեզս և զգաւառս աւերեալ քանդեցին, զարսն սրով սպանին, և զկանայս և զտղայսն զերի վարեցին: Եւ այնչափ անեղօք բան արարին, զի զտղայն սրովայնով կալան և ընկեցին ի վառեալ թոնիրն ի մէջ կրակին»⁵⁸:

Օսմանյան կայսրության մեջ XVII դարում կատարվող կենդանների ու ճնշումների մասին ահա թե ինչ է պատմում երկար տարիներ Թուրքիայում ապրած Ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ Միշել Ֆերուրը. «Նահանգներում փայաները գալիս են փոքր թաղավորներ...: Իշխում են հզատակների ինչպես ունեցվածքի, այնպես էլ, մասնավորապես, կյանքի վրա, որոնց երբեմն գալստյովի պահին առանց զատ ու դատաստանի մահվան են դատապարտում: Նրանք հազար ու մի խժոժություններ են կատարում...: Նրանց գործակալները ավերում են գյուղերը, գո-

⁵⁶ Թուրքական աղբյուրները Հայաստանի, Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 33, 34:

⁵⁷ Ученые записки Института востоковедения. Т. 3. М., 1951, с. 111. Հետաքրքիր է, որ աղբյուրներից պատմաբան Ա. Ռահմանի գրել է, որ XVI-XVII դդ. օսմանցիները, ներխուժելով Անդրկովկաս, գերբարձում էին ոչ միայն Հայերին ու վրացիներին, այլև ժուռուլմաններին և նրանց վաճառում Կաֆայի, Սամարսի և Եգիպտոսի ստրկավաճառման շուկաներում (А. А. Рахман и И. А. Азербайджан в конце XVI и в начале XVII вв. Баку, 1981, с. 49).

⁵⁸ Մաշտոցի ակվ. Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 285ա:

⁵⁵ Н. А. Бердзенишвили, В. Д. Дондуа и др. История Грузии. Т. I, Тбилиси, 1962, с. 292.

զանում, կողոպտում ու ամայի են դարձնում այն բնակավայրերը, որտեղից որ անցնում են»⁶⁰։ Մի այլ կապակցությամբ Ծերուրը գրել է. «Սուլթանը ավերում է կայսրության սահմաններում գտնվող նվաճված նահանգները և նրա բնակիչներին թողնում այնպիսի վիճակում, որ նրանք Հնարավորություն չունենան ապաստանելու: Դա արվում է բնակչության մի մասը տեղափոխելով մի չըբհանց մյուսը, իսկ մնացած խեղճերին թողնելով կատաղած փաշայի տիրապետության տակ, որը վերջնականապես կողոպտում է գյուղի, գավառի բնակիչներին»⁶¹։

XVII դարի թուրք պատմագիր և աշխարհագիր Քյաթիր Չելեբին, նկարագրելով Թավրիզի գրավումը օսմանյան զորքերի կողմից, Հաղորդում է, որ սուլթան Մուրադ IV-ի Հրամանով նրա զինվորները «քանդեցին ու ավերեցին իրանի չաՀի պալատը: Եուկան ամրոցը սպանեցին կրակի մատնեցին, բարեշնտնները և զեղեցիկ շինությունները քարուքանդ արեցին: Այնուհետև սկսեցին ծառերը կտրատել»:

Արձանագրելով նման բազմաթիվ փաստեր, թուրք պաշտոնական տարեգիր-պատմիչը չի դատապարտում այդ բարբարոսությունների հեղինակներին: Ոչ: Նա այդ բոլորը Համարում է սխրագործություններ, որոնք պատիվ են բերում սուլթաններին: Նկատենք նաև, որ նույն հեղինակը, հիշատակելով մեկ դար առաջ թուրքական զորքերի տարած «փայլուն» Հաղթանակների մասին, ամենայն զոհուհակությանը և պարծենկոտությանը գրել է. «Իսլամական (օսմանյան - Մ. Ն.) զինվորները թշնամու անհամա բաղաբներ Հողին Հավասարեցրին և բազմաթիվ ժողովուրդների իրենց ենթարկեցին»⁶²։

Պատմիչ ու աշխարհագրագետ Էվլիյա Չելեբին, խոսելով օսմանյան բանակի՝ զեպի Վրաստան 1647 թ. կատարած արշավան-

քի մասին, բավականությանը նչև է, թե ինչպես տեղի ունեցան զանգվածային կոտորածներ, գերեվարություն և կողոպուտ: «Մեր բանակը, - ուրախությամբ արձանագրում էր նա, - ծայրաստիճան Հարստացավ գերբնեժով և ավարով...: Ավարը տարան Տրապիզոն և վաճառեցին օդուտով»⁶³: Ի զեպ, ինքը՝ Չելեբին ևս, որ մասնակցում էր այդ արշավանքին, ստացավ «նվերներ», որոնց թվում ստրուկ և սարկուհի:

Օսմանյան իշխանությունների ավերիչ ասպատակությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններ է Հաղորդում նաև XVII դարի Հայ անվանի մատնագիր ու բանաստեղծ, Կ. Պոլսի մշտական բնակիչ Երեմիա Քեոմուրճյանը (1637-1695 թթ.): Լայնորեն օգտագործելով թուրքական աղբյուրները, իրենով կատարվող մի շարք իրազարծությունների ակնատես, նա իր արձակ և չափածո զրվածքներում պատկերում է այն վայրագությունները, որոնք իրագործեցին թուրք սուլթանները Հունաստանում, Ուկրաինայում, Հայաստանում և այլուր: Այսպես, օրինակ, նա գրել է, որ 1674 թ., երբ թուրքական զորքերը ներխուժեցին Ուկրաինա, կատարվեցին սարսափելի ավերածություններ. «զբազում գավառը» ավերեցին, «կոտորեցին և վարեցին, ի ղուռիչ մի զգերի ժախեալ»⁶⁴:

XVII դարի նշանավոր կրոնական գործիչ, Պավլով-Աֆոնյան վանքի վանահայր Իսային, ժամանելով Մոսկվա, պատմել է, որ թուրքական զորամասերը Հունաստանում, Սերբիայում և Բուլղարիայում առանց որևէ առիթի սրի քաջեցին 300000 ուղղափառ քրիստոնյա և անթիվ երիտասարդների ու կանանց գերի վերցնելով նրանց ուղարկեցին Անատոլիա, Ասիա, Եգիպտոս: Ուղղափառների քաղաքները, վանքերը և եկեղեցիները Հրդեհեցին ու ավերեցին:

⁶⁰ Մ. Ջ. Ռ. Է. Կ. Գ. Լ. Հայոց պատմության խեղճությունը արդի թուրք պատմագրության մեջ, էջ 124:

⁶¹ Նույն տեղում, էջ 126:

⁶² Թուրքական աղբյուրները Հայաստանի, Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդներին մասին, Կ. Ք, կազմեց Ա. Խ. Սաֆրասյան, Երևան, 1964, էջ 79:

⁶³ Նույն տեղում, էջ 130-131:

⁶⁴ Երեմիա Քեոմուրճյան. Պատմություն Համասոտ Դժ սարքոյ օսմանցոյ թագաւորացն. Աշխատատարությամբ Ժ. Մ. Ավետիսյանի. Երևան, 1982, էջ 49:

Մի սերը տարեգիր արձանագրել է, որ 1690 թ. թուրքական զորքերը Անքրիայում, Մակեդոնիայում և Բուլղարիայում կատարեցին նոր բարբարոսություններ: «Այդ երկրները սալա-տավեցին, եկեղեցիները և վանքերը բոլորովին կողոպտվեցին ու ավերվեցին, տղամարդկանց սրի քաշեցին, կանանց և երիտասարդ-ներին գերեվարեցին»⁶⁴:

Օսմանյան կայսրության մեջ տիրող ծանր վիճակի մասին գրել են անգամ այն թուրք պատմագիր-տարեգիրները, որոնք կապված են եղել սուլթանական արքունիքի Հնա: Այսպես օրի-նակ XVII դարի տարեգիր Բուշի Բեյը իր ապրած ժամանակաշր-ջանի մասին ստիպված է եղել արձանագրել, որ «...աղքատ ու-շաների նկատմամբ ներկայումս կիրառվող ճշտումներն ու բռնությունները տեղ չեն ունեցել ոչ մի ժամանակ և ոչ մի վայ-րում»: Մանր Հարիբի և ժողովրդի նկատմամբ կիրառվող բռնությունների մասին խոսելիս նա բացականչում է. «Թայանե-րը ինչպե՞ս կարող են տանել այս բռնությունները: Երկրի ժողո-վուրդը ինչպե՞ս կարող է ապրել այս պայմաններում»⁶⁵:

Թուրք Հայտնի պատմաբան և բարձրաստիճան պաշտոնյա Աճևեղ-Ջեվհեթ փաշայի արժանազուրկյառն տակ եղել են սուլթա-նական արքունիքի արխիվներից շատ նյութեր և բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր: Խոսելով Թուրքիայի ներքին դրությունների մասին XVIII դարում և նախորդ չրջաններում նա գրել է. «...որոշ ժամանակից ի վեր բռնությունների ու անիրավու-թյունների ամեն սաճմանը անցել էր, և Օսմանյան կայսերական երկրում ուսաները մեծ թշվառության էին ենթարկվել: Իրենց եր-կիրն ու Հայրենիքը թողնելով ցիր ու ցան եղել: Դրանով երկիրն ավերվել, աղապների ու բուերի բնի էր վերածվել...: Երկրի այս աստիճան ավերվածության պատճառը միայն պատերազմները չէին»: Կարևոր պատճառներից մեկն էլ այն էր, ավելացնում է

Հեղինակը, որ աղքատների վրա զրվում էին շատ ծանր Հարկեր, և դրանք գանձվում էին ամենայն բռնությամբ ու դաժանու-թյամբ⁶⁶:

Հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Հայ նշա-նավոր պատմագիր Աբրահամը Երևանցու այն աշխատությունը, որը նվիրված է 1721-1736 թթ. թուրք-պարսկական պատերազմնե-րին: Այսպես, Երևանցին գրում է, որ թուրքական բանակը 1724 թ. Արևանում «այնչափ յարուն թաքեց որ Ձանգու ջուրն կամ-բայժառեց, յարունայ Հոսն ի մէջ քաղաքէն կը բուրէ, ողորմելի քրքիստոնէքն բովանդակ գտուրն քաշեցին, ոչ մնաց բրիտոնայ, անմեղ արդարներըն գերի վարեցին, կուս աղչիկունքն ջրում խեղդեցանայ, այսչար գերի գեաց ի ձեռն օսմանցու: Գերիքն լեց-վեց օսմանցու շատիրներն: Եղավ պղծութիւն, անօրենու-թիւն...»⁶⁷:

Թուրք պատմիչ Ջեյերի-գազն էֆենդին, նկարագրելով Գյանջայի (Գանձակի) գրավումը օսմանյան զորքերի կողմից 1725 թ., նույնպես Հպարտությունը նշել է. «Ելումական բանակի փառապանը դողալով քաղաքում ծածանվեց, առյուծանման զա-ղիները անհավատ ուսփրզիների արյունով քաղաքի փողոցներն ու շուկաները ներկեցին և այդ անհավատների շարիաթի սրով թափված արյունը Ջիհուն գետի նման Հոսեցրին»⁶⁸:

1720-ական թթ., երբ թուրքական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս, երկրի բնակչության Համար ստեղծվեց կատասարո-ֆիկ վիճակ: Այդ մասին աղբրեջանցի պատմաբանները գրել են. «1725 թ. սուլթանական բանակին մեծ կորուստների գնով և տե-ղական թուրքոֆիլ տարրերի օգնությամբ Հաջողվեց գրավել Ազրբեջանի տերիտորիայի զգալի մասը...: Նվաճված Հողերում

⁶⁴ И. С. Достян. Борба сербского народа против турецкого ига... с. 78.

⁶⁵ Թուրքական աղբյուրներ... Վ. Բ, էջ 230.

⁶⁶ Նույն տեղում, Հ. Ա, էջ 277:

⁶⁷ Աբրահամ Երևանցի. Պատմութիւն պատերազմաց 1721-1736 թթ.: Յոսալարան, բնագիր, խմբագրի օրինակ ևi ծանոթութիւններ: Պատ-րաստեց Հ. Ա. Ճեմնեման. Վենետիկ, 1977, էջ 31: Երևանցու գիրքը ավելի վաղ լույս է տեսել ռուսերեն, տե՛ս Ա. Բրաժմ. Ереванци. История воин 1721-1736 гг. Ереван, 1939.

⁶⁸ Թուրքական աղբյուրներ... Հ. Ա, էջ 155:

թուրքական ֆեոդալները Հաստատեցին անտանելի ծանր ուժով: Աշխատավոր բնակչության վիճակը դարձավ աղետալի...: Նվաճողները ստանձնապես անհանդուրժողականությամբ ցուցաբերեցին քրիստոնյա բնակչության նկատմամբ՝ ենթարկելով նրան ամեն տեսակի Հալածանքների ու ստորացումների: Երբվանում և Ենքիում թուրքական իշխանությունները քրիստոնյաներին հրամայել էին կրճքի վրա կրել զեղին տարբերակիչ նշան: Ենքիի քրիստոնյաները ուսուսական ցարին ուղղած նամակում Հայտնում էին, որ նվաճողները այրեցին ձեռագրեր, գրքեր և եկեղեցիներ: «Բազմամիով մարդիկ, — գրում էին շեքինցիները, — իրենց Հավատի Համար կոտորվեցին սրերով»: Խաղաղ բնակիչների ոչնչացումը, քաղաքների և գյուղերի կողոպուտը ու ավերումը, քրիստոնյաներին բռնությամբ իսլամացնելը առաջ բերեցին բնակչության խիստ ղժգոճությունը, ուժեղացրեցին նրա պայքարը ընդդեմ նվաճողների»⁶⁹:

Ձեռնարկելով մեծ արշավանք դեպի Արևելյան Հայաստան ու Պարսկաստան՝ օսմանյան զորքերը 1721 թ. գրավեցին «բազում քաղաք և գյուղ և ապրակ և քանդեալ կործանեցին ամուր արարանք, և գերի վարեցաւ ազգս Հայոց մեծ է և մինչև ի փոքունս, և եկեղեցիք և վանորայք, յանապատք մտեալ, բազում սրբութիւնս՝ գիրք և պատուական խաչեր և աւետարանք և այլ ամենայն ըսպատք զարդուց սուրբ եկեղեցեաց և վանորից աւար և գերի տարեալ, և շատ վարդապետք և կարգաւոր քահանայք, սարկաւազունք և աշխարհականք որպէս ոչխարի զենեցին և ի սպանող վարեցին...»⁷⁰:

Թուրք սուլթանների նման զազանությունների մասին Հարուստ Նյութ են պարունակում նաև XV դարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարանները⁷¹:

Օսմանյան կարգերի իսկական էությունն է խոսում այն հանգամանքը ևս, որ պետություն հովանավորությամբ երկրում ստեղծվել էին Հատուկ շուկաներ (բազարներ), ուր կատարվում էին գերի վերցրած երեխաների, աղջիկների, կանանց ու աղամարդկանց առևտուր: Կ. Պոլսում (Ստամբուլում) գործող այդպիսի մի շուկայի մասին դպիր Սիմեոն Լեհացին, որպես ակադեմիկոս, պատմում է. «զաղջկունս և զմանկունս, զտղայս և զաղուորներն կանայս տէլլարնին առեալ ի ձեռս զնոսա՝ շուր ամէին և ձախէին որպէս զձի և զջորի. ևս զայս ժողովեալ ի տեղի ինչ կամ ի ժոյտանի՝ իրրեւ զոչխարս ի փարտսի: Իսկ զնոցոս եկեալ բանային զերեսս և զծոցս կոյս աղջկանց և զամենայն մարմինս նոցա շօշափէին յոտաց մինչ ի գլուխ, զի մի քոս, խոց կամ այլ ինչ սպի կամ վէր ունիցին: Եւ նոքա լուռ և անմտունչ կային. և զորս Հաճէին՝ զնէին. և որոշեալ ի Տօրէ, ի մօրէ կամ ի քեւրց և յեղբարց բաժանեալ առեալ տանէին ի տուն: Եւ ևս տեսեալ զայս ամենայն աղէտս ցաւագինս, զոր բնաս չէի տեսեալ, ցաւաց դուլս իմ, դողաց սիրտ իմ, խոռովեցաւ անձն իմ և ամենայն ոսկերք իմ սասանեցան»⁷²...

Ահա մի պերճախոս փաստ ևս օսմանյան պետության «քաղաքակրթական միտիայի» մասին:

1731 թ. կարնանը սուլթանը Անդրկովկասում գտնվող իր զորահրամանատարին հասցեագրված ֆերմանում գրել է. «Գյանջայի երկրամասի Հարևանությամբ ապրող անիծյալ սղնախցի (զարաբազցի) Հայերն արդեն մի քանի տարի է, որ զաղաբել են օրինական Հարկ վճարել և սկսել են Համառել իրենց անհնազան-

⁶⁹ И. А. Гусейнов, З. И. Ибрагимов, А. Н. Гулиев и др. История Азербайджана. Т. I, Баку, 1958, с. 310-311.

⁷⁰ Մատենադարան, N 7534 ձեռագրի Հիշատակարանը, Մանր ժամանակագրություններ, 13-18 զգ. Կ. 2. կազմեց Վ. Ա. Լավրբյան. Երևան, 1956, էջ 438:

⁷¹ Տե՛ս մեծ դարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ 1401-1450. կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մաս Ա, Բ, Գ. Երևան, 1955-1967.

⁷² Սիմեոն զպրի Լեհացոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն և իշխատակարանք: Ուսումնասիրեց և հրատարակեց Լ. Ներսէս Ալիկեան. Վիեննա, 1936, էջ 13-19:

դուխյան մեջ: Ուստի չարիամթի օրենքների համաձայն անհրաժեշտ է ոչնչացնել նրանց իրենց արարքների համար»⁷²: Սրան հետևում էր հրաման իր զորամասով շարժվել «անհավատների» դեմ: Ահա այսպես էին մտածում ու գործում «քաղաքակրթութուն տարածող» սուլթանները:

XVIII դարի կեսերին Թուրքիա այցելած գերմանացի ճանապարհորդ, թրքափրական հակումներ ունեցող Մ. Օտտերի գրքում կարդում ենք. «Թուրքերը մի առած ունեն, որն ասում է, թե որտեղից էլ անցնի օսմանլին, այնտեղ բոլորովին խոտ չի բուսի...: Ջորքերը ամայացնում են այն վայրերը, որտեղ որ նրանք գտնվում են լինի դա կայսրության ներսում, թե դրսում: Այդ է պատճառը, որ իրենց տիրացած գեղեցիկ երկրամասերը մեծ մասամբ ոչ բնակեցված են և ոչ էլ հողերը մշակված»⁷³:

1760 թ. Արևմտյան Հայաստան այցելեց Հայ լուսավորական շարժման ականավոր ներկայացուցիչ Լովսեփ Էմինը: Նա խորը վշտով ու դայրությունով արձանագրել է այն հանգամանքը, որ Հայերը ամենուրեք ենթակա են դաժան ճնշումների ու կեղեքումների, որ «գյավուր» քրիստոնյաները ընդհանրապես գտնվում են ստրկական ու ճորտական վիճակում: Նա միաժամանակ նշել է նաև այն, որ տեղի Հայ ազգես Հոգևորականները, հանդես բերելով զարմանալի ստրկամտություն, քարոզում են իրենց «հոտին»: Հնազանդ մնալ թուրք փաշաներին և Հույսը դնել միայն Քրիստոսի կողմից սպասվող փրկության վրա⁷⁴:

Նույն թվականին Լիմ անապատում գրված մի ձեռագրի հիշատակարանում առված է. «Ե դաւն և ի նեղ ժամանակիս, որ յամենայն կողմանէ նեղիմք յանօրինաց Հարկապահանջութենէ, ի սպանութենէ, ի գերութենէ և յայլ անասելի և անպատմելի պա-

տուհասէ, որ այս Հ (70) տարի է իբրև արեան ծովու նման կուծիպ ըովանդակ աշխարհս»⁷⁵:

XVIII դարի 70-ական թվականների Հայ ազատագրական շարժման ականավոր գործիչներից մեկը՝ Մովսես Բաղրամյանը մեծ ցավով գրում էր, որ Հայաստանը ավերվել ու անապատ է դարձել, ժողովուրդն անասելի ճնշումներից ու կոտորածներից խույս տալու համար փախել և պատսպարվել է լեռներում:

Ո՛ր քաղաքք, ո՛ր շէնք, և ո՛ր զղեակք ամբողջ մնացին՝ որք ոչ խորտակեալ քակտեցան.
զի միանգամայն թէ գիւղօրէք, թէ աւանք և ագարակք վեր ի վայր կործանեցան...
... Որպէս երկիր անպատեալ և անջրտար, այնպէս ամէն աշխարհս մեր կորպացեալ խողանացաւ:
Ջի առ ՚ի վեր չարաշշուկ աղմուկ շփոթին ո՛ր մարդ գտանիւր, և ո՛ր մշակ, որ զերկիրս գործէին, այլ համակ խորշիլ և խոյս տալ ի լլկողացն յայտ և ի փափարս լիբանց խուճապէին⁷⁶:

Կանգ չառնելով մյուս ականատեսների՝ նման բազմաթիվ վկայությունների վրա կարևոր ենք համարում նշել, որ նշանավոր թուրքագետ Ջ. Համմերը նույնպես արձանագրել է այն վայրագությունները, որոնք տեղի ունեցան XVI-XVII դարերում Օսմանյան կայսրության մեջ: Այսպես, օրինակ, նա գրում է, որ Այստրիայում 1532 թ. թուրքական զորամասի հրամանատար Քյազիմբեգը դաժանորեն սպանում էր երեխաներին ու ձեռքերին, աղջիկներին ու տղաներին ձեռքից կապած քարը էր տալիս փողոցներով, այրում գյուղեր ու շուկաներ⁷⁷: 1638 թ. սուլթան Մու-

⁷² Акты, собранные Кавказскою археографическою комиссиею. Т. 2. Тифлис, 1868, с. 1093.

⁷³ Մ. Ջ ո ս է լ ա լ յ ա և ն յ Վ. էջ 141:

⁷⁴ Life and Adventures of Emin Joseph Emin 1726-1809. Written by Himself. Second Edition. Calcutta, 1918, p. 141-142.

⁷⁵ Մատենադարան, ձեռագիր N 4982, էջ 349ա:

⁷⁶ Նոր տեղակի որ կոչի Թողղարկ. Մարտոս, 1772, էջ 18:

⁷⁷ Joseph von Hammer-Purgstall. Geschichte des Osmanischen Reiches. 2 Band. Pest, 1840, S. 91.

բազի հրամանով Բաղդադում օսմանյան զորքերը կատրեցին ափելի քան 30000 մարդ⁷⁹:

Համները հատկապես մեծ զայրույթով է խոսել Օսմանյան կայսրությունում կատարվող մանկահավաքների մասին: Նա ահավոր ողբերգություն էր համարում այն, որ սուլթանները, քրիստոնյա երեխաներին բռնի կերպով դարձնելով ֆանատիկոս մահ-մեղականներ և քնդզրկելով ենիշերական բանակում, նրանց օգտագործում էին իրենց հարագատ ծնողների և ժողովրդի դեմ: Հայտնի է, թե ինչպիսի վայրագություններ են կատարել ենիշերները ամբողջ կայսրության մեջ:

Օսմանյան պետության իսկական էությունն է խոսում նաև այն իրողությունը, որ Հպատակ քրիստոնյաները թուրքական իշխանություններին հաճախ որպես հարկ պիտի տալին նաև երիտասարդ կանանց ու տղամարդկանց: Ականավոր պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, հենվելով բազմաթիվ ու բազմատեսակ փաստերի վրա, ցույց է տվել, որ օսմանյան պետության մեջ «հարկերն ու տուրքերը վերցնում էին ոչ միայն պարենով, փողով կամ աշխատանքով, այլև՝ մարդկանցով»⁸⁰: Թուրքագետ Ա. Սաֆրաստյանը գրել է, որ սուլթանին հարկատու քրիստոնյաները Մինգրելիայում (Եգիպտոս) «այլ հարկերի հետ միասին, իբրև «հարկ», ամեն տարի պետք է սուլթանական արքունիք ուղարկեին որոշ թվով կույս աղջիկներ ու գեղեցիկ պատանիներ»⁸¹:

Մի շարք հեղինակներ, ցանկանալով դրական խոսք ստել Օսմանյան պետության մասին, նշում են այն հանգամանքը, որ թուրք սուլթանները իրենց ենթակա երկրներում պահպանեցին քրիստոնյա բնակիչների համայնքները, հանդուրժեցին նրանց գոյությունը: Բայց, ինչպես արդեն քանիցս նկատված է պատմագրիտական գրականության մեջ, այդ արվել է միայն և միայն մի

նպատակով՝ ունենալ «մշտական կթան կով» և չզրկվել մեծածավալ կեղեքումների ու թալանի Հնարավորությունից: Այդ հանգամանքը դեռևս XVII դարում նշել է Թուրքիա այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Միշել Ֆերուրը, գրելով այսպիսի տողեր. օսմանյան սուլթանները «իրենց երկրում քրիստոնյաներին և հրեաներին հանդուրժում են այն պատճառով, որ նրանցից ափելի օգուտ են տանում, քան իրենց կրոնակիցներից»⁸²:

Հարկ է նկատել, որ XVI-XVIII դարերում օսմանյան պետության կողմից Հայաստանում և Հարևան երկրներում անորինակ բարբարոսությունների մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում ոչ միայն Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, այլև Հայ շատ ժամանակագիրներ, տարեգրքեր ու պատմիչներ:

IV

Ինչպիսի՞ գործունեություն ծավալեց «բաղաբակիրթ» օսմանյան պետությունը XIX դարում և XX դարի սկզբներին՝ իր գոյության վերջին շրջանում: Համառոտ կերպով կանգ առնենք նաև այդ հարցի վրա:

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության քայքայումը և անկումը կանխելու, ինչպես նաև սուլթանական պետության երբեմնի հզորությունը վերականգնելու նպատակով Բ. Գուլը XIX դարի սկզբին և հաջորդ տասնամյակներին փորձեց իրականացնել մի շարք ռեֆորմներ, որոնք, սակայն, հիմնականում վերաբերելով բանակին, պետական կառուցվածքին ու վարչական բեռնյիթի հարցերին, չփոխեցին, չբարելավեցին Հպատակ ժողովուրդների ու ազգությունների ծանր վիճակը: Սուլթանական բռնապետության կեղեքումները, դժման հայածանքներն ու կոտորածները շարունակվեցին նոր թափով:

Ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ Օլիվիեն, որ XIX դարի սկզբին այցելել էր Կրեստ կղզի, գրում էր, որ այնտեղի

⁷⁹ Նույն տեղում, հ. 3, էջ 185:

⁸⁰ Ա չ ո ս ա լ զ ո վ հ ա ն ե ի ո ս ն Գրագրներ Հայ ազատագրական մարտի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 18-19:

⁸¹ Թուրքական աղբյուրներ Գ, Էվլիյա Չելեբի, Երևան, 1967, էջ 309:

⁸² M. F e b u r e. L'État présent de la Turquie. Paris, 1675, p. 217.

«քրիստոնյաների հունձքը շարունակ հափշտակում է թուրք կառավարիչը, սեփականությունը գրավում է փաշան, մինչդեռ երկրիները մշտապես անարգում են ու ծնծում դագանակով... և այդ բոլորը տեսնելով ու ապրելով հույն երկրագործները բնականաբար չունին եռանդ. ցանկություն զարկ տալու արդյունագործությունը, հողը մշակելուն, քանի որ արդյունքը պետք է անցնի իրենց ատելի տարրի ձեռքը...: Նրանց՝ քրիստոնյաների դաշտերը ավերվում են օրեցօր, ձիթենին փչանում է, խաղողը ոչնչանում»⁵⁷:

Հունական ազատագրական շարժման պատմությանը նվիրված իր գրքում Գ. Աբըը նշել է, որ XVIII դարի վերջին և XIX դարի սկզբներին Հունաստան ճամփորդած ականատեսները շեն պատկերացրել, թե որևէ այլ երկրում «կարող է գոյություն ունենալ այդքան վայրենի դեպատիզմ և այդքան դժամ ստրկություն»⁵⁸:

1803 թ. ռուս հյուպատոսը Պելոպոնեսից գրել է, թե այնտեղի կառավարիչները գիշատիչ գայլեր են և նշանակվում են մեկ տարով, որպեսզի կողոպտեն խեղճ ուսային և բոլոր նրանց, ովքեր չեն կարող դիմադրել⁵⁹:

Օսմանյան պետության բարբարոսական քաղաքականության մասին կարևոր տեղեկություններ է հաղորդել XIX դարի սկզբին Հունաստան, Եգիպտոս և Պաղեստին այցելած Փրանսիացի հայտնի գրող և քաղաքական գործիչ Շատորբիանը, որի ճանապարհորդական նոթերը հատվածաբար հրատարակվեցին իր ժամանակ ինչպես Փրանսիական մամուլում, այնպես էլ «Вестник Европы» ռուսական նշանավոր Հանդեսում: Ահա մի քանի քաղվածք այդ պարբերականից: Խոսելով Հունաստանի մա-

⁵⁷ Մ. Վ. Գ. Բ. Կ. Ե. Ն. Հայկական շարժման նորագաղտությունը. Կ. Ա. Ժրն. 1912, էջ 115:

⁵⁸ Г. А. Р. III. Этерическое движение в России. Освободительная борьба греческого народа в начале XIX в. и русско-греческие связи. М., 1970, с. 49.

⁵⁹ Նույն տեղում, էջ 48:

սին, հուշագիրը ընդգծում է. «Ամենուրեք հրով ու սրով ավերված գյուղեր, քաղաքների ամաչացած թաղամասեր: Տասնհինգ մղոն տարածություն միա մենք չտեսանք ոչ մի բնակավայր: Թալանը, այլևայլ բռնությունները ոչնչացրել են հողագործությունը: Ամենավերջին գյուղական աղան շատ հեշտությամբ կարող է դուրս բշել հույն բնակչին իր սեփական խրճիթից, խլել նրա կնոջը, երեխային, սպանել նրան...: Անբախտ Հունյեր, կորցնելով Հանգրստությունը, ստիպված թողնում է իր Հայրենիքը և փորձում հանգստություն գտնել հարևան երկրներում: Բայց իդուր: Ամենուր նա Հանդիպում է փաշաների և կաղիների, ամենուրեք՝ և՛ Հորդանանի ավազուտներում, և՛ Պամփրայի անապատներում»⁶⁰:

Եգիպտոսում տիրում է ահավոր չքավորություն: Զինված ավազակային հրոսակախմբերը թալանում և ավերում են: «Այստեղ մենք տեսանք, թե ինչպես են այբանացիները որսում (գերեվարում) երեխաներին: Նեղոսի ստորին հոսանքում Ռոզետայից մինչև Կահիրե ընկած շրջանի 150 գյուղեր ամբողջովին ավերված են: Զգալի տարածք գետաբերանում մնացել է անմշակ: Ծեխյահների (գյուղացիների) մեծ մասը դատապարտվել է մահվան»⁶¹:

Շատորբիանը յուրով գույներով է նկարագրում նաև երուսաղեմի վիճակը: Թուրքական իշխանությունները վարում են սոցիալական կեղեքման և ազգային ճնշման դժամ քաղաքականություն: Երուսաղեմ քաղաքի տները, գրում է նա, այնքան խղճուկ և ողորմելի են, որ ակամայից Հարցես սալի քեզ, թե «արդյո՞ք գրանք գերեզմաններ չեն անապատներում: Քաղաքում լուսվոյն է տիրում, ոչինչ չի լսվում, "ТОЛЬКО ИНОГДА ОТДАЕТСЯ ТОПОТ ДИКОЙ КОБЫЛЦЫ. ЭТО ЯНЫЧАР ВЕДЕТ ГОЛОВУ БЕДУИНА ИЛИ СКАЧЕТ ГРАБИТЬ ФЕЛЛАХА»⁶²:

Մորեսի (Հունաստան) մի շարք բերդերում տեղավորված թուրքական կայազորների դիմորները, զեկուցում էր տեղի ռուսական հյուպատոսը 1815 թ., «Թալանում ու սպանում են և ամեն

⁶⁰ Вестник Европы, 1801, сентябрь, N18, с. 82.

⁶¹ Նույն տեղում, էջ 85:

⁶² Նույն տեղում, էջ 87:

ինչ մնում է անպատիժ: Այստեղ գոյություն չուներ ո՛չ իշխանություն, ո՛չ օրենք»⁵⁰:

XIX դարի առաջին երկու տասնամյակներում աճավոր բարբարոսություններ կատարվեցին Սերբիայում, Մոլդովայում ու Վալախիայում: Ազատագրական շարժումը արմատախիլ անելու նպատակով թուրքական սուլթանները թալանեցին և ավերեցին Հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, սրի քաշեցին կամ գերեզմանեցին տասնյակ Հազարավոր մարդկանց⁵¹: Հանրաճայտ է, թե ինչպիսի վայրագություններ տեղի ունեցան Հունաստանում, երբ նույն ժողովուրդը Հերոսական ազատագրական պայքար էր մղում օսմանյան տիրապետության դեմ:

Յրանախցի ճանապարհորդ Շտոլ Դեվալը, որ 1825-1826 թթ. եղել է Կ. Պոլսում և Հունաստանում, ընդհանրացնելով իր տպավորությունները, գրել է, որ թուրքական պետությունը «իր բարեկեցությունը և Հզորությունը Հիմնում է տգիտության և բարբարոսության վրա, մարդկանց դարձնում է անասուններ, որպեսզի ունենա ստրուկներ»: Թուրքիան, շարունակում էր նա, մի երկիր է, ուր «գնսպտոնիզմը և զազանությունը վաղուց արդեն պայքարում են անկախության և լուսավորության դեմ»: «Երկու տարի թուրքիայում» վերնագիրը կրող իր Հուշերում նա բերում է բազմաթիվ փաստեր այն մասին, թե ինչպիսի բարբարոսությամբ թուրք սուլթանները ավերում են Հունական քաղաքները, գյուղերը և կոտորում բնակչությունը⁵²:

Գերմանացի գիելդրական, Հետագայում նշանավոր գորավար Մոլտկեն, որը 1835-1839 թթ. գտնուում էր Թուրքիայում, իր "Briefe aus der Turkei" աշխատության մեջ պատկերել է երկրի քաղաքների կողոպուտված ու ավերված վիճակը: «Թուրքական քաղաքները առհասարակ ամառային կերպարանք ունեն... Ավե-

րումներ կատարել է ոչ այնքան ժամանակը, որքան մարդկային ձեռքը»⁵³ (Հասկանալի է, որ «մարդկային ձեռք» ասելով Հեղինակը նկատի ունի բուրքական իշխանություններին: Ավելացնենք, որ նույն վիճակում էին գտնվում նաև գյուղերը):

Դարասկզբին Արևմտյան Հայաստան այցելած Փրանսիացի դիվանագետ Ա. Ժորժերը գրել է. «Այս երկրում Հողագործը իր զուր է սերմեր ցանում: Հունձը խում են դեռ չհասունացած: Ավազակների կատաղությունը և նահանգում իշխող փաշաների հարստանալու թյունից ազատվելու համար գյուղացին ստիպված է լքել դաշտերը, փախչել ընտանիքով և իր հոտերով: Այս դժբախտ երկրում գոյություն չուներ ո՛չ Հայրենիք, ո՛չ ապահովություն, ո՛չ Հանգիստ»⁵⁴:

Մշո գավառում տիրող իրազրույթունը, ինչպես վերևում ասվեց, նշանավոր ազգաբազեա Գ. Սրվանձտյանը 1864 թ. պատկերել է հետևյալ բառերով. «Արյան հոսում, բնչից ավար, ընտանյաց բռնաբարություն, եկեղեցոց կողոպուտում, օրինաց եղծում, կենաց զրավում»⁵⁵: Քղի գավառի Հայ բնակչության դրության մասին 1869 թ. գրված մի փաստաթղթում ասված է. «Ան ժողովուրդը բարոյապես ու ֆիզիկապես կորսվելու վրա է, իրենց կյանքն ալ, ստացվածքն ալ վտանգի մեջ է ամեն օր, կը սպանվին, կը վերավորվին, կը կողոպուտվին, կը Հարստահարվին»⁵⁶:

Արևմտահայության կրած ճնշումների ու Հայամանքների մասին կարևոր տեղեկություն է Հայտնում Փրանսիացի գիելդրական Յրիզրիխ Միլլինգենը, որը 1853-1864 թթ. ծառայել է թուրքական բանակում որպես գումարտակի Հրամանատար, կրելով Օսման Սեյֆի բեյ անունը: Նա մասնավորապես կարևոր փաստեր է բերում այն մասին, թե ինչպիսի կամայականությունների են

⁵⁰ Г. А. р. ш. Этерическое движение в России... с. 44.

⁵¹ Ю. А. Петросян. Османская империя. Могущество и гибель, с. 178-179.

⁵² Два года в Константинополе и Море (1825-1826)... соч. III. Д. Пер. с франц., СПб., 1828.

⁵³ Բաղվածքն քառ Մ. Վարանդյանի «Հայկական շարժման նախապատմությունը» գրքի (Հ. Ա. էջ 115):

⁵⁴ Ն ո վ Հ. Հ ա կ ո թ յ ա ն. Ուղեգրություններ, Հ. Ջ. Նրևան, 1934, էջ 150.

⁵⁵ Արժիկի Տարևոն, 1864, N1:

⁵⁶ Դիվան Հայոց պատմության. գիրք ԺԳ. Թիֆլիս, 1915, էջ 174:

ենթարկվել Հայերը Բ. Դուան Մեծ վեզիր Ծուազ փաշայի կողմից⁵⁶ :

Ավելի ուշ՝ 1876 թ., էջմիածնի կաթողիկոս Գեորգ Չորրորդը ստացավ մի խնդրագիր, որը ստորագրված էր 4099 արևմտահայերի կողմից: Այնտեղ, նորից հիշեցնենք իմիջիայլոց, ասված էր. «Զօր ու գիշեր տազնապի մեջ ենք. դառնորեն տառապում ենք գավառական պաշտոնյաների, Հարկահանների, կառավարիչների և այլ բռնակալների ձեռքին, ընդհուպ մինչև այն, որ նրանք անպատվում են մեր եկեղեցական հովիվին, մեր կանանց Համեստությունը, մեր աղջիկներին պատիվը, Հեղում են մեր երիտասարդներին ու ծերերի արյունը, անարգում են մեր տաճարի ու ծեսերի սրբությունը»⁵⁷:

Ռուսաստանի կայսր Ալեքսանդր Երրորդին ուղղված իրենց դիմումի մեջ Մկրտիչ Նորմյանը (Նորմյան Հայրիկը), Նորեն Հովհաննիսյանը և Հայրապետ Նանճյանը 1882 թ. փետրվարի 10-ին գրում էին. «Հայաստանի Վանի վիլայիթի Հայ քրիստոնյա բնակչության անունից, ի լրացումն մեր խոնարհ դիմումի, որ Հղված էր Զերդ Մեծությունը 1880 թ. մարտի 16-ին մեր ժողովրդի աղետալի վիճակի վերաբերյալ, նորից կրկնում ենք մեր խնդրանքը: Մենք Համարձակվեցինք վերստին դիմել Ձեզ այն պատճառով, որ ներկայումս Հայ ժողովուրդը գտնվում է կործանման եզրին, քանզի վիճակը անտանելի է և Հուսահատական: Փոխանակ այն բանի, որ Բնույնի դաշնագրի Հայոց Հարցին նվիրված 61-րդ Հոդվածը վերջ դնեք անտանելի Հալածանքներին, նոր ճնշումները Հաստատում են, որ եթե այսպես շարունակվի, ապա այդ Հոդվածը կդառնա մեր կործանման պատճառը: Բնույնի դաշնագրի

⁵⁶ La Tarquie sous le règne d'Abdul Aziz (1862-1867) par Frederick Millingen (Osman-Seïfi-Bej). Paris, 1868, p. 173-174. Տե՛ս նաև՝ Մ. Գ. Ն եր ր ս յ ա ն Ն. Հայ ժողովրդի պատասխանական պայտար թյուրքական բռնապետության դեմ. 1850-1870 թթ., Երևան, 1955, էջ 124: Մ Հրատ. ան՝ Հայ ժողովրդի պատասխանական պայտարը թուրքական բռնապետության դեմ. 1850-1890 թթ., Երևան, 2002, էջ 94:

⁵⁷ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, փաստաթուղթ թ: 2:

կնքումից մինչև այժմ Բարձր Դուան կողմից չի նկատվում որևէ ցանկություն Հայաստանում արգարություն ու Հավասարություն Հաստատելու ուղղությամբ: Ընդհակառակը, կենտրոնական կառավարական Հիմնարկներում միանգամայն անտեսվում են քրիստոնյաների շահերը, արմատավորվում են մոլեռանդություն ու ատելություն նրանց նկատմամբ, որի Հետևանքով կառավարական պաշտոնյաները, ավազակախմբերը և ընդհանրապես բոլոր կեղեքիչները, էլ ավելի խրախուսված ծավալում են իրենց ոճրագործությունները»⁵⁸:

Թուրք-օսմանյան պետությունը իր իսկական էությունը նորից բացահայտեց այն տարիներին, երբ արյան մեջ խեղդեց բուլղար ժողովրդի ազատագրական շարժումը: 1875 թ. օսմանյան տիրապետության դեմ ապստամբություն բարձրացրեց Բուսիայի ու Հերցեգովինայի քրիստոնյա բնակչությունը: Մեկ տարի Հետո բռնկվեց Համաժողովրդական ապստամբություն Բուլղարիայում, որը սակայն ճնշվեց ամենայն դաժանությամբ: «Ֆիլիստինեի սանջակում մի քանի օրվա ընթացքում չեբեքեզները և բաշիրոսկունները (Թուրքիայի անկանոն Հոծեկագորք) սրի քաշեցին մոտ 15000 մարդ: Կասորածը տեղի էր ունենում ամեն տեսակի տանջանքներով և անարգանքներով»⁵⁹:

Այս ողբերգական անցքերի մասին գոյություն ունի Հարուստ գրականություն ուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, բուլղարերեն և այլ լեզուներով, ուստի Հարկ չկա կանգ առնել դրանց վրա: Սակայն այնչդր չեմ համարում այստեղ հիշել, թե ինչ է գրել ուսու Հանրահոգի գրող Յ. Մ. Դոստունյանի Բուլղարիայում կատարված շարքարտությունների մասին: Միայն մի քաղվածք. «Տանյակ, Հարյուր Հազարավոր քրիստոնյաներ ոչնչացվում են երկրի երեսից, ոչնչացվում են արմատապես, իսպառ: Մահացող եղբայրների աչքի ստաջ անարգվում են

⁵⁸ Архив внешней политики Российской империи (далее - АВПРИ), Главный архив, А. 119, л. 50.

⁵⁹ История дипломатии. Т. 2, М.-А., 1945, с. 28.

նրանց բույրերը, մայրերի աչքի առաջ վեր են նետում նրանց մանկիկներին և որում են հրացանների սվինների վրա: Ավերվում են գյուղերը, եկեղեցիները, բնաջնջվում է ամեն ինչ: Եվ դա կատարում է վայրենի Հորդան քաղաքակրթության ռեներմ թշնամին: Դա սովորական ավազակների Հրոսավախումբ չէ... ո՛չ, դա սիսեմ է, դա Հսկայական կայսրության գործելակերպ է: Զարգարանները գործում են միևնույն կերպով և պետության տիրակալներին, Հենց սուլթանի կարգադրություններով»¹⁰⁰:

Դոստոևսկին գայրույթով էր խոսում նաև եվրոպական պետությունների Հանցավոր անտարրերության մասին: Եվրոպացիները, որ իրենց երկրներում վերացրին բռնապետությունը և ազդարարեցին մարդկանց ազատությունն ու իրավունքը, այժմ «երես են գարձում միլիոնավոր գոթախարարամեներից»:

Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի հրամանով, ինչպես նշեցինք, Թուրքական իշխանությունները 1890-ական թթ. իրագործեցին նոր զանգվածային կոտորածներ՝ ցեղասպանություն Արևմտյան Հայաստանում: 1894-1896 թթ. ամենավայրագ ձևով սրի քաշվեց 300000 մարդ, կողոպտվեց ու ամառացվեց Արևմտյան Հայաստանի մեծ մասը:

Արյունարբու փառիչակի կազմած ծրագրի Համաձայն Թուրքական զորքերը և նրանց միացած ավազակային Հրոսակախները Ձեքի փաշայի հրամանատարությամբ 1894 թ. արշավեցին Սասուն, որի Հետևանքով սրի քաշվեց շուրջ 10000 մարդ, թալանվեցին ու ավերվեցին տասնյակ գյուղեր ու ավաններ: Հաջորդ տարիներին՝ 1895-1896 թթ. Համբուհյանուր կոտորածներ տեղի ունեցան ամբողջ Արևմտյան Հայաստանում: Սուլթան Աբդուլ Համիդը ջատկանափակվեց սովորական ջարդերով: Նա իրագործեց իր նախորդ մշակած ծրագրերը, որպեսզի դրանով խկվերացնի Հայկական Հարցը: Ահա մի քանի վկայություններ կատարված բարբարոսությունների մասին:

¹⁰⁰ Ф. М. Достоевский. Полное собрание сочинений в 30-ти томах. Т. 23, А., 1981, с. 61-62.

Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսը Վանում Ֆիլիպ Գեբրին 1894 թ. նոյեմբերի 15-ին զեկուցում էր, որ Թուրքական զորքերը Սասունում կատարել են սոսկալի վայրագություններ: «Գեկեղուզանում շատ երիտասարդների ձեռքն ու ոտքը կապել են, շարել կողք կողքի, վրաները ցախ թափել ու ողջողջ այրել»: Մի այլ գյուղում «մոտ վաթսուհ երիտասարդ կանանց ու աղջիկների մտքերը են եկեղեցու մեջ: Զինվորներին թույլ են տվել նրանց Հետ վարելի ինչպես կամենան, իսկ դրանցը Հետ սպանել են բուլդոզերով... Նավթը օգտագործել են անհրեյ իրենց բնակիչներով բռնելու Համար: Բիթլիսում մի զինվոր պատմել է, որ ինքը տեսել է, թե ինչպես բռցերի միջից փակչող մի փոքր սղա զինվորի սվինով Հետ է նետվել կրակի մեջ»¹⁰¹: Նույն թվականի նոյեմբերի 26-ին Ռուսաստանի զլխավոր հյուպատոսը Էդրոտմում Վ. Մաքսիմովը գրել է, որ սուլթանի զինվորները սպանել են անգամ մանուկներին և «իրենց անասնական Հակումները բավարարելով անգթորեն ոչնչացրել կանանց ու աղջիկներին»¹⁰²:

Կոտորածները դարձան Համատարած 1895-1896 թթ.: Մարզիկանի Հայերը Ռուսաստանի հյուպատոս Նալոտովին ուղղված դիմում-նամակում 1895 թ. նոյեմբերի 9-ին գրել են. «Նոյեմբերի 3-ը, ուրբաթ օրը, մեր քաղաքի Համար սև օր դարձավ, վշտալի ու սարսափելի օր: Այդ օրը Թուրքիան իր արյունոտ պատմությունը Հարստացրեց ևս մի «փառավոր» էջով՝ գրված սև տառերով ի սոսկումն և ի վրդովմունք Համայն քաղաքակիրթ աշխարհի: Թուրքիան մի անգամ ևս իր արյունոտ զահն օծեց բազմաթիվ անմեղ քրիտոնյաների արյամբ»: Հետաքրքիր է, որ նամակում նախազուգացվում էր. «Բացառված չէ, որ Թուրքական կառավարությունը իրեն Հատուկ անամոթություններ փորձի միտել իր մեղքը և այդ ծանր իրազարձությունների ողջ պատասխանատվությունը բարդի Հայերի վրա: Բայց ամեն զեպքում մենք պատրաստ ենք ապացուցելու, որ կոտորածի կազմակերպի-

¹⁰¹ АВПРИ. Посольство в Константинополе, д. 3135.

¹⁰² Նույն սեղում, գ. 3176, ք. 45:

չը կառավարութիւնն է: Մենք ունենք բազմաթիւ Հաճաստի փաստեր և անհերքելի ապացույցներ, որոնք օրվա լուսի պես պարզ են և կարող են Հաստատել, որ կոտորածը կանխամտածված գործողութիւնների Հետևանք է...: Ողորմած տեր, մենք ներկայումս բոլորովին գլուխներս կորցրել ենք, չգիտենք ինչ անենք: Մեր Հույսը միայն դուք եք»¹⁰³:

Յրանսիական «Դեղին զիբրք» փաստաթղթերի Հայտնի ժողովածուում կարդում ենք. «1895 թ. վերջին 1896 թ. սկզբին, կես տարվա ընթացքում, Փոքր Ասիայում, Հայաբնակ բոլոր քաղաքներում ու գյուղերում, տեղի ունեցան կազմակերպված զարհուրելի զանգվածային կոտորածներ, որոնց Հանդեպ խամբեցին նույնիսկ Սասունի գազանութիւնները»¹⁰⁴:

Բնորոշի ուսական գլխավոր Հյուպատոսի 1898 թ. Հուլիսի 23 թվակիր զեկուացաբում ստված էր. «Չնայած թուրքերի բազմիցս տված խոստումներին՝ չհալածել Հայերին սոսկ նրա Համար, որ նրանք Հայ են, ճշուճները և Հալածանքները շարունակվում են Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում», իսկ Բ. Դուռը, խրախուսելով տեղական իշխանութիւնների ջարդարարական գործունեութիւնը, ձգտում է ստիպել Հայերին դիմել գաղթի¹⁰⁵: Խոսելով 1896 թ. Ստամբուլում տեղի ունեցած Հայերի ջարդի մասին, թուրք լիբերալ-պատմաբան Օսման Նուրին գրել է. Այդ ջարդը «մի ահարկու եղեռն էր մարդկութիւնի դեմ: Իսկ այդ եղեռնի պատճառը Հանդիսացողը, անկասկած, նույն սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդն էր»¹⁰⁶:

Սուլթան Աբդուլ Համիդի մասին Անատոլ Յրանսը արտահայտվել է այսպես. «Սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը մի Հրեշ է, որը մշտապես զոգում է իր խղճուկ ամենազորութիւնի մեջ և, սարսափելով իր իսկ ոճրագործութիւններից, իրեն Հանգստաց-

նում է նրանով, որ նոր ոճիրներ է գործում. 1893-ից մինչև 1896 թ. նա կախել ու ողջակիզել է 300 Հազար Հայերի և այդ ժամանակից սկսած նողկալի զգուշավորութիւնը գրագովում է որբացած ժողովրդի Հետևողական բնաջնջմամբ...»¹⁰⁷:

1894-96 թթ. ցեղասպանութիւնը ստալ բերեց բողոքի մեծ ալիք շատ երկրներում: Օսմանյան պետութիւնի դեմ իրենց գայրույթին արտահայտեցին Հատկապես գիտութիւնի ու մշակութիւնի շատ ներկայացուցիչներ: Ռուսաստանում, Անգլիայում, Յրանսիայում, ԱՄՆ-ում Հրապարակվեցին բազմաթիւ աշխատութիւններ, որոնցում բացահայտում էին թուրքական իշխանութիւնների բարբարոսութիւնները:

Սակայն ավելի սարսափելին, որ ցնցեց ողջ մարդկութիւնը, տեղի ունեցավ 1915-1916 թթ., երբ օսմանյան զաւաստյալ պետութիւնի գլուխ անցած իթիհՀաղականների (երիտթուրքերի) կուսակցութիւնը կազմակերպեց արևմտահայութիւնի Հրեշավոր ցեղասպանութիւն, որի ընթացքում զոհվեց մեկ և կես միլիոն մարդ:

Այն գազանի խորհրդակցութիւնում, ուր քննարկվում էր Հայերին բնաջնջելու Հարցը, զոկտոր Նազըմ բեյը սակ է. «Հայ ժողովրդին պետք է ոչնչացնել Հիմնովին, որպեսզի ոչ մի Հայ չմնա մեր երկրում և մոտացվի այդ անունն իսկ: Այժմ պատերազմ է, այսպիսի Հարմար իրազրութիւն էլ չի լինի: Մեծ պետութիւնների միջամտութիւնը և Համաշխարհային մամուլի աղմկուտ բողոքներն աննկատ կմնան: Այժմ մենք պետք է գլխովին բնաջնջենք Հայերին, անհրաժեշտ է ոչնչացնել նրանց մինչև վերջին մարդը... Ես ուզում եմ, որ այս Հողի վրա թուրքը և միայն թուրքը ապրի ու երկրի լիբիսան տեր լինի: Թող չբովեն բուրբ ոչ թուրք տարրերը՝ ինչ ազգութիւն ու կրոնի էլ պատկանելիս լինեն»¹⁰⁸:

¹⁰³ Լույս տեղում, գ. 3181, թ. 38-40:

¹⁰⁴ Братская помощь пострадавшим в Турции армянам. [Под редакцией Г. А. Джаншиева]. М., 1897, с. 101.

¹⁰⁵ АВПРИ. Посольство в Константинополе, А. 3179, А. 279.

¹⁰⁶ Թուրքական աղբյուրներ Դ, Երևան, 1972, էջ 213:

¹⁰⁷ Anatole France. Trente ans de vie sociale. Introduction générale, 1897-1904. Paris, 1949, p. 137-138, 143-147.

¹⁰⁸ Mevlan-zade Rifat. Türkiye inkilabının ic yüzü. Halep, 1929, S. 89-93.

Խորհրդակցության անդամները, իհարկե, համաձայնվել են իրենց գործակից Նազըմ բեյի հետ: Ընդունվում է համապատասխան որոշում: 1915 թ. մայիս ամսին արդեն Ներքին գործերի մինիստր Թալևաթ բեյը հրամաններ է տալիս տեղական իշխանություններին երկրի հայ բնակչությանը հիմնովին ոչնչացնելու մասին: Հալևաթի վալիին ուղարկված Նրա հրահանգում, օրինակ, ասված էր. «Տեղ արդեն հաղորդվել է, որ Ջեմինթի (երիտթուրքերի ղեկավար կոմիտեի — Մ. Ն.) որոշման համաձայն պետք է ամբողջովին ոչնչացնել Թուրքիայում ապրող հայերին: Նրանք, ովքեր հանդես են գալիս այդ որոշման դեմ, չեն կարող մնալ իրենց պաշտոններում: Որքան էլ դաժան լինեն ձեռնարկված միջոցառումները, այնուամենայնիվ պետք է վերջ տալ հայերի գոյությանը: Ուշադրություն մի դարձրեք ո՛չ տարիքին, ո՛չ սեռին, ո՛չ լուգնի խայթին»¹⁰⁰:

Եվ հրամանը կատարվեց ամենայն բարբարոսությամբ: Տեղի ունեցավ XX դարի առաջին ցեղասպանությունը իր անօրինակ վայրագություններով: Առ այդ բերենք անհերքելի ու կասկած չհարուցող մի շարք վկայություններ:

Երիտթուրքերի տիրապետության ժամանակ պատասխանատու պաշտոն վարող Նայեմ բեյը, որը ի պաշտոնն անձամբ զբաղվել է հայերի ղեկորատացիայի հարցերով, գրել է. «Հայերի աքսորն ու կոտորածը իրենց հավասարը չունեն անմարդկային արարքների մասին մինչև այժմ գրված պատմությունների մեջ: Թուրքիայի ընդարձակ տարածքի որ անկյունն էլ որ Հայաստանում, որ խոր կիրճն էլ որ նայիս ամենուրեք կարելի է գտնել ամենադաժան կերպով խողխողված ու այլանդակված հազարավոր հայերի դիակներ ու կմախքներ»¹⁰¹:

¹⁰⁰ The Memoirs of Naim Bey. Turkish Documents Relating to the Deportations and Massacres of Armenians. Compiled by Aram Andonian. London, 1920, p. 64.

¹⁰¹ Նույն տեղում, էջ 1-47:

Կատարված ոճրագործությունների մասին գրել է նաև քաղաքական գործիչ, երիտթուրքերի դաշտնի խորհրդակցությունների մասնակից Մեվլան զադն Ռիֆաթը¹¹¹:

Կարևոր են նաև գերմանական աղբյուրների վկայությունները: 1912-1915 թթ. Թուրքիայի դաշնակից Գերմանիայի ղեկավար Կ. Պոլսում բարոն ֆոն Վանգենհայմը, որ մեծ ազդեցություն ուներ երիտթուրքերի ղեկավարների վրա, լավատեղյակ էր Օսմանյան կայսրության մեջ կատարվող անցքերին, կանցներ թեման Հոլլանդիա ուղղված 1915 թ. հունիսի 17 թվակիր գաղտնի գեկուցագրում հաղորդել է. «Վերջերս ներքին գործերի մինիստր Թալևաթ փաշան բացահայտորեն հայտարարել է կայսերական դեսպանության աշխատակից, գոկտոր Մորդմանին, որ Բ. Գուռը ցանկանում է օգտագործել համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնական դատաստան տեսնի իր ներքին թշնամիների (քրիստոնյաների) հետ»¹¹²:

Նույն ղեկավարը, մոտ մեկ ամիս հետո խոսելով Թուրքիական իշխանությունների կողմից կատարվող հայերի բռնի գաղթեցումների մասին գրել է, որ Օսմանյան կառավարությունը «իրոք նպատակ ունի ոչնչացնել հայ ցեղը Թուրքական պետության մեջ»¹¹³:

Գերմանիայի նոր ղեկավար Վոլֆ Մետերնիխը 1916 թ. հունիսի 30-ի իր գաղտնի տեղեկագրում հաղորդել է, որ երիտթուրքերի «կենտրոնական կոմիտեն պահանջում է բնաջինջ անել հայերի վերջին մնացորդները» (Das Komitee verlangt die

¹¹¹ St'w. Геноцид армян в Османской империи. Документы и материалы. Под редакцией проф. М. Г. Нерсисяна. Ереван, 1966, с. 362-366.

¹¹² Deutschland und Armenien. 1914-1918. Sammlung Diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 84.

¹¹³ Նույն տեղում, էջ 94:

Vertilgung der letzten Reste der Armenier)¹¹⁴: Դեսպանը երիտթուրքերին Համարում էր մոլի ֆանատիկոսներ ու «տգած գայլեր»:

Մեծ Նդեռնի մասին կարևոր փաստաթղթեր կան նաև Առաջին աշխարհամարտի տարիներից Թուրքիայի դաշնակից Բուլղարիայի պետական արխիվներում: Այսպես, Բուլղարիայի Կ. Պոլսի դեսպան Ն. Կոլոշևը 1915 թ. Հուլիսի 15-ին իր երկրի մինիստրների խորհրդի նախագահ զոկտոր Վ. Ռազդուլովին գեկուցել է. «Շարունակվում են Հայերի ջարդերն ու Հայաժանքները, որոնք ստանում են այս ժողովրդին վերջնականապես բնաջնջելու ահա՛վոր կերպարանք: Ամենուրեք Հայկական բնակավայրերը բոլորովին ամայանում են: Կանայք ուղարկվում են Թուրքական կենտրոններ և Հանձնվում Հարեմներին, երեխաները բաժանվում են Թուրք ընտանիքների միջև՝ Թուրքացիները Համար, տղամարդիկ աքաղաղում են Միջագետք, Արարիա և այլ Հեռավոր ծայրամասեր»¹¹⁵: Այդ նույն ամսին Ջոյուղենիայի դեսպան Խվան Համաձրիևը գեկուցել է. Անատոլիայի Հայ բնակչությանը «ենթարկվել է ոչ միայն սխտեմատիկ Հայաժանքների, այլև զանգվածային կոտորածների: Բիթլիսում և Էրզրումում ոչ մի Հայ չի մնացել: Այնտեղի Հայերի մի մասը փախել է Ռուսաստան, իսկ ուրիշները կոտորվել են: Անկարայից վտարված 750 Հայ ընտանիքներ ճանապարհին սպանվել են քաղերոգույ կեթեմների կողմից: Իգժիթի, Բուրսայի, Էրզրումի և Բիթլիսի Հայ Հոգևոր առաջնորդները շղթայակապ տարվել են և աքաղովել Հայտնի չէ, թե ուր»¹¹⁶:

Գրեթե նույն տեսակետներն են արտահայտել Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայի դաշնակից Ավստրիայի պետական ու զիվանագրտական գործիչները: Այսպես, Ավստրիայի վիցեմարշալ Պոմիանկովսկին, որ իր պետութան լրագրող ներկայացուցիչն էր Թուրքիայում և սերտ կապեր ու-

ներ երիտթուրքերի պարագլուխների Հետ, նույնպես զայրույթ է արտահայտել Թուրքական կառավարության կողմից Հայերի նկատմամբ իրագործվող անօրինակ դաժանությունների ու բարբարոսությունների դեմ¹¹⁷:

Հայտնի է, որ վենետուկացի սպա Ռաֆայել Նոգալիսը որպես կամավոր Թուրքական բանակում կալվում էր ինքնապաշտպանության դիմած Հայերի դեմ: Բայց, չնայած դրան, նա ևս ընդունում է, որ երիտթուրքերի կառավարությունը վարում է ջարդարական քաղաքականություն¹¹⁸:

Հենրի Մորգենթաուսը, որ 1913-1916 թթ. զբաղեցնում էր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանի պաշտոնը Կ. Պոլսում և Հաճախակի Հանդիպումներ էր ունենում օսմանյան պետության ղեկավար գործիչների Հետ, գրել է. «Ես վստահ եմ, որ մարդկության Համայն պատմության մեջ չկան այնպիսի զարհուրելի փաստեր, ինչպիսին այս կոտորածն էր: Այն մեծ կոտորածներն ու Հայաժանքները, որոնք տեղի են ունեցել անցյալում, Համարյա աննշան բան են թվում Հայ ազգի 1915 թ. կրած տառապանքների Համեմատությամբ»¹¹⁹: Դեսպանի արժեքավոր հուշերում կան նաև այսպիսի տողեր. «Մի անգամ ես զրույց ունեցա Թուրք պատասխանատու և բարձրաստիճան պաշտոնյայի Հետ, որն ինձ պատմեց, թե ինչ խոշտանգումներ են կիրառվում Հայերի նկատմամբ: Նա չէմքքրեց, որ կառավարությունը Հաճախություն է տալիս կիրառվող խոշտանգումներին...: Այդ աստիճանավորն ասաց, որ խոշտանգումների այդ բոլոր մանրամասնությունները քննարկվել են «Միություն և առաջադիմություն» կոմիտեի շտաբ-կայանի գեղերային նիստում: Ծավ պատճառող յուրաքանչյուր նոր միջոց գնահատվում էր որպես Հիանալի

¹¹⁴ J. Pomiankowski. Der Zusammenbruch des Ottomanischen Reiches. Grar, 1969, S. 165.

¹¹⁵ Տե՛ս V a h a k n N. D a d r i a n. German Responsibility in the Armenian Genocide. ... p. 32-33.

¹¹⁶ Henry Morgenthau. Ambassador Morgenthau's Story. New York, 1918, p. 324.

¹¹⁴ Նույն տեղում, էջ 277:

¹¹⁵ Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական զիվանագրտական փաստաթղթերի լույս տակ: Բուլղարներից Թարգմանեցին Ջ. Լաստրյան, Կ. Ճիզդոյան. Երևան, 1996, էջ 19-20:

¹¹⁶ Նույն տեղում, էջ 23:

Հայտնագործութիւն, և աստիճանավորները շարունակ գլուխ են կտորում մի նոր տանջանք Հնարելու Համար: Նա ինձ պատմեց, որ նրանք զինել են նույնիսկ իսպանական ինվիլիդիցիայի Հաշվետվութիւններին... և ընդօրինակել այն բոլորը, ինչ որ գտել են այնտեղ»¹²⁰:

Մեծ Եղեռնի մասին կարեւոր տեղեկութիւններ են Հաղորդում նաև պարսիկ ու արաբ ականատեսները: Այսպես, օրինակ, պարսիկ Քերեկյա Ալի Մեհմեդը պատմել է. «Ես ռազմամթերք կը փոխադրեի Երզնկայան կարին: Մի անգամ 1915 Հունիսի մեջ, երբ եկա Խոթլուրի կամուրջին մոտ, մի ահուկի տեսարան ներկայացաւ իմ աչքերու: Անթիվ-անՀամար մարդկանց դիակներ մեծ կամուրջին 12 կամարները լեցուցած էին, զեն էին առած, և ջուրը իր ընթացքը փոխած կամուրջին անդին կը վազեր: Սուկալի էր տեսելիւ. երկար սպասեցի քարավանովս, մինչև որ այդ դիակները քշվեցան և կարողացա կամուրջին անցնել: Սակայն կամուրջին մինչև ձինիս ամբողջ ճանապարհը լեցուցն էր դիակներով. ձերբեր, կիներ, երեխաներ արդեն Հոտած, նեխված և ուռած: Այնպիսի մեծ զարշառուտութիւն կար, որ անցնել այդ ճանապարհով անՀնար էր: Ի՞նչ երկու ուղտապաններս արգեն Հոտեն Հիփանգանալով մեռան, և ես ստիպվեցա ճանապարհս փոխել: Այդուր և զարՀուրեիի սճրագործութիւն զուհեր և Հեռաքեր էին ասոնք: Եվ այդ բոլորը Հայերի դիակներն էին, գժրախտ Հայերի»¹²¹:

Արեւմտահայերի 1915 թ. կոտորածների ականատես, արաբ մտավորական Ծանգ էլ Հուսեյինը գրել է. «Հայերին մահվան մատնելը վրդովեցուցիչ, ահալոր դժամուտթիւն էր... նրանք բնաջնջելու եղանակները տարբեր էին. Բիթլիսում իշխանութ-

իւնները Հայերին լցնում էին մեծ, Հարգով լի մարգանքներ, զոնները պատում ծղոտով և հրեհՀում... Մուշում սպանում էին գնդակներով, զանակներով ու զաշույններով: Իշխանութիւնները վարածում էին մազադրոնների, որոնք մարդասպանի արՀեստի Համար օրական ստանում էին մեկ ոսկի...: Դիարեքերում իշխանութիւնները Հայերին բնաջնջում էին մերթ Հրով, մերթ սրով: Հասար նրանց խումբ-խումբ նետում էին ջրՀորները կամ փոսերի մեջ ու ուշ-ողջ թաղում: Շատ Հայեր էլ ջրահեղձ են արվել Տիգրիսում և Եփրատում...: Ժանգարմանը ուրիշ եղանակ էլ էին կիրառում: Նրանք կանաչ ու երեխաներին կապում էին իրար ու մեծ բարձրութիւնից ցած նետում...: Հայերի զեն գործադրած դժամուտթիւնների պատասխանատուութիւնը ընկնում է «Միութիւն և առաջադիմութիւն» կոմիտեի անգամների վրա, որոնք իրենց ձեռքին էին պահում իշխանութիւնը: Նրանք մուշուսն ուղտապաններ էին»¹²²:

Ծրանաբացի ականավոր Հրատարակիտու Հանրի Բարրին, 1916 թ. այցելելով Արեւմտյան Հայաստան, այնտեղ կատարված զազանութիւնների մասին գրել է. «Ով որ անցնի Հիմա ամալացած Հայաստանով, չի կարող չցնցվել, այնքան անսովոր շատ րան են ասում ավերակների ու մահվան այս անվերջանալի Հեռուները: Չկա ոչ մի ծառ, ոչ մի ծալո, մամուռի ոչ մի կտոր, որը վկա չլինի մարդու սպանութիւն, որը պղծված չլինի թափված արյան Հեղեղներով: Չկա ոչ մի գետ կամ վտակ, որը զեպի Հաժիտեական մոռացութիւն տարած չլինի Հարյուրավոր ու Հազարավոր դիակներ: Չկա ոչ մի անջուռն կամ կիրճ, որոնք չլինեն զերեզմաններ բաց երկնքի տակ, որոնց խորքերում չերեւային կմախքների չժամկված կույտերը, քանի որ մարդասպանները գրեթե ոչ մի տեղ չեն վատնել ո՛չ Նաք, ո՛չ ժամանակ, որպեսզի

¹²⁰ Նույն տեղում, էջ 315:

¹²¹ Հայերի ցեղասպանութիւնը Օսմանյան կայսրութիւնում... էջ 376: Մի այլ պարսիկ Նեյնեղ Մուհամադ-Ալի Ջամալ-զադեն, իր Հուշերում գրել է. «Ես սկսածայց վկա եղա այն անտանայի դժամուտթիւնն ու խոշտանգումներին, որոնք թուրքերը կիրառում էին Հայերի նկատմամբ Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին. արդուներ եղով, հիշպես գիտեմ, միջնավոր Հայերի ջարդը» (տե՛ս Իրան-Նամե, 1993, N1, էջ 13, Ս. Մաքբարյանի Հաղորդումը):

¹²² Հայերի ցեղասպանութիւնը Օսմանյան կայսրութիւնում... էջ 493: Արեւմտահայերի 1915-1916 թթ. ցեղասպանութիւն մասին գրել են նաև բազմաթիւ արաբ պատմաբաններ. տե՛ս Ն. ՀովՀանեթյանի՝ այս Հարցին նկրած Հոդվածը, որ տպագրվել է "Новая история Армении в трудах современных зарубежных авторов" գրքում (Երևան, 1993, էջ 159-218):

թաղեն իրենց զոհերին: Այս լայնատարած շրջանները, որոնցում մի ժամանակ ծաղկել են Հայկական բնակավայրերը, այսօր ամալացած ու անմարդարենակ են»¹²³:

Ուսկական կոտորածների տեղյակ և ականատես, Կ. Պոլսի Հայ պատրիարք Ջավիդ արքեպիսկոպոսը 1915 թ. դեկտեմբերին ամերիկահայերին տեղեկացնում էր. «Պատմութունը չեմ կարծիք, թե արձանագրած ըլլա այսպիսի կոտորած մը...: Չեմ կարծիք, թե որևէ գրիչ կամ բերան կարենա նկարագրել այն զարհուրելի նախճիրները, որոնք տեղի ունեցան վերջին 8-9 ամիսներուն մեջ թուրքիո մեկ ծայրին մինչև մյուս ծայրը... Համիդյան ոսմի-մին ատեն կամ անկե առաջ տեղի ունեցած կոտորածները չնչին բան մըն են ասոր քով: Այս անգամ գործադրվածը խկապիտան բնաջնջումի ծրագիր մըն է, և այսօր որ անիկա ի գլուխ ելած է, այլևս կրնա ըսվիլ. թե Հայը իր Հայրենիքին մեջ պատմական դարձած է...: Կուսակալներին ոճանք պարծանք Հեռադրեցին կենտրոնական կառավարության, թե իրենց կառավարած նահանգներուն մեջ ոչ մի Հայ կոտորվի այլևս: Այս անգամ խուժանը չէր, որ Հարձակվեցավ խաղաղ ժողովրդին վրա, այլ նույն ինքը կառավարութունը, որ իր ծրագիրը գործադրեց զինվորներու, ժանտարմներու, ոստիկաններու և մանավանդ Հրոսակախմբերու ձեռքով: Հրահանգը կենտրոնեն արվեցավ և ամեն կողմ գործադրվեցավ անխղճորեն: Ժողովուրդը մտարվեցավ իր Հայրենի օջախեն, լքելով ամեն ինչ և ճամբան կողոպտվեցավ ու կոտորվեցավ: Սամսոնեն սկզբալ մինչև Տիգրանակերտ գրեթե Հայ այր մարդ չէ ազատված: Երիտասարդ կիներն ու աղջիկներն առևանգվեցան ու մատուկները կոտորվեցան: Կոտորածը աճալիկ եղած է Մուշ, Բաղնջ, Տիգրանակերտ, Եղսիս, Տրապիզոն, Եսպին-Գարահնար, Բդի, Բալու և Երզնկա-Բեմաղ. ուր գրեթե ոչ մեկ Հայ ազատված է, մանուկներն ու ծերերն անգամ չխնայվելով: Հայաստանի մյուս նահանգներն ազատվածներ կան, սա-

կայն Հազիվ 5 տոկոսի Համեմատությամբ: Եստ մը քաղաքներն և գյուղերն Հազիվ մեկ-երկու կիներ կան այսօր: Բաղնջ ու շրջականերն, ուրկե Հայ մը ազատված ըլլալու լուր չուենեք տակալին: Տիգրանակերտի նահանգը, ուր ոչ միայն Հայերը, այլև ասորիներն ու քաղցեացիներն ալ կոտորված են: Կուսակալեն արված ջարդի Հրամանը չգործադրվելուն Համար երեք թուրք պաշտպաններ պաշտոնանկվելով սպանված են: Տրապիզոնի և շրջակաների Հայութունը գրեթե ամբողջովին կոտորված կամ ծովամույն եղած է»¹²⁴:

Մեծ եղեռնի մասին գոյություն ունեն ճշգրիտ ու անհերքելի այլ վկայություններ: Մեր ժողովրդի այդ աճափոր ողբերգության վերաբերյալ հրապարակվել են բազմաթիվ ու բազմատեսակ աշխատություններ Հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներով¹²⁵:

Հայերի ջեղասպանության փաստը բացահայտվեց նաև երեք դատական պրոցեսների ժամանակ: 1919 թ. Կ. Պոլսում թուրքական նոր կառավարության կողմից ստեղծված Թաղմական դատարանը, Հաստատելով երիտթուրքերի Հանցագործությունները, մասվան զատապարանց մի շարք ոճրագործների, դրանք թվում և Թալանթ, էնվեր ու Ջեմալ փաշաներին¹²⁶ (վերջիններս դատվում էին Հեռակա կարգով, քանի որ նրանք, փախչելով Թուրքիայից, ձայված ապրում էին արտասահմանում): Երկրորդ դատավարությունը տեղի ունեցավ 1921 թ. Բեռլինում: Հայտնի է, որ այդ

¹²³ Հայաստանի Ազգային արխիվ, ֆոնդ 57, ք. 2, գ. 672, Թ. 72-73:

¹²⁴ Մեծ եղեռնի մասին վերջին երկու տասնամյակում Հայ պատմաբաններ Ռ. Աղայանի, Ա. Բեյլեյանի, Վ. Դադրյանի, Մ. Ներսիսյանի, Թ. Լավճանիսյանի, Վ. Միքայելյանի, Ա. Օճանջաչյանի, Ա. Սանթրոսյանի և ուրիշների ջանքերով հրատարակվեցին ու վերահրատարակվեցին արխիվային փաստաթղթերի նոր, արժեքավոր ծոցովածուկներ, որոնց մի մասը Հայերեն, ռուսերեն, մյուսը անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն: Հայոց ջեղասպանության պատմությունը Հանգամանորեն լուսարանված է մատուցարպետ Վ. Դադրյանի 1995 թ. լույս տեսած The History of the Armenian Genocide ծավալուն աշխատության մեջ:

¹²⁵ Հայերի ջեղասպանությունը բոս երիտթուրքերի զատապարտության փաստաթղթեր, առաջարանք, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Զ. Փափուգյանի, Երևան, 1988:

¹²² А н р и Б а р б и. В стране ужаса. Перевод с французского. Тифлис, 1919, с. 40.

Թվականի մարտի 15-ին երիտասարդ Հայրենասեր, վրիժառու Սողոմոն Թեհլըրյանը սպանեց Հայ ժողովրդի ոխերիմ թշնամի Մեհ-մեղ Թալանթյանը: Բնույնի դատարանը, հենվելով բազմաթիվ փաստերի ու վկայությունների վրա, ապացուցված Համարեց այն, որ երիտթուրքերն իրենց նվաճողական, պանթուրքիստական ծրագրերն իրականացնելու նպատակով, իսկապես կազմակերպել են Հայերի 1915-1916 թթ. ցեղասպանությունը և որ կատարված ոճրագործությունների գլխավոր Հեղինակը եղել է Հենց ինքը՝ մեծ գաշահ Ֆայեսթը: Ելնելով դրանից, դատարանը արդարացից Թեհլըրյանին: Դատավճիռը Չեմ արձագանք գտավ շատ երկրների Հասարակայնության մեջ¹²⁷:

Հայերի ցեղասպանության Հարցը նորից քննարկվեց 1984 թ. ապրիլի 13-16-ին Փարիզում (Սորբոնի Համալսարանում): Ժողովուրդներ մնայուն առյուծ կոչվող դատարանը, որի կազմում ընդգրկված էին միջազգային Համալսարանական կենտրոններ, Հասարակական ու քաղաքական գործիչներ, մի անգամ ևս անվերապահորեն ընդունեց Հայերի ցեղասպանության փաստը և պահանջեց, որ այն ճանաչվի որպես պետությունների կողմից¹²⁸:

Հարկ է նկատել, որ Օսմանյան պետությունը ինչպես նախորդ դարերում, այնպես էլ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին դաման քաղաքականություն էր վարում նաև արաբ ժողովրդի նկատմամբ: Հավատարիմ իրենց էությունը, թուրքական իշխանությունները դանդաղմամբ շարժեր կազմակերպեցին, որինակ, Եմենում, Լիբանանում, Պաղեստինում և Սիրիայում: Չմոռանանք, որ 1915-1916 թթ. ռազմաշուռնչ պանթուրքիստ երիտ-

¹²⁷ Մ. Ե. Եր օ ի յ ա ն (Ա. Ա.), Ռեյոն, արգարացվեց ամբաստանյալու-տն Գառնա-բանասիրական Հանգն, 1986, №1-2:

¹²⁸ A Crime of Silence. The Armenian Genocide. The Permanent People's Tribunal. The English text was edited by Gerard Libaridian. London, 1985. Չնայած Մեծ եղեռնի մասին եղած Հարուստ գիտական գրականության սակայությունը թուրքական իշխանությունների այսօր էլ Համառորեն այնատուժ են մտնել Հայերի 1915-1916 թթ. ցեղասպանությունը: Բնորոշ է, որ նրանք մեծ դուժար-ներ են ստաշարվում ԱՄՆ-ի Համայնությանն աջ ամբողջներին, որոնք կհրատարակեն Հայոց մեծ ողբերգության փաստը միառժամանակապես թուրքական (սեփա "Республика Армения", 1998, №7, 16).

թուրքերը խիստ Հալածանքների ու կոտորածի ենթարկեցին, ի թիվս մյուս ժողովուրդների, նաև Հույներին:

Այս բուրբից Հնտո, կարծում եմ, տեղին է այստեղ հիշել մեր մեծ բանաստեղծ Լուկանին Թուրքիայում, որը Հակառակ օսմանյան պետության «քաղաքակրթական միսիայի» մասին բարբառող կեղծարարների, գրել է, թե Սուլթանական Թուրքիան եղել է «ու թե պետություն, այլ սպանդանոց»¹²⁹:

Հայանի է, որ Օսմանյան կայսրության ամբողջ գոյութ-յան ընթացքում, Հատկապես XVIII-XX դարերում, տեղի են ունեցել ազգային-ազատագրական բնույթի բազմաթիվ ապստամբու-թյուններ: Բնականորեն Հարց է ծագում ի՞նչն էր դրանց պատճա-ռը: Պատմության կեղծարարները սովորաբար աշխատում են մո-ռացություն տալ այդ իրողությունը, իսկ եթե այնուամենայնիվ ստիպված են պատասխանել Հարցին, ապա փորձում են ցույց տալ, որ դրանք հրահրել ու կազմակերպել են Թուրքիայի թշնամի պետությունները՝ Ռուսաստանը և երբեմն էլ Մեծ Բրիտանիան: Նորից արտառոց ստախոսություն: Խնդրին վերաբերող գիտական պատմագրությունը բազմիցս ապացուցել է, որ Օսմանյան պե-տության դեմ ուղղված ազատագրական շարժումների գլխավոր պատճառը թուրքական սուլթանների կողմից նվաճված երկրնե-րում տեղեված բարբարոսական, անտանելի ուժերն էր: Այդ է ճշմարտությունը: Պատահական է, իհարկե, որ թուրքական բռնապետության դեմ ծավալված ազատագրական այդ շարժում-ները զոլմերպել ու փառարանել են առաջագոյն և Հուժանրաս բազմաթիվ նշանավոր դեմքեր:

Աղչարհահահակ անգլիացի բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը, որինակ, շատ ճիշդ թափեց, որպեսզի Հույն և Հայ ժո-ղովուրդները ևս ազատագրվեն թուրքական սուլթանների լծից:

¹²⁹ Լ ո ս Վ ա ն ն ե ս Թ ո ս մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու. Հատար յոթերորդ. Երևան, 1995, էջ 194:

Հայտնի է, որ նա, չսահմանափակվելով գաղափարական պրոպագանդայով, միացավ հույն ապստամբներին և զենքը ձեռքին պաշտպանեց ապստամբ ժողովրդին: Մեծ բանաստեղծը նշելով այն, որ Հայաստանը դարձրեց շարունակ գտնվել է օտար բռնապետների և մասնավորապես թուրք փաշաների տիրապետության տակ, ազատագրական պայքարի կողմ էր անում նաև Հայերին: Բայրոնը մտերմական կապեր հաստատեց Վենետիկի Մխիթարյանների հետ, սովորեց Հայերեն, ուսումնասիրեց Հայոց պատմությունը, կատարեց մի շարք թարգմանություններ Հայերենից անգլերեն, բարձր գնահատական տվեց Հայոց լեզվին, մշակութային և այլն: Շատ հետաքրքիր էր, որ նա խիստ դատապարտել է այն Հայ հոգևորականներին, որոնք զեմ էին Հայերի ազատագրական շարժմանը: Գիմնով նրանք՝ Բայրոնը ասել է. «Դուք վախենում եք խիստ կարծիք տպել ձեզ ճնշողների մասին: Ստրուկներ և վախկոտներ, դուք արժանի եք բիրտ իշխանավորների: Դուք արժանի չեք այն մեծ ազգին, որից ծագում եք»¹³⁰:

Իհնևով բուրբ բռնապետությունների թշնամի՝ Բայրոնը խստորեն քննադատել է նաև Մեծ Բրիտանիային, որը վճռակա նորեն հանդես էր գալիս ազատագրական պայքար վարող ժողովուրդների դեմ: Նա, օրինակ, համարձակորեն նշում էր այն իրողությունը, որ Մերձավոր Արևելքում Անգլիայի հետապնդած գլխավոր նպատակն է պահպանել օսլթմանական թուրքիայի ամբողջականությունը, այլ կերպ ասած՝ պահպանել օսմանյան բռնապետության տիրապետությունը զենքի ուժով նվաճված ժողովուրդների վրա: Այդ էր պատճառը, որ ազատասեր բանաստեղծը իր «Չայլդ Հարոլդ»-ում ընդգծել է.

И мне гласить на языке британца
Что он Афин слезами упоен?

¹³⁰ Ն. Գ ա շ ա ն ց. Բայրոնը և Հայերը. Երևան, 1959, էջ 95: Տե՛ս նաև Thomas Moore. The Life and journals of Lord Byron. London, 1866.

Покрять Европу краскою румянца,
Сказать, что беззащитных давит он?

.....
Сам взялся за грабеж такого рода
Которым брезгали и деспоты и годы¹³¹.

Սուլթանական Թուրքիայի դեմ ուղղված ազատագրական շարժումները ողջունել է նաև ուուս հանճարեղ գրող Ալեքսանդր Սերգևեիչ Գուչկինը: Այսպես. 1829 թ. գրած նրա մի բանաստեղծության մեջ, որն ունի "Восстань, о Греция, восстань!" խորագիրը, կան այսպիսի տողեր.

Восстань, о Греция, восстань,
Недаром напрягала силы,
Недаром потрясала брань
Олимп и Пинд и Фермошлы,

.....
Страна героев и богов
Расторгла рабские вериги
При пеньи пламенных стихов
Тиртея, Байрона и Ринги¹³².

Նկատենք, որ Հույների նկատմամբ ջերմ վերաբերմունք ունեին իր ժամանակի առաջավոր ուուս մտավորականները, և առաջին Հերթին ղեկարբրիստները, որոնցից շատերը ցանկություն հայտնեցին մասնակցելու Հուսաստանում ծավալված ապստամբական շարժմանը:

Հայտնի ղեկարբրիստ, բանաստեղծ Վ. Կյուխերեկերը, ջերմորեն ողջունելով հույների ապստամբությունը, կոչ է արել.

¹³¹ Б а й р о н. Избранные произведения в одном томе. М., 1935, с. 41.

¹³² А. С. П у ш к и н. Собрание сочинений в шести томах. Т. I, М.-Л., 1936, с. 593. Գուչկինի այս բանաստեղծությունը առաջին անգամ լույս տեսավ 1903 թ.:

Друзья! Нас ждут сыны Элады!
Кто даст нам крылья? Полетим!
Сокройтесь горы, реки, грады—
Они нас ждут—скорее к ним!¹³³.

Երիտասարդ Վիկտոր Հյուգոն 1827 թ. գրել է.

Скорее в Грецию! Пора! Ей вся любовь!
Пусть мученик-народ отмстит врагам за кровь,
Которую там проливают.
Скорее в Грецию, друзья! Свобода! Месты!
Тюрбан на голове.— кривая сабля есть...
Скорей! Пусть мне коня седлают!...¹³⁴.

Ավելի ուշ, 1866 թ. Կրեստ կղզում օսմանյան պետության գեմ ծագած ապստամբության կապակցությամբ Հյուգոն «Orient» պարբերականի գլխավոր խմբագրին Հայտնել է, որ ինքը պատրաստ է Բայրոնի օրինակով կռվել ապստամբների Հաղթանակի Համար¹³⁵:

Կանգ առնենք մի Հարցի վրա ևս: Պատմության կեղծարարները, ինչպես Հայտնի է, պնդում են, որ Հայոց Մեծ Եղեռնի հիմնական պատճառը իբր եղել է 1914 թ. կազմակերպված Հայկական կամավորական ջոկատների Հակաօսմանյան զործուներությունը և Վանի Հայության 1915 թ. ապստամբությունն ուղղված տիրող կարգերի դեմ: Միանգամայն անհիմն ու չի՛նձու պատճառարանություններ: Նախ ինչպես ոչևել ենք, Վանի Հայերը ոչ թե

ապստամբել են, այլ ստիպված են եղել դիմել ինքնապաշտպանական կռիվների: Իրականում Մեծ ոճիրի պատճառը թուրք ազգայնամոլների պանթուրքիստական ծրագրերն էին, ծրագրեր, որոնք մշակվեցին և ընդունվեցին իթթիհաղականների կողմից դեռևս 1910-1911 թթ. Սալոնիկում կայացած գաղտնի ժողովներում ու Համագումարում: Այդ մասին գրել են ոչ քիչ Հեղինակներ, և ամենից առաջ Անգլիայի փոխհյուպատոս Արթուր Բ. Հեյնը: 1910 թ. օգոստոսի 28-ի իր զեկուցագրում ուղղված Գ. Պոլսի Անգլիայի դեսպան Լուսթերին, նա Հայտնում էր. «Ես գաղտնի աղբյուրներից ձեռք եմ բերել բովանդակությունը այն ճառի, որ վերջերս Թալեմթն արտասանել է Սալոնիկի գաղտնի խորհրդակցության մասնակ' «Միություն և առաջադիմություն» տեղական կոմիտեի անդամների առաջ»: Թալեմթը ասել է. «Սահմանադրության Համաձայն պիտի Հաստատվի Հավասարություն մուսուլմանների և գյալուրների միջև, բայց դուք գիտեք, որ դա անիրագործելի է: Եսթիմթը, մեր ողջ անցյալ պատմությունը, Հարյուր Հազարավոր մուսուլմանների և նույնիսկ Հենց իրենց գյալուրների զգացմունքները դեմ են դրան: Գյալուրները Համադրին դիմադրում են օսմանիզացիային: Ուստի չի կարող նույնիսկ խոսք լինել Հավասարության մասին»¹³⁶: Եզրակացությունը պարզ էր՝ պետք է ոչնչացվեն բոլոր գյալուրները և առաջին Հերթին Հայերը և հույները, քանի որ նրանք չեն ցանկանում դառնալ օսմանցիներ: Համապատասխան որոշումներ ընդունվեցին իթթիհաղականների Հալոթը խորհրդակցություններում:

Նիստ Հատկանշական է, որ արդեն 1912-1913 թթ. տեղի ունեցան Հայ բնակչության ջարդեր, կողոպուտներ և թալան ամբողջ կայսրության մեջ: ԱՀա մի քանի վիպություններ: 1912 թ. սեպտեմբերի 4-ին Գ. Պոլսո պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Արարունին էլջմիածնի կաթողիկոսին գրած իր նամակում նշում էր, որ չնայած օսմանյան սահմանադրության առկայութ-

¹³³ В. К ю х е л ь б е к е р. Стихотворения. М., 1939, с. 73.

¹³⁴ В и к т о р Г ю г о. Собрание сочинений в 15-ти томах. Т. I, М., 1943, с. 376.

¹³⁵ Նույն տեղում, էջ 590:

¹³⁶ British Documents on the origins of the War. 1898—1914. Vol. IX, London, 1933, p. 208-209.

յանը, արևմտահայերի վիճակը վատանում է: Ամենուրեք կատարվում են նոր շարագործություններ, շարունակվում են Հայերի սպանությունները, Հայկական դուղիների թայանը և ավերումը: «Վերջերս մեզ հասած հեռագրերը գումեցին սպանությունների, ավարտությունների, առևանգումների, բռնի իսլամացումների մասին: Հայ ժողովրդին սպառնում է իսպառ չքանալու վտանգը, Համբողջանուր կոտորածը»: 1912 թ. սեպտեմբերի 25-ին Երևանի սպազային, բարեգործական-կրթական Հաստատությունների 32 ներկայացուցիչներ Ամենայն Հայոց կաթողիկոսին գրում էին. «Վերսկսվել են մասնակի կոտորածներ, տանկահայ ժողովուրդը կրկին կանգնած է սպառնացող մեծ վտանգի առաջ: Ստեղծվել է մի գրություն, որը կարող է առջ բերել 1895-1896 թթ. ողբալի դեպքերը... Վանի, Բաղեշի, Մուշի, Տիգրանակերտի և Կիլիկիայի կողմերից ստացվող հուշիչ լուրերը, այստեղ՝ Ռուսաստանում ցնցել են Հայ Հասարակության լայն խավերը»: Նամակի հեղինակները խնդրում էին դիմել Ռուսաստանի կայսրին, որպեսզի նա պաշտպանի արևմտահայությանը: Կաթողիկոսը նման խնդրագրեր ստացավ նաև Թիֆլիսի, Ախալցխայի, Վանի, Բաղեշի և այլ քաղաքների հայ բնակչուկանից: 1913 թ. հուլիսին Կ. Պոսյի Հայոց պատրիարքը նորից Հաղորդում էր էջմիածնի կաթողիկոսին, որ ըստ գավառներից ստացած հավաստի տեղեկությունների «Հայ ժողովրդի վիճակը հետզհետե կը վատթարանա և Հայկական ընդհանուր կոտորածի մը վերահաս վտանգին տակ կը գտնվի»¹³⁷:

Հայ, ռուս, ինչպես և շատ այլ երկրների մամուլը 1912-1913 թթ. գրում էր, որ թուրքական իշխանությունները ծավալում են հակահայկական պրոպագանդա, կազմակերպում են ջարդարարների, ավազակների խմբեր և նրանց միջոցով ավերում բազմաթիվ դուղիներ ու բնակավայրեր: Որոշ թերթեր ճիշտ կռահեցին, որ նախապատրաստվում են համաատրած կոտորածներ: Այդ եղ-

բակացությունը եկավ մասնավորապես Ս. Պետերբուրգի «Բիրեվիյն վեդոմոստի» թերթի աշխատակից, Հայտնի Հրապարակախոս Տ. Օլգենինը, որը 1913 թ. փետրվար-մայիս ամիսներին այցելել էր Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ և ականատես եղել նրանցում կատարվող իրազարծություններին: Նա Հաղորդում էր, որ թուրք բարձրաստիճան մի շարք պաշտոնյաներ, պառլամենտի անդամներ ու տեղական իշխանությունների ներկայացուցիչներ աշխատում են մահմեդական բնակչությանը զրգուել Հայերի դեմ և կազմակերպել նոր գանգվածային կոտորածներ, որ իշխանություններին բացահայտ հովանավորություն մտելի են ունենում ջարդեր ու կոռուպուտ: Բազմաթիվ Հաղորդումներում և Հատկապես «Անհետացող Հայաստանը» խորագրեր կրող իր հոդվածում Օլգենինը եկավ այն եզրակացություն, որ պատրաստվում և ահավոր ոճեր, սուկալի ողբերգություն Հայերի համար¹³⁸: Այսպիսով, ակնհայտ է, որ Մեծ եղեռնի պատճառը ոչ թե 1914 թ. ստեղծված կամավորական ջոկատներն են եղել և ոչ էլ Վանի Հայ բնակչության 1915 թ. ինքնապաշտպանական կռիվները, այլ երիտթուրքերի պանթուրքիստական, զավթողական ծրագրերը, որոնք մշակվեցին դեռևս 1910-1911 թթ. և 1913 թ. սկսած վերածվեցին պետական քաղաքականության:

Վերագառնալով քննարկվող հիմնական խնդրին, մենք հարկ ենք համարում նորից ընդգծել, որ բոլոր նրանք, ովքեր խստում են օսմանյան պետության «քաղաքակրթական միտայի» մասին պատմության բացահայտ կեղծարարներ և ստավտներ են: Նրանց քարոզները ոչ մի առնչություն չունեն պատմական ճշմարտության հետ:

Ի դեպ, մի քանի խոսք հետևյալ իրողություն մասին: Երևանում լույս տեսնող «Ազգ» թերթի 1998 թ. մարտի 19-ի հա-

¹³⁷ Մալոտցի անվան Մասնադպրանի Կաթողիկոսական արխիվում պահվում են Հարյուրավոր նման խղճագրեր:

¹³⁸ Պատմա-բանասիրական Հանդես, 1989, N4 (127):

մարում տպագրվեց «Կալիֆորնիա կուրիեր» պարբերականի խմբագիր Հարութ Սասունյանի հոդվածը, ուր ասված է, որ Բերք-լիի (Կալիֆորնիա) Համալսարանի ղեկավարությունը կազմել է ընդարձակ ծրագիր, բայց որի նա պետք է ձեռնարկի բազմաթիվ միջոցառումներ՝ նպատակ ունենալով ամեն կերպ նպաստելու թուրքագիտության և ընդհանրապես թուրքական մշակույթի զարգացմանը, քանի որ թուրքիան «ԱՄՆ-ի դաշնակիցը լինելուց բացի, առաջատար դեր է կատարում նաև ասիական և եվրոպական քաղաքակրթությունների զարգացման գործում»:

Սովորաբար այդպիսի դեպքերում է, որ ասում են՝ ստախտությունը ևս պետք է իր սահմանն ունենա: Ուժ Հայտնի չէ, թե այսօր ինչ «քաղաքակրթական» գործունեություն է ծավալել թուրքիան քուրդ ժողովրդի նկատմամբ, ինչպիսի ազդեցիկ քաղաքականություն է վարում նա Կիպրոսում, ինչպես է ոտնահարում անհատի իրավունքը երկրում, որքան ազատամիտ մարդիկ են տանջվում բանտերում և այլն, և այլն: Սասունյանը ճիշտ է նկատում, որ թուրքիային գովերգելու Համար անբարո մի շարք «գիտնականներ» ստանում են Համապատասխան չափի գոլարներ: Նրանք վարձատրվում են ինչպես պատմական անցյալը կեղծելու, այնպես էլ մեր օրերին կատարվող իրադարձությունների իմաստը խեղաթյուրելու Համար:

Գ.

ԱՆՅԵՐԵԵԼԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԱՐԵՎՍՏԱՅԱՅԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեծ Եղեռնի մասին ստեղծված է Հսկայական գրականություն: Հրապարակված են բազմաթիվ ու բազմատեսակ նյութեր, այդ թվում ջարդերից փրկված անհատների ցուցմունքներ, օտարերկրացի ականատեսների վկայություններ, տարբեր ազգություններին պատկանող միտոներների տվյալներ, բազմաթիվ երկրների դեսպանություններում ստացված պաշտոնական զեկուցագրեր: Լույս են տեսել Հայրուրավոր ու Հազարավոր թղթակցություններ ու Հոդվածներ, գրքեր, գրքույկներ, Հուշագրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, գիտական ուսումնասիրություններ և այլ աշխատություններ: Թուրքական կառավարության ոճրագործությունների մասին գրել են տարբեր երկրներում և տարբեր շեղուներով, գրել են գիտնական պատմաբաններ, նշանավոր գրողներ, հրապարակախոսներ, լրագրողներ, պետական բարձր պաշտոններ վարող պատասխանատու անձնավորություններ և այլք:

Հրապարակումների հոսքը շարունակվում է մինչև այսօր: Եվ այդ հարուստ ու բազմալեզու գրականությունը, իհարկե, ոչ մի կասկած չի թողնում այն մասին, որ Օսմանյան կայսրության մեջ Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին իսկպակս տեղի են ունեցել արեմտահայերի զանգվածային կոտորածներ, իսկական ցեղասպանություն՝ հրեշավոր իր գաժանությունը ու բարբարոսությունը:

Հարկի է նկատել, որ դեռևս իր ժամանակ Հայերի ցեղասպանության դեմ ազնիվ գայությունով իր ձայնն է բարձրացրել շատ երկրների առաջագեմ Հասարակայնությունը: Հրապարակայնորեն իրենց վրդովմունքն արտահայտեցին, մասնավորապես

այնպիսի ականավոր անձինք, ինչպես Մաքսիմ Կոմպակսկին, Յուրի Վեսելովսկին, Վալերի Բրյուսովը՝ Ռուսաստանում, Անտոն Չքանյուր, Ռոմեն Ռուան Ժակ դը Մորգանը, Անրի Բարբրին Չքանսիայում, Յոհաննես Լեպսիուսը, Արմին Վեյդները, Յոզեֆ Մարկվարտը՝ Գերմանիայում, Ջեյմս Բրայսը, Անտոլ Թոյբրին՝ Անգլիայում, Լենրի Մորգենթաուս, Լեբբերտ Ագամս Գիրբոնսը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում, և այլք:

Սակայն թուրքական շատ պատմաբաններ, լրագրողներ, պետական գործիչներ, ինչպես նաև նրանց կրկնող եվրոպական ու ամերիկյան մի շարք հեղինակներ, անտեսելով պատմական փաստերը, իրենց պաշտպանության տակ են վերցնում երիտթուրքական ոճրագործներին և ջանում են մխտել արևմտահայության ցեղասպանությունը: Այդ միտումը Հատկապես ուժեղացավ վերջին տարիներին: Թուրքիայի Հետադեմ շրջանները, ելնելով իրենց քաղաքական շահերից, Հրապարակում են բազմաթիվ զրբեր ու Հողվածներ, Հանդես են գալիս ուղիղ յով ու Հեռուստատեսությամբ, կազմակերպում են Հարցազրույցներ և «գիտական» սիմպոզիումներ և այլն, որպեսզի ծուռ Հայելու մեջ ներկայացնեն պատմական անցյալը:

Բնորոշ է, օրինակ, որ 1981 թ. Ստամբուլի Համալսարանի խորհուրդը ընդունել է մի «բանաձև», ուր ասվում է, որ 1915 թ. կատարված արևմտահայության տեղահանությունը (դեպորտացիան) եղել է արդարացի ու օրինական, և որ Հիմք չկա ասելու, թե Օսմանյան կայսրության մեջ տեղի են ունեցել Հայերի զանգվածային կոտորածներ—ցեղասպանություն (Գենոցիդ): Այդ նույն դրույթը կրկնվում է Անկարայի Արտաքին քաղաքականության ինստիտուտի կողմից 1982 թ. Հրատարակած «Հայկական Հարցը. ինը Հարց, ինը պատասխան» խորագիրը կրող կիսապաշտոնական գրքույկում, որը ըստ երևույթին մի խումբ հեղինակների Համատեղ աշխատանքի արդյունք է: 1984 թ. Հոկտեմբեր ամսին, Հրդրումի Աթաթուրքի անվան Համալսարանում կայացել է գիտական սիմպոզիում՝ նվիրված Հայ-թուրքական Հարաբերությունների պատմությանը և, մասնավորապես, Հայկական Հարցին: Չորս օր

տևող այդ սիմպոզիումում Հանդես են եկել Համալսարանի ղեկավարներ, պրոֆեսորներ և այլ դասախոսներ, նախկին զիվանագետներ ու զինվորականներ, պետական պաշտոնյաներ, այդ թվում տեղի նահանգապետը: Հավանորեն Հատուկ Հանձնարարություն Հայկական ազգանունով: Դժվար չէ կուսել, որ գիտության անունով Հանդես եկող, այդ Հավաքի մասնակիցներին Հանձնարարված է եղել Հիմնավորել նախորդը մոզոնաձայն թեզը, թե իրը Հայերը Օսմանյան կայսրության մեջ ունեցել են բարեկեցիկ կյանք, օգտվել են շատ արտոնություններից, որ Թուրքիայում երբեք տեղի չեն ունեցել Հայության կոտորածներ: 1985 թ., ինչպես և մինչ այդ արևմտյան մամուլում Հաճախ Հայտնվում էին թուրքական զեպագանների ու պաշտոնական այլ անձանց գրություններ ու զանազան Հայտարարություններ, որոնք ձգտում էին այս նույն ոգով վերաշարադրել պատմական ճշմարտությունը:

Այսպիսով պատմության ժամանակակից կեղծարարները, արհամարհելով սկզբնաղբյուրները, գիտական Հետազոտություններ և բազմաթիվ այլ Հրատարակություններ, առանց խղճի կայսրի Հայտարարում են, որ արևմտահայության կոտորածների մասին եղած պնդումները կեղծ են ու մոզոնված Հայասերների և պաշտօնյաների կողմից:

Բայց թուրք հեղինակները միտումնավոր «մոռանում» են, որ շատ պետական արխիվներում պահպանված են և մի շարք Հիմնարար գիտական աշխատություններում արդեն Հրապարակված են նաև այնպիսի սկզբնաղբյուրներ ու պաշտոնական փաստաթղթեր, որոնք կյանքի են կոչված ոչ Հայասիրության և ոչ էլ մարդասիրության թնջադրանքով, քայց նույնպես Հաստատում են արևմտահայության ցեղասպանության փաստը: Այդ աղբյուրների վկայությունները, Հասկանալի է, արդեն ի փիճակի չեն Հերքելու ամենամոլի կեղծարարներն անգամ:

Եվ ի՞նչ աղբյուրների մասին է խոսքը: Մենք նկատի ունենք նախ և առաջ գերմանական ու թուրքական սկզբնաղբյուրները:

1

Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին, ինչպես գիտենք, թուրքիան և Գերմանիան դաշնակիցներ ու զինակիցներ էին: Այդ շրջանում թուրքական կառավարության գերիթն ըլոր կարևոր ծրագրերը, այդ թվում արևմտահայերի, բռնազավթի և կոտորածների ծրագրերը, կազմվում ու իրագործվում էին Կայզերական Գերմանիայի գիտությունները ու Համաձայնությանը: Գիտակցելով իրենց պատասխանատվությունը արևմտահայության ցեղապանության գործում, գերմանական իմպերալիստները անում էին ամեն ինչ, որպեսզի թաքցնեն կատարվող ոճրագործությունը: Ռազմական գրաքննությունը պահանջում էր չզրկել Հայկական ջարդերի մասին ու «պահպանել լուսթյունը»: Եվ գերմանական մամուլը պահպանում էր ամոթալի լուսթյունը: Լուսն էին նաև պաշտոնական անձինքը: Ավելին, նրանցից շատերը չբազարակալվ Հերբում էին Հայերի գաղթվածային կոտորածների մասին եվրոպական մամուլում ապագրված տեղեկությունների հավաստիությունը:

Բայց այդ նույն պաշտոնական անձինքը, և մասնավորապես թուրքիայում գործող գերմանական բարձրաստիճան պաշտոնյաները՝ ղեսպանները, Հյուսիսատանները, զինվորական ներկայացուցիչները, այսինքն մարդիկ, որ լավ տեղյակ էին այնտեղ կատարվող անցքերին, իրենց գաղտնի և խիստ գաղտնի պաշտոնական գեկուցազրերում, ուղղված Կայզերական Գերմանիայի կառավարության ղեկավարներին, Հայտնում էին շատ կարևոր տեղեկություններ Հայկական ջարդերի մասին: Բերենք մի քանի օրինակ:

1912-1915 թթ. Կայզերական Գերմանիայի Կ. Պոլսի դեսպանն էր գերմանական իմպերալիզմի աչքի ընկնող ներկայացու-

ցիչներինց մեկը, Համոզված թուրքասեր բարոն Փոն Վանգենհայմը: Թուրքական կառավարության Հետ ունենալով քաղաքական շահերի և գործելակերպի ընդհանրություն, նա սերտ, բարեկամական կապեր Հաստատեց երիտթուրքերի կուսակցության շատ ղեկավար գործիչներին և մասնավորապես էնզկեր փաշայի ու Թալեաթ բեյի Հետ, մեծ ազդեցություն ունեն թուրքական կառավարության վրա, լավատեղյակ էր երկրում կատարվող քիչ թե շատ կարևոր անցքերին: Եվ ահա, թուրքական տիրակալներին ամեն կերպ Հովանավորող և բարեկամ, ըստ ամենայնի խիստ ազդեցիկ ու լավատեղյակ այդ դեսպանը Գերմանիայի կանցլեր Բեռտան-Հոլվեգին ուղղած 1915 թ. հունիսի 17-ի թվակիր իր գաղտնի գեկուցազրում Հաղորդում էր. «Միանգամայն ակնհայտ է, որ Հայերին աքսորվել Հետևանք է ոչ միայն ռազմական նկատառումների: Ներքին գործերի միջիտար Թալեաթ բեյը վերջերս առանց քաշվելու հայտարարել է կայզերական դեսպանատանը այժմ հավատարմազրված դոկտոր Մորզմանին, որ «Բարձրագույն Դուռը ցանկանում է օգտագործել Համաշխարհային պատերազմը, որպեսզի վերջնական դատաստան տեսնի իր ներքին թշնամիների (տեղական քրիստոնյաների) Հետ, ընդ որում առանց հարուցելու զիվանագիտական միջամտություն արտասահմանից» (այստեղ և Հետագա ըլոր ընդձուտները մերն են — Մ. Ն.):

Բնագրում.

Daß die Verbannung der Armenier nicht allein durch militärische Rücksichten motiviert ist, liegt zutage. Der Minister des Innern, Talaat Bey, hat sich hierüber kürzlich gegenüber dem zurzeit bei der Kaiserlichen Botschaft beschäftigten Dr. Mordtmann ohne Rückhalt dahin ausgesprochen, "daß die Pforte den Weltkrieg dazu benutzen wollte, um mit ihren inneren Feinden (den einheimischen Christen) gründlich aufzuräumen, ohne dabei durch die diplomatische Intervention des Auslandes gestört zu werden"¹.

¹ Deutschland und Armenien 1914-1918. Sammlung diplomatischer Aktenstücke. Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 84.

Գերմանական ղեկավարի այս Հաղորդումը զուտ ճշմարտություն է, այն իսկապես որ անհերքելի է: Շատ կարևոր է, մասնավորապես, ուչադրություն գարձնել Հետևյալին. ղեկավարը բառացիորեն Հայանել է այն, ինչ սակ է Թուրքիայի ներքին գործերի մինիստրը, Հայ ժողովրդի զլխավոր դահճի Թալեաթ բեյը:

Քիչ ավելի ուչ՝ 1915 թ. Հուլիսի 7-ին, նույն ՎանգենՀայքում էր ունեցված հանդիպումը. «Դեռևս 14 օր առաջ Հայ բնակչության բռնազաղթը սահմանափակվում էր մոտավորապես այն նահանգներով, որոնք մոտ էին պատերազմական գործողությունների արևելյան թատերաբեմին, ինչպես նաև Ադանայի նահանգի մի քանի շրջաններով: Դրանից Հետո Բ. Դուռը որոշում ընդունեց այդ գործողությունները տարածել նաև Տրապիզոնի, Մամուրեթ ու Ալիզի (Նարբերդի — Մ. Ն.) և Սեբաստիայի գավառների վրա և արգեն ձեռնամուխ է եղել վերահիշյալի իրականացմանը, թեև երկրի այդ մասերին չի սպառնում թշնամական որևէ ներխուժում»:

Գերմանական ղեկավարի գեկուցադրող վերջանում էր Հետևյալ շատ նշանակալից տողերով. «Այդ գործողությունները (Հայերի բռնազաղթը — Մ. Ն.) և այն ձևերը, որոնց միջոցով կատարվում են դրանք, վկայում են այն մասին, որ կառավարությունը իրոք նպատակ ունի ոչնչացնել Հայ ցեղը Թուրքական պետության մեջ»: (“Dieser Umstand und die Art, wie die Umsiedelung durchgeführt wird, zeigen, daß die Regierung tatsächlich den Zweck verfolgt, die armenische Rasse im türkischen Reiche zu vernichten”)².

Ինչպես տեսնում ենք, սոված է ամեն ինչ, սոված է Հստակ և անգրգռապահ: Իհարկե, գերմանական ղեկավարի այս վկայությունը ևս չի Հարուցում ոչ մի կասկած, քանի որ բարոն ՎանգենՀայքը չէր կարող ո՛չ ամբաստանել իր երիտթուրք բարեկամներին և ո՛չ էլ սխալ տեղեկություններ Հաղորդել իր պետությունը կառավարողներին, որոնք ռազմաքաղաքական ամենասերտ կապերն ունեին Թուրքական կառավարության Հետ:

Բարբարոսական ծրագիրը իրագործվեց. 1915 թ. օգոստոսի 31-ին 4. Պոլսի գերմանական ղեկավարության պատասխանատու աշխատող Կյուպչերուրի կողմից կազմված պաշտոնական արձանագրության մեջ սոված է, որ Թուրքական կառավարության ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյը այցելել է գերմանական ղեկավարատուն և խոսել է Հայերի մասին: Արձանագրության մեջ կան այսպիսի տողեր. «Լիտամամակ Թալեաթ բեյը Հայտարարեց, որ Հայերի դեմ ուղղված գործողությունները Հիմնականում իրագործվել են: Հայկական Հարցն այլևս գոյություն չունի»: (“Zugleich erklärte Talaat Bey, die Maßnahmen gegen die Armenier seien überhaupt eingestellt. “La question arménienne n'existe plus”)³.

Երիտթուրքերի ղեկավարներից մեկի այս պաշտոնական Հաղորդման մասին է Հիշատակում նաև ղեկավար ՎանգենՀայքի մամանակավորապես փոխարինող Հոհենլուգե Լանգենբուրգը 1915 թ. սեպտեմբերի 4-ին ուսյականցներին ուղղած իր գեկուցադրում:

Այսպես ուրեմն, Հայ ժողովրդի դատան ու նենգ թշնամին այցելել է դաշնակից պետության ղեկավարություն և անթաքույց ցինիկությունը Հայտարարել, որ իր պետության արյունառ ծրագիրը, այսինքն Թուրքիայում Հայերի ոչնչացումը արգեն իրագործվել է, և Հետևապես, Հայկական Հարցն այլևս գոյություն չունի: Ահա և Հրեշավոր ճիվաղի անկեղծ խոստովանությունը:

1915 թ. նոյեմբեր ամսին 4. Պոլսի գերմանական ղեկավար նշանակվեց կոմս Վուլֆ Մետերնիխը, որի գաղտնի գեկուցադրերը ևս պարունակում են կարևոր տեղեկություններ Հայերի գենոցիդի մասին: Այսպես, կանցլեր Բեռտան Հոլվեգին ուղղված 1916 թ. Հունիսի 30-ի թվակիր իր գրություն մեջ նա, խոսելով երիտասարդ Թուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեի մասին, Հայտնում էր.

² Նույն տեղում, էջ 94:

³ Նույն տեղում, էջ 146:

«Կոմիտան պահանջում է բնաջինջ անկ հայերի վերջին մնացորդները»: ("Das Komitee verlangt die Vertilgung der letzten Reste der Armenier")⁴.

Բնաջինջ անկ վերջին մնացորդները... Այս զարհուրելի պահանջը ներկայացվում էր գլխավորապես տեղական իշխանություններին: Ոճրագործ քաղաքականության ինչպիսի հետևողականություն: 1916 թ. Հուլիսին, իսկապես, խոսք կարող էր լինել միայն վերջին մնացորդների մասին, որովհետև մինչ այդ հայերի ցեղասպանությունը հիմնականում արդեն իրագործվել էր: Այդ, ինչպես տեսնում ենք, ընդունում էին Հենց իրենք՝ մաղասպանները:

Ի ձեպ, կոմս Մետերնիխը երիտթուրքերի կոմիտեի անդամներին որակում էր որպես մելի ֆանատիկոսներ և «քաղցած դայեր», որոնք չտեսնված ազալությունը հափշտակում են իրենց զոհերի ողջ ունեցվածքը: Գերմանիայի նոր դեսպանը միաժամանակ գրում էր, թե երիտթուրքերի Հրոսակախումբը անհամբերությամբ սպասում է Հարմար առիթի, որպեսզի Հույների Հետ ևս վարվի այնպես, ինչպես վարվեց Հայերի Հետ:

1916 թ. Հուլիսի 10-ին գրած իր մի այլ զեկուցագրում կոմս Մետերնիխը նորից հիշեցնում էր, որ թուրք կառավարիչներին հիմնական ծրագրերից մեկն է եղել «վերջ տալ Հայկական Հարցին Հայ ցեղը ոչնչացնելու միջոցով», և որ այդ հանցավոր ծրագիրը նրանք արդեն իրագործել են ամենայն դաժանությամբ, բոլորովին անտեսելով միջազգային Հասարակական կարծիքը և օտարերկրյա մի շարք դեսպանների բողոքները⁵:

Հայկական դանդաղության կոտորածների փաստը Թուրքիայում 1915-1916 թթ. ընդունել է նաև այնպիսի մի բարձրատիճան պաշտոնական անձ, ինչպիսին էր Գերմանիայի զինվորական ներկայացուցիչը Թուրքիայում գեներալ Լիման Փոն Սանդերսը: Հանդես գալով որպես վկա Թալեախ փաշայի սպանությունից,

յան առիթով, 1921 թ. Հունիսին Բեռլինում տեղի ունեցող դատական պրոցեսում, նա չմիտեց Յոհաննես Լեպսիուսի ցուցմունքները Հայերի գենոցիդի մասին, միայն թե աշխատում էր կատարված շարագործությունների զգալի մասը բարդել կառավարության ցածր պաշտնեությունների և քրդերի վրա:

Հավասարի և ստույգ տեղեկություններ են Հաղորդել նաև Թուրքիայում այն ժամանակ պաշտոնավարող գերմանական Հյուպատոսները, որոնք ի պաշտոնն գործելով զավառներում, ավելի մոտ էին կանգնած կատարվող արշուևայի անցքերին և համարյա զարհուրելի ոճրագործությունների ականատեսներ էին լինում: Այսպես, դեռևս 1915 թ. մայիսի 10-ին Հայկալի Հյուպատոս Ռյոսլերը Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը Հայտնում էր կոնկրետ փաստեր Ադանայում, Ջեթուլում և Հարևան մի շարք շրջաններում թուրքական իշխանությունների կողմից ձեռնարկված հակահայկական միջոցառումների մասին: Հյուպատոսը եզրակացնում էր, որ երիտթուրքերի կառավարությունը նպատակ ունի ոչնչացնել այդ զավառների ողջ Հայ բնակչությունը:

1915 թ. Հունիսի 2-ին Էրզրումի գերմանական Հյուպատոս Շոյրներ Ռիխտերը իր դեսպանին հեռագրում էր. «Ե՛մ բունակցությունները գլխավոր Հրամանատարի (Թուրքական 3-րդ բանակի - Մ. Ն.) Հետ Հայերի արաքսման մասին չունենան դրական հետևանքներ: Հայ բնակչությունը բոլոր դատավարներից և բոսերույթին նաև Էրզրումից պետք է արտաքսվի Դեյր չի-Ջորի ուղղությամբ: Այս մեծ մատչաբի դեպոստացիան Հավասարադր էր գանդվածային ոչնչացման... Խաղձական բուռն ժամանակները չեն կարող Համապատասխանել այդ գործողություններին, որովհետև տեղացի Հայերի ապստամբության Հնարավորությունը բացառված է, քանի որ արտաքսվողները ծերունիներ, կանայք և երեխաներ են... Հայկական լքված գյուղերը, որոնք ես այնպեցի,

⁴ Տե՛ս Der Prozess Talaat Pascha. Berlin, 1921; Դատավարություն Թալեախ փաշայի վրեժնա, 1921, էջ 97-99:

⁴ Նույն տեղում, էջ 277:
⁵ Նույն տեղում, էջ 280:

թալանված են. կողոպտված է նաև Լըզրը վանքը (Կարմիր վանք – Մ. Ն.), որի եկեղեցին ավերված է⁹:

Հյուպատոսը ճիշտ էր նկատում, և այդ դեռ այն ժամանակ պարզ էր շատերի համար, որ Հայերի այսպես կոչված դեպորտացիան, ոչ այլ ինչ էր, եթե ոչ զանգվածային կոտորածներ, և որ զեպորտացիան հիմնավորելու համար թուրքական կառավարության կողմից սուղ քաշված «նազմական նկատառումները» մաս-ցածին են ու կեղծ:

Նույն Հյուպատոսը 1915 թ. Հուլիսի 8-ին Հեռագրում էր բարոն Վանդենհայմին, որ Բալյուրբում, Երզնկայում ու Դերջանում վերսկսել են Հայերի կոտորածները Կոստանդնուպոլսի երիտթուրքական կոմիտեի և տեղական իշխանությունների հրահանգներով: Շոյրներ-Տիխտերը Հուլիսի 28-ին գրում էր, թե Էրզրումի վայր թահսին բեյի կողմնակիցները «քացեիբաց խոստովանում են, որ իրենց գործունեության վերջնական նպատակն է Հայերի լրիվ ոչնչացումը Թուրքիայում: Պատերազմից Հետո «մեզ մոտ Թուրքիայում Հայեր այլևս չեն լինի»,- բառացիորեն այսպիսին է մի Հեղինակավոր անձնավորության կարծիքը: Քանի որ այդ նպատակին դժվար է հասնել տարբեր տեսակի ջարդեր կազմակերպելու միջոցով, այստեղ Հույս ունեն, թե դեպի Միջագետք երկարատև ճանապարհի ընթացքում աքսորյալների զրկանքները և անսովոր կլիման ամեն ինչ կբացեն: Հայկական Հարցի այսպիսի «լուծումը» իդեալական է թվում մայրահեղ ուղղության բոլոր կողմնակիցներին, որոնց թվին են պատկանում գրեթե բոլոր գիե-փորականները և կառավարական չլիովելիները: Ինքը՝ թուրք ժողովուրդը, համաձայն չէ Հայկական Հարցի այսպիսի լուծման Հետ»¹⁰:

Ամսուսնի գերմանական փոխհյուպատոս Կուկերֆրե 1915 թ. Հուլիսի 4-ին գեկուցում էր իր դեսպանին, որ Անատոլիայի վի-լայեթներում տեղի ունեցող բռնապաղթը՝ դեպորտացիան, նպա-

⁹ Deutschland und Armenien..., S. 80.

⁸ Նույն տեղում, էջ 113:

տակ ունի կամ ոչնչացնել, կամ էլ մահմեդականացնել ողջ Հայ ժողովուրդը: Այն նույն օրերին՝ Հուլիսի 9-ին, Տրապիզոնի գերմանական Հյուպատոս զոկտոր Բերգֆելզը առյուծկապիցի Բեսման-Հոյվեդին հաղորդում էր Հայ բնակչության տեղահանու-թյան ու դաժան բռնությունների մասին: Հյուպատոսն առանձնա-պես նշում էր, որ իթթիհաղականների կուսակցության կենտրո-նական կոմիտեն «նպատակ ունի այդ ձևով վերջ տալ Հայկական Հարցին»¹¹:

Էրզրումի վիլայեթի Հայ բնակչության բուն տարագրման մասին բավական մանրամասն տեղեկություններ է Հայտնել գնդապետ Շտանդեն, 1915 թ. օգոստոսի 23-ի թվակիր իր գեկու-ցադրում ուղղված Կ. Պոլսում գերմանական գինվորական միսիա-յի ղեկավարությունը: Որպես կատարվող անցքերի ակնատեսն ևս, բերելով կոնկրետ փաստեր թուրքական իշխանությունների հակահայկական գործադրությունների մասին, քնդհանրացնում էր. «Հայերի աքսորման ու ոչնչացման մասին որոշումը ընդունվել է երիտթուրքերի կոմիտեի կողմից Կ. Պոլսում. նա էլ այդ կաղժա-կերպից և իրականացրել է բանակի ու զանազան շրտակախմբերի օգնությամբ»:

Այս նպատակով քացի տեղական (Էրզրումի – Մ. Ն.) աղ-մինիստրացիայի ոստիկանապետ Հուլուսի-բեյից և զլիսավոր գոր-բահրամանատար Մահմուդ Բյամիլի փաշայից տեղերում գտնվում էին նաև կոմիտեի անդամներ Լիմի բեյը, Շաբիր բեյը, Անյֆուլա բեյը»¹⁰:

Գնդապետ Շտանդեն գրել է նաև, որ Էրզրումի թուրքա-կան բանակի հրամանատար Բյամիլ փաշան մի անգամ գերմա-նական Հյուպատոսին ասել է «Պատերազմից Հետո Հայկական Հարցը այլևս չի լինի»¹¹:

⁹ Նույն տեղում, էջ 101:

¹⁰ Նույն տեղում, էջ 142:

¹¹ Նույն տեղում:

1918 թ. երիտթուրքերը փորձեցին կոտորած կազմակերպել նաև Արևելյան Հայաստանում և ընդհանրապես Անդրդրովհաստում: Մտնելով այլ մասին գերմանական միաբանի ղեկավար գեներալ Փոն Կրեսը իր գեկուցազրույթում կանցյրն Փոն Գերտլինգի Հասցեով, 1918 թ. օգոստոսի 5-ին գրում էր. «Թուրքական քաղաքականությունը պարզ է: Թուրքերը մտադիր են բնաջնջել Հայերին: Հայերին հայածում են, ուր որ Հնարավոր է, նրանց հրահրում են, և առիթ են գտնում նոր Հարմատությունների համար: Եթե դա չի հաջողվում, ապա նրանց մատնում են սովի ու աղբառություն: Այս նպատակով նրանք կողոպտում են զբաղված շրջանները և հափշտակում ամեն ինչ, հակառակ Բախումի պայմանագրի»¹²:

Մի այլ գեկուցազրույթում (4 օգոստոսի 1918 թ.) նույն գեներալը Հաղորդում էր. «Թուրքերը ուզում են Ադրբեջանով Թափանցել վաղեմիական Հայկական Ղարաբաղի նահանգ և ավերել այն»¹³:

Կարելի է բերել նման բազմաթիվ այլ վկայություններ, սակայն սահմանափակվենք այսքանով: Ավելացնենք միայն, որ Թուրքական կառավարության բարբարոսությունների վերաբերյալ կարևոր տեղեկություններ են Հայտնել նաև ոչ պաշտոնական անձինք, այսպես ասած, շարքային գերմանացիները՝ առևտրականներ, ինժեներներ, ուսուցիչներ, բժիշկներ ու գթութայն քույրեր և այլն, որոնք 1915-1916 թթ. գտնվելով Թուրքիայում, ակառնատես են եղել Հայկական կոտորածներին: Ահա, օրինակ, ինչ է պատմել Մուշում 1915 թ. գործող գերմանական որբանոցի մի բժիշկ: «Մուշը Հրդեհակց ամբողջությամբ: Յուրաքանչյուր սպա Հպարտանում էր անձամբ իր կողմից սպանվածների թվով, այդ համարելով իր ներդրումը Թուրքիան Հայոց ազգից ազատելու գործում... Շրջակա մի շարք գյուղերից անպաշտպան ու թուլացած խնդհ կանայք գալիս էին մեզ մոտ, խնդրելով ողորմածութ-

յուն ու պաշտպանություն... Մեզ արգելված էր որևէ բան անել նրանց համար, և նրանք մահանում էին մեր աչքերի առաջ»¹⁴:

Թուրք բարբարոսների և նրանց հովանավորող գերմանական իմպերիալիստների դեմ իր բողոքի ձայնը բարձրացրեց գերմանական բանվորական հեղափոխական շարժման ակառնավոր գործիչ Կարլ Լիբկնիխտը: Լիբնիով ռալյստապի գեպուտատ, նա 1916 թ. հունվարի 14-ին ռալյսականցիներին հարցապնդում անելու ժամանակ հրատարակավ հայտարարեց. «Թուրքական կառավարությունը կազմակերպել է Հայկական զարհուրելի կոտորած: Ողջ աշխարհը գիտի այդ մասին և ողջ աշխարհը դրա պատասխանատուն է համարում Գերմանիային, չէ որ Թուրքական կառավարությունը ղեկավարում են Կ. Պոլսում գտնվող գերմանական սպաները: Ոչինչ չգիտեն միայն Գերմանիայում, որովհետև գերմանական ժամուկի բերանին փականք է զբաղված»¹⁵:

Հիշատակության արժանի է և այն հանգամանքը, որ կայգերական Գերմանիայի փուլուսից հետո գերմանական ժամուլում տպագրվեցին մի շարք մերկացուցիչ և արժեքավոր նյութեր երիտթուրքերի ոճրագրործ ծրագրերի ու գազանությունների մասին:

Այսպես, օրինակ, "Deutsche Hilfsbung fur christl" պարբերականում 1919 թ. հրատարակվել է մի Հաղորդագրություն, ըստ որի էնվեր փաշան մի անգամ հրատարակավ խոստովանել է այն փաստը, որ Հայերի Գեներալը Թուրքական կառավարության կողմից իրազործել է նախօրոք մշակված ծրագրով¹⁶: "Deutsche Allgemeine Zeitung" թերթում 1927 թ. ապրիլի 28-ին հրատարակվել է գերմանացի գեներալ-ֆելդմարշալ Փոն դեր Հոլցի մասնավոր նամակը՝ գրված 1915 թ. նոյեմբերի 22-ին Հայելում, որում

¹⁴ The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916. London, 1916, p. 90-91.

¹⁵ Карл Либкнехт. Избранные речи, письма и статьи. М., 1961, с. 334.

¹⁶ С. Степанян. Армения в политике империалистической Германии. Ереван, 1975, с. 116.

¹² Նույն տեղում, վազ. 426:

¹³ Նույն տեղում, վազ. 424:

խոսվում էր սիրիական անապատ քարտվող հայերի մղձավանջա-
յին վիճակի մասին: Ֆելզմարչալը, չնայած իր թուրքամետոթյա-
նը, գրել է. «Ինչպիսի սարսափելի ժողովրդական ողբերգություն: Առանց ուսույթի ու պարենի, անօղևական, նրանք հազարներով
քշվում են դեպի անհայտություն: Եստեղը մահանում են ճանա-
պարհներին և երկար ժամանակ մնում են առանց թաղվելու: Լո-
գու խորքում ցավակցում են, բայց օգնել չեն կարող»¹⁷:

Պետք է նշել, որ բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր
ու նյութեր, որոնք հաստատում են հայերի զանգվածային կոտո-
րածի փաստը, պահպանվում են Թուրքիայի նաև մյուս գաղնա-
կիցների Ավստրիայի ու Բուլղարիայի պետական արխիվներում:

Մենք արդեն ասացինք, որ գերմանական պաշտոնական
փաստաթղթերը հայկական կոտորածների մասին միանգամայն
անհերքելի են. քանի որ նրանց չնդիմակնիքը, լինելով կայդերա-
կան Գերմանիայի բարձրաստիճան պաշտոնյաներ, չէին կարող
հորինել փաստեր ու վկայություններ, որոնք կվարկաբեկեն և՛ ի-
րենց, և՛ իրենց զինակից ու բարեկամ երեսմուրթերին:

2

Ոստելով թուրքական աղբյուրների մասին, նախ պետք է
նշել, որ հակահայկական հանցագործ ծրագրերը, ինչպես այդ տե-
սանք նախորդ շարադրանքում, նախապատրաստվել են երես-
մուրթերի 1910-1911 թթ. Սալոնիկում տեղի ունեցած գաղտնի
խորհրդակցություններում և համապատասխանում: Այնտեղ ըն-
դունված որոշումներում պահանջվում էր մահճեղականացնել ողջ
ոչ թուրք ժողովուրդներին, ինչով և դեռևս մինչև 1915 թ. տեսա-
կան հիմք զրվեց հայերի և այլ «օտարածին» ազգությունների
կոտորածներին:

Սակայն դիմենք անմիջապես հայերի ցեղասպանությանը
վերաբերող թուրքական փաստաթղթերին: Իթիհահադականների

¹⁷ Heinrich Vierbücher. Armenien 1915. Hamburg-Bergedorf, 1930, S. 71.

արյունոտ վարչակարգի տապալումից հետո արդեն 1919-1920
թթ. հայտնաբերվեցին և հրապարակվեցին թուրքական կառավա-
րության ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյի մի շարք
գաղտնի հեռագրեր հայերի կոտորածների վերաբերյալ: Այսպես.
1915 թ. Հայկալի նահանգապետին ուղղված ծածկագիր մի հեռագ-
րում կարդում ենք. «Որոշված է Թուրքիայում սպորդ հայերին
ոչնչացնել ամբողջովին: Նրանք, ովքեր դեմ են այս որոշմանը,
չեն կարող մնալ իրենց վարչական պաշտոններում: Որքան էլ
զաճան լինեն միջոցները, միևնույն է պետք է վերջ տալ հայերի
զոլությունը: Ուշադրություն մի զարժեք ոչ տարիքին, ոչ սե-
ռին, ոչ էլ խղճի խայթին»:

Թալեաթի մի այլ հեռագրում ուղղված նույն նահանգա-
պետին, կան այսպիսի տողեր. «Ի՞նչ հայկական տարրը բնաջնջե-
լու հարցը... վճռված էր ավելի վաղ, հանգամանքները թույլ
չտվին իրագործել այդ սրբազան գործը: Այժմ, երբ բոլոր արգելի-
քները վերացված են, և ժամանակը եկել է մեր հայրենիքը փրկելու
այդ վտանգավոր տարրից, հաստատվածորեն հանձնարարվում է
չենթարկվել կարեկցանքի զգացմունքին ի տես նրանց թշվառ վի-
ճակի, այլ վերջ տալ բոլորին և ամեն կերպ ջանալ ոչնչացնել «Հա-
յաստան» անվանումն իսկ Թուրքիայում»:

Թուրք պաշտոնյա Նալիմ-բեյը պատմում է մի չափազանց
բնորոշ դեպքի մասին: Բանի որ սովից ու վարակիչ հիվանդու-
թյուններից զանգվածորեն մահացել են ոչ միայն Միջագետք բանի
քարտված հայերը, այլև տեղի արաբ բնակչությունը, Նալիմ-բե-
յը մի անգամ դիմել է քարտի գործով զլխավոր կոմիտեի նախա-
գահ Արսուլլահադ Նուրի-բեյին. «Բեյ-էֆենդի եկեք հայերի քե-
տրը կատարենք պակաս խիստ ձևով, այլպես մահը կսպառնա
ողջ Միջագետքին: Այս լայնատարած շրջաններում սատանանե-
րից բացի ոչ ոք չի մնա... Նուրի-բեյը ծիծաղեց: «Տղաս, սաաց նա,

¹⁸ The Memoirs of Naim Bey. Turkish Official Documents Relating to the
Deportations and Massacres of Armenians. Compiled by Aram Andonian. London,
1920, p. 64: տե՛ս նաև վերահրատարակումը (University of Pennsylvania, 1965).

¹⁹ Նույն տեղում, էջ 7:

այդպիսով մենք միանգամից կազատվենք երկու վտանգավոր տարրից: Ձէ որ Հայերի Հետ միասին մեռնում են արարները: Մի-թե՞ դա վատ է: Ձէ որ մաքրվում է ճանապարհը թուրքիզմի Համար»²⁰:

Այստեղ նորից հիշենք Օսմանյան կայսրության XX դարի սկզբի քաղաքական գործիչներից մեկին՝ Մեվլան-գազն Ռեֆաթի (ձագանձով բուրդ) Հիշողություններում, խմբիլիալոց, նկարագրածը այն գազանի խորհրդակցության ընթացքը, որի ժամանակ որոշում էր ընդունվել Հայերի ոչնչացման մասին: Ըստ այդ Հնդի-նակի Հազորդման, երեսուրբքերի առաջնորդներից մեկը՝ դոկտոր Նազըմը, նիստի ժամանակ ելույթ ունենալով, ասել է. «Հայ ծո-ղովրդին պետք է Հիմնովին ոչնչացնել, որպեսզի ոչ մի Հայ չմնա մեր երկրում և մոռացվի այդ անունն իսկ: Այժմ պատերազմ է, այսպիսի Հարմար իրադրություն այլևս չի լինի: Մեծ տերութ-յունների միջամտությունը և Համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքներն աննկատ կմնան, իսկ եթե նրանք իմանան, ապա կանգնած կլինեն կատարված փաստի առաջ, և զրանով էլ Հարցը կվերջանա: Այս անգամ մեր գործողությունները պետք է ընդու-նեն Հայերի ՀամենդՀանուր կտորածի բնույթ: Անհրաժեշտ է ոչնչացնել բոլորին, մինչև վերջին մարդը»²¹:

Խորհրդակցությանը ներկա գտնված Էնվերը, Թալեխաթը, ԲնՀանտզին Շաքիրը և մյուսները լիովին Համաձայնել են Նազը-մի Հետ և, ինչպես գրում է Մեվլան-գազեն, «միաձայն քվեարկե-ցին բոլոր Հայերին լրիվ ոչնչացնելու մասին, չբացառելով ոչ մի մարդու»:

1919 թ. երեսուրբք դահիճների կառավարության տապա-լումից Հետո, Թուրքիայի նոր կառավարությունը Համաշխարհա-յին Հասարակության կարծիքի ճնշման ներքո Կ. Պոլսում կազմա-

կերպից ռազմական դատարաններ (տրիբունալներ), որոնք մի շարք մեղադրանքների Համար, այդ թվում Հայերի կտորածները կազմակերպելու մեղադրանքով դատում էին երեսուրբքերի կու-սակցության շատ գործիչներին: Դատաքննությունների ժամանակ, որ վարում էին թուրք զեներալները, բազմաթիվ ավյայների և վկայությունների Հիման վրա լիովին ապացուցվել է արևմտահա-յուսթյան Գենտզիդի փաստը: Արյունուշտ դահիճներ Թալեխաթը, Էնվերը, Ջեմալը, դոկտոր Նազըմը և այլքը Հեռակա կերպով դա-տապարտվեցին մահվան, շատերը՝ բանտարկության:

Կ. Պոլսի ռազմական տրիբունալի մեղադրական ակտում կան, օրինակ, այսպիսի տողեր. «Կարևորը, որ Հետևում է սկսված դատաքննությունից այն է, որ Հանցագործությունները, որ տեղի են ունեցել զանազան վայրեր և տարրեր ժամանակներում Հայե-րին քարտրելուց սկսած, եզակի և տեղական գործողություններ չեն: Իրանը նախօրոք կանխամտածվել և իրագործվել են կենտրո-նական մարմնի կարգադրությամբ... կամ զազանի Հրամանների, կամ բանավոր Հրահանգների Համաձայն»²²: Այնուհետև մեղադ-րական ակտում ասված է, որ երեսուրբքերի կառավարության ո-րոշման Հիման վրա, երկրի Հեռավոր ծայրերը քարտրվող Հայերի քարավանները ոչնչացվում էին ճանապարհին՝ կառավարության կողմից ստեղծված Հրոսակախմբերի կողմից, որոնց մեջ ներգրավ-ված էին բանտերից արձակված Հանցագործները և քրեական տարրերը: Սկզբնական շրջանում, նշված է մեղադրական ակտում, ջանքեր էին գործադրում միամիտ մարդկանց Համոզելու, որ ա-վագապային այդ Հրոսակները, իբրև թե մասնակցելու են պատե-րազմական գործողություններին: «Մինչդեռ բոլոր ապացույց-ներն ու ողջ փաստաթղթերը ցույց են տալիս, որ այդ Հրոսա-կախմբերը ստեղծվում էին տեղահանված Հայերի քարավանները կտորելու և ոչնչացնելու նպատակով»²³:

²⁰ Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под редакцией М. Г. Нерсисяна. Ереван, 1966, с. 420. II изд. 1983, с. 473.

²¹ Mevlan Zade Rifat. Türkiye inkilabının iç yüzü. Halep, 1929, S. 90 (արա-րառաա).

²² Геноцид армян в Османской империи... с. 473. II изд. с. 559.

²³ Takvimi Vekai, 1919, N3540, էջ 6 (արարատոտ), տե՛ս նաև Գամաթ-բանա-սիրական Հանգես, 1985, N3, էջ 117:

Թագավան տրիրունալների դատավարություններում ելույթներ ունեցան թուրքական բարձրաստիճան որոշ պաշտոնյաներ ու գեներալներ, որոնք արժեքավոր վկայություններ տվեցին: Այսպես. Արևմտյան ճակատում գործող 3-րդ բանակի նախկին հրամանատար Վեհրե փաշան դատարանում, որտեղ քննվում էին նաբրեղի դեպքերը, Հայտնեց, որ «Հայերի կոտորածը և ոչնչացումը, նրանց ունեցվածքի թալանը ու հափշտակումները կատարվում էին «Մրուխյուն և առաջադիմություն» կոմիտեի կենտրոնական ապարատի նախօրոք ծրագրված որոշումների հիման վրա»²⁴:

Հարկ է հիշել նաև իր՝ Թալեաթ-փաշայի խոստովանությունը: Իր հիշողություններում, խոսելով Հայերի բռնի դեպորտացիայի մասին, նա, տարիներ անց, այնուամենայնիվ ստիպված էր խոստովանել, որ դեպորտացիան ժապուխտ մարդկանց պատճառով ողբերգական դարձավ: Ես նպատակ ունեմ ծածկելու այդ գործողությունների դատանությունը²⁵: Արյունարբու զահեճը, ինչպես տեսնում ենք, գիժելով պհնՀայտ կեղծավորության, ջանում էր իր մեղավորությունը բարդել ուրիշների վրա, մինչդեռ Հանրահայտ է, որ «անգուժի մարդկանց» ղեկավարը Հենց ինքն էր:

Գրող և հրապարակախոս, թրքուհի Հալդեհ Էդրիպը հիշում է, որ մի անգամ Թալեաթը, փորձելով արդարացնել Հայերի կոտորածը, ստել է «Ես Համոզված եմ, որ եթե որևէ ազգ անում է ամեն ինչ իր շահերի համար, և այդ Հաղողվում է, ապա աշխարհը այն ընդունում է: Ես պտորաստ եմ մեռնել այն բանի համար, ինչ կատարել եմ, և ես գիտեմ, որ կմեռնեմ զրա Համար»²⁶:

Թալեաթ-փաշան նախազգուս էր, որ անպատիժ չի մնա կատարած Հանցագործության համար: Եվ իսկապես, ինչպես Հայտնի է, նա սպանվեց 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Հայ Հայրենասեր Սոցիոնի Թեհլիրյանի կողմից:

Հայերի Գենոցիդի վերաբերյալ ստույգ տեղեկություններ մենք գտնում ենք նաև այլազան բազմաթիվ գործիչների մոտ: Արարական ազգային-ազատագրական շարժման Հայտնի գործիչ Ֆայեզ էլ-Հուսայինը, որ ձերբակալվել էր թուրքական կառավարության կողմից, Հաղորդում է կարևոր տեղեկություններ: Երբ նրան Ուրֆայի բանտից տեղափոխում էին Դիարբեքրի բանտ, նա տեսել է, թե ինչ էին անում Հայերի Հետ: «Ճանապարհին, — գրում է նա, — մեր առջև բացվեց աճավոր տեսարան: Ճանապարհի երկու կողմում ընկած էին մեծ քանակով դիակներ: Այստեղ ընկած էր մի կին, որի երկար վարսերը ծածկում էին մարմնի կեսը, այնտեղ՝ մի ուրիշը բերանբսխվալով: Տղամարդկանց արևից չորացած դիակները ածուխի պես սևացած էին: Որքան մոտենում էինք Սևերեկին, այնքան ավելանում էր դիակների քանակը, Հատկապես մանուկների... Մենք գիշերեցինք Սևերեկում և մյուս առավոտ ճամփա ընկանք: Մինչև Դիարբեքր Հասնելը, մենք ճանապարհին Հանդիպեցինք Հայ կանանց քարավանի, որոնց ծանց գարձների պահակախմբի հսկողությամբ քշում էին դեպի Սևերեկ: Նրանք այնպիսի Հուսահատ ու թշվառ տեսք ունեին, որ այդ տեսարանը կշարժեր անգամ քարերի գուժը և կարեկցություն կառաջացներ նույնիսկ վայրի գազանների մոտ: Ինչի՞ համար էին նրանց զատապարտել այդպիսի ճակատագրի: Ի՞նչ Հանցագործություն էին կատարել այդ կանայք: Միթե՞ նրանք պատերազմել են թուրքերի դեմ, կամ սպանել են զեթ մեկ Հոգու նրանցից: Եվ ինչու՞մն էր կայանում այս անօրնական տարածների Հանցանքը: Նրանց միակ մեղքն այն էր, որ նրանք Հայուհիներ էին, որոնք գիտեին միայն իրենց գործն ու անտեսությունը, զատարակում էին իրենց երեխաներին, և երբք չէին Հետաքրքրվում ուրիշ ոչնչով, բացի ընտանեկան Հարմարավետություն ստեղծելուց ամուսինների և զավակների համար և իրենց պարտականությունը կատարելուց... Երեկոյան մենք Հասանք մի

²⁴ Геноцид армян в Османской империи... с. 478. II изд. с. 573.

²⁵ Talaat paşanın hatıraları. İstanbul, 1946, s. 72-73.

²⁶ Memoirs of Halide Edip. New York, London, p. 387.

իջևանատուն, որը գտնվում էր Դիարբեքիբից մի քանի ժամվա Հեռավորության վրա: Գիշերն անցկացրինք այստեղ, իսկ առավոտյան նորից ճամփա ընկանք: Ամեն տեղ դիակները, այստեղ մի տղամարդ է կրծքից զարնված, այնտեղ՝ կին հռչաոված մարմնով-կողքին՝ հավերժական քնով քնած երեխա. քիչ այն կողմ մի մատղաջ աղջիկ, որ ձեռքերով ծածկել է իր մերկությունը: Այսպես շարունակվեց մեր ճանապարհը, մինչև հասանք Դիարբեքիբի մոտ գտնվող Լարա Բուևար որ մեծ ջրանցքին: Այստեղ մենք հանդիպեցինք սպանելու և զազանություն մի այլ մեթոդի: Մենք տեսանք ամբողջովին այրված դիակներ: Լոկ միայն ամենատես Տիրոջն է Հայտնի, թե քանի-քանի երիտասարդներ ու գեղեցիկ պարիկներ, որոնք կարող էին միավորել իրենց կյանքը, կենդանի կերպով կրակի են մատուցել այս վայրում: Մենք չէինք կարծում, որ դիակներ կգտնենք նույնիսկ Դիարբեքիբի պարիսպների մոտ: Սակայն ամբողջ ճանապարհը, մինչև քաղաքի զարպասները ծածկված էր նրանցով: Ինչպես են Հետագայում իմացա եվրոպացիներից, այն բանից Հետո միայն, երբ եվրոպական թերթերը խոսեցին այդ մասին, կառավարությունը Հրաման տվեց թաղել սպանվածների դիակները»²⁷:

Նշանավոր արևելագետ-թուրքագետ Վ. Ա. Գորգլևսկին, 1917 թ. այցելելով Արևմտյան Հայաստան, գրել է. «Բիթլիսով անցնելիս ականջալուր եղա այնտեղ տեղի ունեցած կոտորածի արձագանքներին: Ինչպես ինձ պատմեցին տեղի բնակիչները, փողոցները, տները, որտեղ պարուժ էին Հայերը, եկեղեցիներն ու վանքերը լցված էին դիակներով, կանայք ընկած էին բռնաբարությունյունից Հետո սպանված, դիակները թափված էին երբեմն անխցած «ինչպես խորոված խոճկորներ» — ասում էին ականատեսները: Երբեմն որովայնախոռոչը լցված էր լինում ավազով, Հյուսիսից կտրած. կիսամոխրացած կոշիկի և տարատի մեջ ծածկված էր ոտքը, իսկ քիչ Հեռու ընկած էր գանգ ու թևը: Բիթլիսից Հետո

²⁷ Геноцид армян в Османской империи... 1966, с. 356-357. II изд. с. 401-402.

կիրճում ընկած էին դիակների բլուրներ, ոմանց պարանոցին կային պարաններ՝ մետաղյա ծայրակալներով, կարծես թե տանջողները նախ եղջրաճարել են զոհերին: Դա եղել է սպանող, ժողովրդի աննախադեպ կոտորած: Մարդիկ, ասես կորցրել էին իրիզը: Բայց ամաչեց եփրատը և լացեց արյուն-արցունքներով: Մուշի մոտակա կամուրջը տակավին իր վրա պահպանում է այն գծերը, Հետքերը, երբ գետը արյունից վարարել էր: Այդպես ոչնչացան մեկ միլիոնից ավել Հայեր»²⁸:

Իրենց վրդովմունքն արտահայտեցին նաև Եվեյցարիայի Հարյուր Նշանավոր Հատարակական գործիչներ: 1915 թ. սեպտեմբերին նրանք հանդես եկան Հետևյալ Հայտարարությամբ. «Այն ժամանակ, երբ պատերազմը, կլանելով եվրոպայի մեծ ժողովուրդների ողջ ուժերը, իր վրա է սենտում աշխարհի ուշադրությունը, Թուրքիան դարձավ զազանություններով ուղեկցվող իրազարժությունների թատերարժ, զազանություններ, որոնց առաջ աղոտանում են այժմ այլ վայրերում իրագործվող, կամ էլ այդ երկրում նախկինում կատարված չարագործությունները: Խոսքը ողջ Հայ ժողովրդի սիստեմատիկ ընաղջնման մասին է՝ Թուրքական կայսրությունում բացառապես իսլամի տիրապետություն հաստատելու անդրդվելի մտազրույթյամբ: Հարյուր Հազարավոր Հայեր կոտորվել են, կամ էլ զանգվածորեն աքսորվել իրենց քաղաքներից և գյուղերից: Միջազգային անապատներ և այլ վայրեր տեղափոխված, նրանք կործանվում են կարիքի և աղքատության մեջ: Շատ շատերը, հատկապես կանայք ու երեխաները, ստրկված են մահճակալներում ընդունել: Այս փաստերը Հաստատված են առաջառ ականատեսների վկայություններով, որոնք իրենց խառնվածքի և զիբքի պատճառով արժանի են կատարյալ փաստահավանության»²⁹:

Վերհիշենք 1915 թ. սեպտեմբերին Լոնդոնի «Թրամսում» տպագրված թերթի Կահիրեի թղթակցի Հազորդուժը Հայերի կո-

²⁸ В. А. Гордлевский. Избранные сочинения. Т. 3, М., с. 129-130.
²⁹ АВГРИ, Полицархив, А. 3492, л. 15.

տորածի մասին, որում ասված է. «Եւ տարբերութիւն պատմակա-
նորեն նախորդած սպանութիւններէ, այժմյան զազանութիւն-
ները չեն սահմանափակվում մի որոշակի շրջանով: Սամաուեից ու
Տրապիզոնից, Օրդուից ու Անիթապից, Մարաշից ու Էրզրումից
միևնույն լուրերն են Հասնում զազանութիւններէ մասին, անկողնորեն զնդակահարված, խաչված, խեղված կամ աշխատան-
քային գումարտակներ տարված տղամարդկանց, առևանգված և
բռնի մահճեղականացված երեխաների մասին, բռնաբարված ու
երկրի խորքերը ստրկութիւն վաճառված կանանց մասին, տեղում
զեղակահարված կամ երեխաների Հետ Մոսուլից արևմուտք ա-
նապատ քարտրված կանանց մասին, որտեղ ոչ ուտելիք կա, ոչ
ջուր, կամ Հալեպի ու Բաղդադի միջև՝ Դեյր էլ-Ջոր քարտրված,
որտեղ պարեն չկա: Եվ մեկ, և մյուս դեպքում նրանց սպանում
է սարսափելի մահ: Այս դժբախտ զոհերից շատերը չՀասան նշա-
նակված վայր, որովհետև պահակախումբը այնպես էր նրանց
բռնում, որ նրանք ընկնում էին, և քանի որ ծնծով ու քաջգիտերով
Հնարավոր էէր նրանց ստիպել շարժվել առաջ, ապա նրանց թող-
նում էին մեռնելու ճանապարհներին, և նրանց դիակները ճշտո-
րեն ցույց էին տալիս այն ուղին, որով նրանք անցել էին: Շատե-
րին կապում էին զույգ-զույգ, մեջք-մեջքի և ողջ-ողջ ջուրն էին
նետում: Ձեյթունում Հայերը խարժեցին Աղանայից Հայտնի
Ցաքրի-փաշայի կողմից: Գերմանական որոշ Հյուպատոսներ ու
գեղնչողներն էին այդ իրազարձութիւնները»³⁰:

Անգլիայի նշանավոր քաղաքական գործիչ Ու. Չերչիլը
այս նույն կոտորածների կապակցութեամբ ասել է. «1915 թ.
Թուրքական կոտորածների կապակցութեամբ Փոքր Ասիայում ապրող Հայերի
նկատմամբ սկսեց անցկացնել անողոր զանգվածային կոտորածի
ու տեղահանութեան քաղաքականութիւն: 300 կամ 400 Հազար
տղամարդիկ, կանայք ու երեխաներ փախան ռուսական տարածք
և մասամբ Պարսկաստան ու Միջագետք... Մտաւոր Հաշիվման-

րով այդ բռնացումներին ենթարկվեցին մոտ 1/4 միլիոն Հայեր, ու-
րոնց կեսից ավելին ոչնչացաւ»³¹:

Մենք ներկայացրինք թուրքական շարժարանների Հան-
ցագործութիւնների մասին գոյութիւն ունեցող փաստաթղթերի
ու վկայութիւնների աննշան մասը միայն: Սակայն սա էլ կա-
կած չի թողնում այն մասին, որ ոճրագործ երիտթուրքերը 1915-
1916 թթ. անօրինակ դաժանութեամբ իրագործեցին արևմտահայե-
րի ցեղասպանութիւնը: Եվ որքան էլ Հանան պատմութեան կեղ-
ծարարները խեղաթյուրել պատմական ճշմարտութիւնը, նրանց
չի Հաջողվի թաքցնել այն և թյուրիմացութեան մեջ դցել Համաշ-
խարհային Հասարակական կարծիքը:

Այս բացարձակ ճշմարտութեան լույսի տակ բոլորովին
պարզ է դառնում այն, որ պատմութեան ժամանակակից կեղծա-
բարները ոչ մի Հիմք չունեն արևմտահայութեան ցեղասպանութե-
ան մասին բազմաթիւ երկրներում ստեղծված Հարուստ գրակա-
նութիւնը մեղադրելու միտումնաւորութեան ու կեղծիքի մեջ: Ձէ
որ գերմանական սկզբնաղբյուրները Հաստատում են այն, ինչ որ
գրել են Հայ, ռուս, ֆրանսիացի, անգլիացի, չիլիցարացի, ամերի-
կացի և այլ ազգութիւնների Հեղինակները: Վերջիններիս կող-
մից Հրապարակված փաստերն ու վկայութիւնները չեն Հակա-
նում գերմանական փաստաթղթերի տվյալներին, ընդհակառակը,
ընդհանուր առմամբ Համընկնում են նրանց Հետ: Այսպիսով,
միակ Հետևութեան այն է, որ կեղծում են ոչ թե տարբեր ազ-
գութիւնների Հարյուրավոր ու Հազարավոր անվանի Հեղինակնե-
րը, այլ մի քանի տասնյակ թուրք նորելուկ «պատմաբանները»,
որոնց Համար ոչ մի նշանակութիւն չունի ոչ գիտական օրյեկ-
տիվութիւնը, և ոչ էլ պատմական ճշմարտութիւնը:

Պետք է ընդգծել, որ արևմտահայերի ցեղասպանութեան
մասին կարևոր փաստաթղթեր են պահպանվում նաև Սոֆիայի,

³⁰ The Times, 29.XI.1915.

³¹ У. Черчилль. Мировой кризис. М.-Л., 1932, с. 27.

Բուլղապեղտի ու Վիեննայի արխիվներում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան պետության դաշնակից ու զինակից բուլղարական և ավստրոհունգարական կառավարությունները՝ Թուրքիայում աշխատող զենպաններն ու հյուպատոսները, չնայած իրենց թուրքախրությանը, նույնպես վկայում են արևմտահայության մասսայական կոտորածներին և երիտթուրքերի անօրինակ գազանությունների մասին: Բուլղարական ու ավստրոհունգարական այդ փաստաթղթերին, որոնք ևս պերճախոս են ու անհերքելի, մենք կանդրադառնանք մի այլ անգամ:

Դառնալով թուրքական արխիվների զուները բաց լինելու և նրանցում ցեղասպանությունը հաստատող նորահնար ազգայնական առասպելի շրջանառությունը, պետք է հստակորեն պատկերացնել, թե հայոց կոտորածը կազմակերպողները, զեռ աշխարհամարտը չափարտած, հոգ էին տանում պաշտոնական հրահանգներն ու նրանց ի պատասխան գրգռող զեկուցագրերը արխիվային գրանցման, առավել ևս պահպանություն չհանձնելու համար: Այլ կերպ՝ ո՛ր են այսօր այն հարյուրավոր վկայությունները, որոնց հիմամբ ի մասնավոր հիմնած ետպատերազմյան առյուծը ոճրագործներից մի քանիսին, այդ թվում Թալեաթին, մահապատժի վճռի արժանացրեց: Ջավեն պատրիարքի հուշերին ծանոթացած ընթերցողները շատ լավ են պատկերացնում, թե ինչն՛ր և ինչպե՛ս չքացան և թե ինչու այժմ համարձակ կոչ են անում վկայություններին փնտրել թուրքական արխիվներում:

Դ.

ՍԻ ԲԱՆԱԿԵ ԶՍՅՈՒՈՆԱՅՅԻ 1922 ԹՎԱԿԱՆԻ
ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ
(Զնյուսմիայի հայ և հույն բնակչության ջարդերի 70-ամյակի առթիվ)

1965 թ. ապրիլի սկզբներին ամերիկյան հայտնի «Թայմս» (“Times”) հանդեսը տպագրեց գրախոսական անգլիացի լրագրի կինոսսի «Աթաթուրք» խորագրեր կրող մեծածավալ գրքի մասին¹: Ընդհանուր առմամբ զրական զեռհատական տալով այդ աշխատությունը, պարբերականը, սակայն, սխալ էր համարում գրքում բերված այն տեղեկությունները, որոնք վերաբերում էին Զմյուռնիայում 1922 թ. սեպտեմբերին կատարված ոճրագործություններին: Հատուկ ծանոթագրություն մեջ հանդեսը անհրաժեշտ համարեց նշել այն հանգամանքը, որ կինոսսը ճիշտ չէ, երբ հիմք ընդունելով Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետական զեպարտամենտի տվյալները գրել է, թե Զմյուռնիայում 1922 թ. սեպտեմբերին զոհված հույների և հայերի ընդհանուր թիվը կազմել է ընդամենը 2000 մարդ: Հանդեսը ճիշտ չէր համարում գրքի հեղինակին նաև այն տեսակետը, որ քաղաքի համատարած հրդեհը իբր ծաղկել է պատահաբար:

Առարկելով անգլիացի լրագրին «Times»-ը պնդում էր, որ Զմյուռնիայում կատարված ջարդերի հետևանքով զոհերի թիվը եղել է 100000, իսկ ավերիչ հրդեհը կազմակերպել են քաղաքը գրաված թուրք զինվորները իրենց հրամանատարի ցուցումներով: Պարբերականում ասված էր. “The scandalous Smyrna massacre of 1922, in which 100000 Greeks and Armenians were allegedly consumed in a conflagration lit by the victorious Turks, is

¹ K i n r o s s, Lord. Ataturk. New York, 1965.

minimized by Kinross, who accepts the U. S. State Department's conclusions: the death toll was about 2000 and the fire was started by accident"².

Ամերիկյան նշանավոր հանդեսի այս իրավացի առարկությունները, իհարկե, չընդունեցին ո՛չ թուրքերը և ո՛չ էլ նրանց այլազգի «բարեկամները»: Արգելվեց շարաթաթերթի այդ համարի տարածումը Թուրքիայում, ի պաշտպանություն կիրրուսի հանդես եկան թուրքօֆիլ մի շարք Հեղինակներ: Խոսեցր դրանցից մեկի մասին:

Ադրիլի վերջերին բանավեճին միջամտեց Մոսկվայում լույս տեսող «Յա քոբեժոմ» շարաթաթերթի աշխատակից, լրագրող Գ. Արիևիչը: Առանց խորանալու փաստերի մեջ, կամ թե հատուկ դիտավորությունը, նա շտապեց հրապարակել մի հոդված, ուր պաշտպանելով կիրրուսի տեսակետը՝ փորձեց ցույց տալ, որ իբր Իզմիրը հրդեհել են ոչ թե թուրքերը, այլ «ինտերվենտները» (այսինքն անգլիացիները, հույները), և որ Ձմյունիայի սեպտեմբերյան անցքերը պետք է համարել ոչ թե «ամոթալի ջարդեր», ինչպես գրում է «Թայմսը», այլ թուրքական «ազատագրական շարժման ավարտ» («Յա քոբեժոմ», 23-29 ապրիլի 1965 թ., № 17):

Արևմտահայերի ցեղատպանության 50-րդ տարեդարձի օրերին մեծ տպաբանակ ունեցող ռուսական շարաթաթերթում հրապարակված այս ամոթալի տողերը չէին կարող զայրույթ չառաջացնել Հարցին տեղյակ մարդկանց մեջ: Մայիսի վերջերին կարդալով Գ. Արիևիչի հոդվածը, ես բողոք արտահայտող մի նամակ ուղարկեցի շարաթաթերթի խմբագրությանը: Ահա մի քանի քաղվածք այդ նամակից:

«Յա քոբեժոմ» պարբերականի խմբագրական խորհրդին:

Հարգելի ընկերներ. Ձեր շարաթաթերթի 1965 թ. ապրիլի 23-29, 17-րդ համարում տպագրված է Գ. Արիևիչի

«Последователи Мединуса» («Մեդինուսի Հետևորդները») փոքրիկ հոդվածը: Հեղինակը մեանում է, թե իբր բացահայտում է ամերիկյան «Թայմս» պարբերականի զրպարտչինքներին, իսկ իրականում կոպիտ կերպով խեղաթյուրում է փաստերը: Ի՛նչ էլ գրում «Թայմսը»: «Իզմիրի ամոթալի կոտորածը 1922 թվականին, երբ Հաղթական թուրքերի կողմից կազմակերպված մեծ հրդեհի ժամանակ ոչնչացան 100000 հույներ և Հայեր, նվազեցված է կիրրուսի կողմից, որը Համաձայնվում է Պետական ղեկավարամեծնոսի այն եզրակացությունն է, որ զուհերի ընդհանուր թիվը եղել է երկու Հազար, և որ հրդեհը պատահար էր ծագել» («Թայմս», 1965 թ. ապրիլի 9, հ. 85, № 15, էջ 63):

Արիևիչը, ըստ երևույթին, վատ գիտի պատմություն: Հանդես բերելով անթույլատրելի թեթևամտություն, նա զայրանում է. «Հակառակ պատմական ճշմարտության, հոդվածում («Թայմսի») հոդվածում — Մ. Ն.) սպառնացվում է, որ 1922 թվականի սեպտեմբերին Իզմիրը իբր հրդեհվել է ոչ թե թուրքական բանակից փախչող ինտերվենտների կողմից, այլ իրենց՝ թուրքերի կողմից: Իսկ ազգային-ազատագրական պայքարը, որ ավարտվեց քաղաքի ազատագրումով, պարբերականն անվանում է «ամոթալի կոտորած» (էջ 18):

Կարգում ես այս տողերը և Հեղինակի փոխարեն կարծում եմ: Բայց Հենց Արիևիչն էլ ջանում փստել պատմական ճշմարտությունը, ըստ էության հանդես է գալիս թուրք զահեճների փաստաբանի դերում և տվյալ Հարցում պաշտպանում է Պետական ղեկավարամեծնոսի տեսակետը: Ձե՛ որ անժխտելի փաստերը խոսում են այն մասին, որ 1922 թվականի սեպտեմբերին Իզմիրում, թուրքական զորքերը իսկապես կոտորել են մոտ 100000 հույներ և Հայեր և հրդեհել են նրանցով բնակեցված քաղաքի թաղամասերը: Իզմիրի կոտորածը և ջարդերը պատահական երևույթներ չէին: Այդ նույն թուրքական (քեմալական) զորքերը, ինչպես հայտնի է 1920-1921 թթ. Արևելյան (Անդրկովկասյան) Հայաստանում

² "Times", 1965, April 9, vol. 85, N 15, p. 63.

կուտրել են 198000 Հայ (տե՛ս Советская историческая энциклопедия, Հ. 1, Մ., 1961, էջ 753):

Մտեղիով Հանրահայտ փաստերը, Գ. Արիևիչը թույլ է տալիս պատմության նեղագիտիսում և անարդու 1922 թ. գազանարար ոչնչացված տասնյակ Հազարավոր անմեղ մարդկանց Հիշատակը: Ավելին, նա վերաբերում է բոլոր Հույների և Հայերի միանգամայն Հասկանալի զգացմունքները, որոնք չեն մոռացել իրենց Հայրենակիցներին որքերգական ճակատագրեր:

Հարկ է նշել, որ Արիևիչի Հաղորդումը Հրապարակվել է ս.թ. ապրիլի վերջին, այսինքն այն օրերին, երբ Հայ ժողովուրդը նշում էր 50-ամյակը իր անճանաճ որքերգության 1915-1916 թվականներին թուրքիայում մեկ և կես միլիոն Հայերի ընաղջման: Արիևիչը և մյուսները, ըստ երևույթին, զուրկ են տարբական տակտից: Գ. Արիևիչի Հոգվածի Հրապարակումը կուպիտ սխալ է: Մնում է Հուսալ, որ նման փաստեր չեն կրկնվի»:

Այս բողոքին միացավ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը, որը նամակին ավելացրեց հետևյալ ստղերը.

«Ամբողջովին Համաձայն եմ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ներսիսյանի նամակի Հետ: Զարմանալի է, որ սովետական լրագրողները շարքում գտնվեց նողկալի դաշիններին պաշտպանող մարդ: Ակադեմիկոս Վ. Համբարձումյան: I.VI.1965»: Մտավճայի շարաքաթթի արձագանքը չուշացավ: Եուսով ստացվեց հետևյալ պատասխանը.

«Հարգելի ընկ. Ներսիսյան.

Ձեր նամակը Գ. Արիևիչի իսկպան անթույլատրելի սխալի մասին քննվել է մեր շարաքաթթի խմբագրական խորհրդում: Խմբագրական խորհուրդը որոշել է Հետաքննել այս սխալի պատճառները և մեղավորներին պատժել:

Հարգանքներով «За рубежом» շարաքաթթի խմբագրության պատասխանատու քարտուղար Կ. Բելյան: 1965 թ. 17 Հունիսիսի»:

Ի դեպ, խմբագրության այս պատասխանը, ինչպես նաև Հայերի ցեղասպանության հիստունամակի առիթով «Правда» թերթում տպագրված մի Հոդված³, պետք եղավ օգտագործել մեկ տարի Հետո, երբ առաջ քաշվեց մեղադրանք այն մասին, թե առանց ԽՍՀՄ Արտաքերի գործերի մինիստրության թույլտվության երևանում, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կողմից Հրապարակվել է «Геноцид армян в Османской империи» փաստաթղթերի ժողովածուն⁴:

Որպեսզի ցույց տրվի, թե Գ. Արիևիչը ինչպես է նեղագիտել պատմությունը, ես նամակին կցել էի Թենե Պյուռյի "La mort de Smyrne" գրքույկի մի քանի գլուխների ուսերեն թարգմանությունը: Ֆրանսիացի Հեղինակի այս աշխատությունը, որը լույս է տեսել Փարիզում 1922 թ. վերջերին, Ջմյուռնիայի Զարդերի մասին գոյություն ունեցող գրականության մեջ ամենահավասար ազդուրներից մեկն է⁵: Այն զբոված է կատարված ոճրագործության ականատեսների (ընդ որում տարբեր ազգությունների պատկանող մարդկանց) անհերքելի ցուցմունքների ու վկայությունների հիման վրա: Այսօր, Ջմյուռնիայի արյունոտ անցքերից տասնամյակներ անց, ավելորդ չենք Համարում նրանից բերել մի շարք քաղվածքներ, որոնք իրենց նշանակությունը չեն կորցրել նաև մեր օրերի Համար:

Նշելով այն փաստը, որ 1922 թ. սեպտեմբերի 9-ին (չարաթ օրը) քննապական Հսնկազորը ներխուժեց Ջմյուռնիա, Թենե

³ 1965 թ. ապրիլի 24-ին «Պրավդա»-ում Հրապարակվեց իմ և պրոֆ. Ն. Ուշակովի «Գնեցիղը ամենամար Հանցագործությունն է մարդկության Հանդեպ» Հոդվածը, որանց ուղղակի ասված էր. «Հնուսն տարի առաջ երթթուրքերի կոտորածությունը քննելից մոտավորպես մեկ ու կես միլիոն Հայ» (Հայերեն թարգմ. տե՛ս «Սովետական Հայաստան», 25 ապրիլի 1965 թ.):

⁴ Տե՛ս Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под редакцией проф. М. Г. Нерсисяна. Ереван, 1966.

⁵ R e n e P u a x. La mort de Smyrne. Deuxième édition. Paris, 1922.

Պյուն գրում է (քաղվածքները բերում ենք Հայերեն Մոսկվայի շաբաթաթերթին ուղարկված առևտրին թարգմանությունից)։ «Բոլոր վկայությունները Համընկնում են այն Հարցում, որ Զմյուռնիա մուտք գործելուց հետո թուրքերը չըջապատել են Հայկական թաղամասը։ Բրիտանական մի լիազոր ներկայացուցիչ է. Պոլիս «Թալմախ» թղթակցին Հայտնել է, որ սեփական աչքերով տեսել է Հայկական թաղամասում կանանց ու տղամարդկանց դիակներով ծածկված փողոցները։

Դոկտոր Ուիլֆրիդ Պատը Նյու Յորքից Հայտնում է, որ սպանություններն ու թալանը սկսվեցին Հրդեհից շատ առաջ։ «Փողոցներում,— ասում է նա,— այնքան դիակ կար, որ ես ստիպված եղա դուրս գալ մեքենայից և նրանց մի կողմ Հեռացնել, որպեսզի Հնարավորություն տամ մեքենայի անցնելուն»։

Այն ժամանակ, երբ Հայկական թաղամասում կոտորածը թեժանում էր ամեն ժամ, թուրքերը կանոնավոր ու անկանոն գործառնություններով էին հուճկան թաղամասով դեպի Հյուսիս։

Կանանց ու աղջիկների Հափշտակումը թուրք զինվորների Հին սովորույթն է, և դրան վերաբերող բազմաթիվ վկայությունները վրդովմունք են առաջացնում։ Կանանց բռնաբարում էին ամուսնանքի ու Հայրերի աչքի առաջ, որոնց սպանում էին Հանցանքը խանգարելու փորձի Համար։ Անգլիական Ֆիրմայի աշխատակից մի հույն ներկա էր գտնվել իր Հոր սպանությունը և կնոջ ու աղջկա բռնաբարմանը։ Ամերիկյան Հպատակությունը ընդունած մի արևելցի ինքնասպան եղավ նման մի տեսարանի վկա լինելուց հետո։ Ինչ վերաբերում է անցորդների, նույնիսկ եվրոպացիների կալանավորմանն ու թալանին, ապա դա սովորական երևույթ էր։

Հայերի նկատմամբ որսը, սպանությունները և թալանը շարունակվեցին 12-ի ողջ օրը։ Պարոն Տ. Ռոյ Տրելորը Հայտնում է, որ ամիս 11-ին Հայերին խմբերի բաժանեցին յուրաքանչյուրում 100 մարդ, տարան Կոնակ (նահանգապետի պալատ) և կոտորեցին այնտեղ։ Հայ բնակչության բնաջնջումը շարունակվեց նաև երեքշաբթի [12-ին] երեկոյան. Հազարավոր Հայեր կոտորվե-

ցին։ Հետևյալ օրը դիակներից այնպիսի գարշահոտություն էր գալիս, որ ոչ մի Հնարավորություն չկար մոտենալ որոշ թաղամասերի։ Տ. Ռոյ Տրելորը ավելացնում է. «Անգլիական քահանա պարոն Դորստեր, որը մեծագույն վտանգի էր ենթարկվում, փորձելով թաղել մահացածներին և թնթկացնել կենդանի մացածների տանջանքները, սեփական աչքերով է տեսել ամենանողկալի գազանությունները. մեկը բոլորս՝ նա, ես և մյուս ականատեսները, պատրաստ ենք ներկայանալ ամեն մի Հանձնաժողովի և պատմել այն, ինչ մենք տեսել ենք»⁶։

Գրքույկի Հաջորդ բաժնում խոսվում է Զմյուռնիայում բռնկված Հրդեհի մասին։ Բերվում են բազմաթիվ փաստեր, վկայություններ, որոնք ցույց են տալիս, որ Հակառակ կեղծարարների պնդումներին, Հրդեհը ու նրան ուղեկցող թալանը, ավերը կազմակերպել են թուրք զինվորները։

«Թուրքերը, թալանելով Հայկական թաղամասը և կոտորելով նրա բնակչություն մեծ մասը, զիմեցին կրակին, իրենց շարագործության Հետքերը կոծկելու Համար։ Այսպիսին է բազմաթիվ ականատեսների միանգամայն որոշակի կարծիքը։ Եվրոպա Հասած առաջին Հեռագիրը ուղարկվել էր «Ջիկագո Տրիբյունի» Հատուկ թղթակցի Ջոն Կլեյտոնի կողմից. Հեռագրում կրկնված էին Հայկական թաղամասի կենտրոնում գտնվող ամերիկյան պարոնի տնօրենուհի Միննի Միլսի վկայությունները։ Նա տեսել է, թե ինչպես կանոնավոր բանակի թուրք ենթասպան մտավ իր դպրոցի մոտի Հայկական տունը։ Նրա ձեռքին կային թիզոններ։ Նրա գնալուց հետո տունը բոցավառվեց։

«Թալմախ» Մալաթյում գտնվող Հատուկ թղթակիցը փախստականներին Հարցումից հետո 18-ին Հեռագրել էր, որ Հրդեհը սկսվեց երեք թաղամասերում միևնույն ժամանակ։ Պարոն Տ. Ռոյ Տրելորը Հայտնում է, որ առաջին Հրդեհը սկսվեց 13-ին, ցերեկը ժամը 2-ին։ Ժամը Հինգին նկատվեցին Հրդեհի չորս նոր օջախներ։ «Զմյուռնիայում ապրող շատ ականավոր անգլիացիներ-

⁶ Նույն անգլում, էջ 8-12։

րի կարծիքով.— գրում է Տրեյորը.— [Թուրքերը] վազեցին զեպի հրդեհը, կոծկելու համար Հայկական թաղամասում իրագործած հրեշավոր սպանողը»: Նա ավելացնում է, որ ապացույցներ կան այն մասին, որ թուրքերը բարիկազով շրջափակում էին տները, նախքան նրանց հրկիզելը, և նավթ էին լցնում Հայկական թաղամասում:

«Էկո զը Պարիի» Մարսելի թղթակիցը «Ճերզիայի» (20 սեպտեմբերի) ուղևորներից լսել է, որ հրդեհի օջախների թիվը հասնում էր քսանի: Հրդեհից փրկվածներից մեկը ասաց, որ «քեմալականները շրջափակեցին Հայկական թաղամասը և սկսեցին ուռնքերի և նավթի միջոցով հրկիզել տները»:

«Մասնատես Գարգիանի» Կ. Պոլսի թղթակիցը Հեռագրում էր 20-ին, որ Ջմյուռնիայից եկած փախստականների հարցումից Հետո նա Համոզվեց, որ հրկիզումը զիտավորյալ կատարել են թուրքերը: Ականատեսներից մեկը տեսել էր, թե ինչպես թուրք զինվորները նավթ էին լցնում:

«Միմպոտն» ականակրող 20-ին Կ. Պոլսի ժամանած ամերիկյան ականատեսները միաձայն աղետի պատասխանատվություն են դնում էին թուրքերի վրա: Այս անկողմնակալ ականատեսները Հայտնեցին. «Քեմալականները անհամեմատ ավելի շատ ատում են Հայերին, քան Հույներին: Քաղաք մտնելուց ի վեր թուրքերը որոշեցին ոչնչացնել Հայերին: Այն բանից Հետո, երբ հրդեհը մոլեգնում էր արդեն մի քանի ժամ, Հանկարծ քամին չուսախեց Հարավ փոխեց ուղղությունը, և կայծերը թռան եկրոպական թաղամաս: Այդ ժամանակ թուրքերը Հասկացան իրենց սխալը. քեմալականները ամենևին էլ չէին պատրաստվում ոչնչացնել ողջ քաղաքը, որը զբաղվում համար նրանք պայքարել էին երկար տարիների ընթացքում. ընդ որում այդ պայքարում նրանք մեծ զոհեր տվին թե մարդկանցով, թե զբաժնով»:

Քաղաքում շրջող պարեկներից ամերիկյան ծովայինները Հայտնում են, որ իրենք տեսել են թե ինչպես թուրք զինվորները հրկիզում էին տները: «Մորնինգ Պոստի» Կ. Պոլսի թղթակիցը 19-ին Հեռագրում էր. «Համեմատելով մի շարք փախստականների

անզլիացիների, սերբերի և բնակչության կուլտուրական շերտին պատկանող այլ ազգությունների քաղաքացիների հաղորդումները, ես անհրաժեշտ եմ համարում Հայտարարել, որ նրանք միաբերան Հաստատում էին, որ հրկիզումը կատարվել է թուրքական անկանոն զորքերի կողմից, կանոնավոր զորքերի մասնակցությամբ և զինվորական իշխանությունների ակնառու թույլատվությամբ»:

Ռենն Պյուոյի զբոսիչուհի այնուհետև բերվում են փաստեր այն բարբարոսությունների մասին, որոնք տեղի են ունեցել Ջմյուռնիա քաղաքի երկու արվարձաններում: Այսպես, օրինակ, Բուռնարաթ արվարձանում կատարված ոճրագործությունների մասին կարգում ենք. «Թուրքերը ոչ միայն ավարառության մասունեցին Բուռնարաթը, այլև դազանբար մորթեցին ողջ քրիստոնյա բնակչությանը, անգամ այդ ավանի անզլիական ընտանիքների հույն և Հայ աղախիներին: Բրիտանական զլխավոր անզլիներտներից մեկը, պարոն Սայքսը, տեսել է, թե ինչպես թուրքերը սպանել են 26 զմբաստ աղախիներին: Աղախիների մի ուրիշ խումբ, 20-25 աղջիկներ, ապաստան էր փնտրում մի անզլիական կալվածքում, բայց ապարդյուն. աղջիկները այնտեղ բռնվեցին և նոզկայի անարդանքից Հետո սպանվեցին»⁷:

Մտեթացեցելով «3a pyбeжoм» շարաթաթերթի խմբագրությանը Ռենն Պյուոյի աշխատույթյանը՝ ես միաժամանակ նամակում գրել էի, որ Քրանսիացի Հեղինեկի կողմից բերված Հարուստ տեղեկությունները ցույց են տալիս, թե որքան անբարեխիղճ ու ստախոս են այն թուրքասեր Հեղինեկները, որոնք փոր-

⁷ Նույն տեղում, էջ 13-15:

⁸ Նույն տեղում, էջ 18: Ջմյուռնիայի ավերման, քրիստոնյա բնակչության ջարդերի մասին մանրամասն ու Հավաստի տեղեկություններ է հրատարակել ամերիկացի Հոլանդացի զորջ Էռնեստ Լեմինգտոնը, որը այդ ժամանակ որպես կանադական «The Toronto Daily Star» թերթի թղթակից գտնվում էր Ջմյուռնիայում (տե՛ս E r n e s t H e m i n g w a y . In Our Time. New York, 1930): Հետագա տարիներին լույս տեսած գրքերից առանձնապես Հիստորիայի արժանի են Մ. Նոկսի գրքիս «The Smyrna Affair» գիրքը (N. Y., 1966, 1968, 1972 թթ.) և ապա «Smyrna 1922. Destruction of a City» աշխատությունը (N. Y., 1988).

ծուս են նենգափոխել Ջմուռնիա քաղաքում 1922 թ. կատարված ոճրագործությունների պատմությունը: Գրքույկում իրավացիորեն նշված է, որ բացահայտ կեղծարարների ճամբարում գտնվեցին նաև մի շարք պետությունների, մասնավորապես Ֆրանսիայի պետական շատ գործիչներ ու ԱՄՆ-ի պետական ղեկավարության անդամների, որոնց հետաքրքրում էր ոչ թե պատմական ճշմարտությունը, այլ իրենց քաղաքական շահը: Հեղինակը նշում է նաև այն հանգամանքը, որ արևմտյան պետությունները Ջմուռնիայի արյունոտ դեպքերի նկատմամբ ցուցաբերեցին Հանցավոր անտարբերություն: Այդ է պատճառը, որ նա իր գրքույկը վերջացնում է հետևյալ տողերով. «Եթե Համերայնությունը մարդկանց միջև դատարկ խոսք չէ, եթե այս մեղսագործ երկրի վրա կա ևս ուրիշ մի բան, բացի պոլիտիկանների և ֆինանսական գործարարների պայքարից, ապա թող դադարի ատելությունն ու մրցակցությունը Արևմուտքի քրիստոնեաների միջև այս ահռելի աղետի առաջ, թող որ եվրոպան իր Հանցավոր նսապրությունը քափի օրինապահությանը և մեծ ներդրումով գիթարտություն գործում»:

Ունեն Պյուոյի տասնամյակներ առաջ գրված խոսքերը արևմտյան պետությունների «Հանցավոր էգոիզմի» վերաբերյալ դարմանալիորեն այժմեական են նաև մեր օրերի Համար: Բանն այն է, որ չնայած ամենուրեք ազգաբարձող մարդասիրական դադարներին և ազգերի ինքնորոշման իրավունքի շնորհ բարոյների, ակնհայտ է, որ ԱՄՆ-ում ու եվրոպական մի շարք պետություններում «թուրքոֆիլությունը» նորից դարձել է ստրատեգիական խոսքուկներ Հոստայնդոդ պետական քաղաքականություն: Մի՞թե պատահական է, երբ արևմտյան շատ քաղաքագետների աչքից «վրիպում է» այն իրողությունը, որ չփոխելով իր էությունը, խիստ աշխուժացել է այժմ արդեն «քաղաքակրթության» անուկից Հանդես եկող, բայց մեղ բողոքի լավ ծանոթ, պանթուրքիզմը: Կարծում են խիստ բնորոշ է, օրինակ,

այն Հանգամանքը, որ իր ժամանակ երիտթուրքերի կողմից առաջ քաշված «Կովկասյան տուն» ստեղծելու դադափաբը այսօր էլ լայն տարածում է գտել թուրք Հասարակության ասարեր շրջաններում և կովկասյան այն ազգայնամոլ լեռնականների մեջ, որոնք գործում են Խուսաստանի դեմ:

Վերջացնելով ասելիքս բանավեճի մասին, Հարկ եմ Համարում նկատել, որ մեր գլխավոր նպատակն է վերհիշել տարիներ առաջ տեղի ունեցած արյունոտ անցքերը, որպեսզի, կատարելով մեր բարոյական պարտքը, մոռացություն չտանք տասնյակ Հանցաբավոր Հայ և Հույն զոհերի Հիշատակը¹⁰: Այդ կարևոր է անել առանձնապես այսօր, երբ առանձին Հայ քաղաքացիները, նկենդով իրք պրագմատիկ որոշ նկատառումներից, փորձում են լուռության մատնել մեր ժողովրդի պատմության ինչպես Հերոսական, այնպես էլ ողբերգական դրամաները:

Ջյուռնալում կատարված ոճրագործության ներկայացված պատկերը անվերապահ դարձնելու Համար կարևոր ենք Համարում այստեղ բերել երկար ժամանակ կեսարահայտ առաջնորդ եղած և Հայագիտության ճանաչված վաստակավոր Տրդատ եպիսկոպոս Պայլանի նամակ-վկայությունը, ուր ներկայացված էր իր տեսածն ու կրածը:

ՊԱԼԵՍՏԻՆԻ ԵԱՍԱԿԸ ՎԵՆԵՆԱ՝ ԺԱՌՆԱԳՈՒՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԻՐ ԱՍՆ,
ԱՏԱՄԱՐՈՅԾ ՎԱՐՆ ԻՄՈՂԻՇԵԱՆԻՆ

Ես 1922 Սեպտեմբեր ամսու սկիզբները, Մադինայէն Իզմիր իջած էի եղբորս մէկ տունը բնակելու Համար, կարծելով թէ՛ Մուստաֆա Քէմալը Հոս գալու իսկ ըլլալ, Իզմիրի մէջ որեւէ դէպք չը պատահիր ու Հանգիստ ժամանակ կ'անցընենք, բայց դժբախտաբար մեր մտածումը պարապի ելաւ. Մուստաֆա Քէմալի Ես իւր անօրէն գորքերու վայրագութեան միջոցս ամենամեծ Հալածումի, կողոպտարի ենթարկուեցայ, ինչպէս նաեւ բոլոր Հայերը. Իզմիրի մէջ տառապանքը մեծ էր, ամբողջ Հայոց թաղը

⁹ Ֆրանսիական կառավարող շրջանների թուրքոֆիլական դիրքորոշումն իր անսրող արտահայտությունները գտավ, օրինակ, Փարիզ «Ֆրանս» Հայասնի թերթում 1922 թ. սեպտեմբերի երկրորդ կեսին Հրատարակված Հոգովաններում ու լրագրական կոլյաներում:

¹⁰ Հաղինակ Ա. Բյուրասի տվյալներով Ջմուռնիայի անվան հետևանքով Հայ զոհերի թիվը կազմել է մոտ 35000 (տե՛ս նրա մեռազեր այնատուրքուրը ՀԳԱ պատմության ինստիտուտի արխիվում):

կրակի տուին Քէմալի զօրքերը, կարգը երբ մեր թաղին եկաւ, ինչպէս ուրիշ տուններու կ'ընէին, երեք չորս օթոժոպիլ բերին տունիս առջև, եւ իմ ամբողջ գոյքերս զորս բերած էի Մադինա-ա-ձէն, դրամներս, նամակագրո՞ւմի մեծ Հաւաքածոյս, 30 տարիներէ ի վեր աշխատած ու ժողոված ազգագրական Հաւաքածոյներս ու ուսումնասիրութիւններս, պարսկական երկու թանկագին գորգերս, վեղարներս, փիլոններս, փակեղներս, եպիսկոպոսական պնակէս, խաչ եւ ամբողջ Հազուտներս ու զգեստեղէններս, թղթեան եւ մագաղաթեայ Հին ձեռագիր եւ 600 Հատ գրադարանիս տպագիր գիրքերս, եղբորս 40 պարկ շամիչը եւ տանը գոյքերը եւն. այդ օթոժոպիլներու մէջ լցնելով սուրի տարին, եւ անմիջապէս ալ տունին մէկ ծայրէն կրակ տուին, ինչպէս ըսի՝ կ'ընէին ուրիշ Հայ տուններու ալ, որուն վրայ տեղաւեցայ առանց տեսնուելու տունէն փախիլի աղտոտ միակ վերաբիւլով մը. այսպէս փողոց փողոց քանի մը օրեր սազին անգին միայն Հաց ուտելով թափառելէ յետոյ, վերջապէս քարափի վրայ տուն մը մտանք Հանգստանալու Համար. տաք տասնեւՀինգ օր վերջը Հատ դժուարութեամբ յունական շոգենաւ մը մտանք եւ Հասանք Աթէնք, թէ եւ օր մըն ալ զիս բանտարկեցին Իզմիր:

Այժմ երեք ամիսներէ ի վեր կը մնամ Աթէնք թշուառ վիճակով, իմ այս վիճակս յսուելով Երուսաղէմէն, Կ. Պոլսէն, Բարիզէն, Եգիպտոսէն օգնութեան փոքր ինչ նպաստեր զրկուած են, որով այժմ քիչ Հատ Հանգստութիւն մը ունեցայ, չը պիտի մոռնամ այդ բարիքները, որ կ'ըլլան ինձ: Աթէնքի Հայոց եկեղեցւոյն մէկ սենեակին մէջ այժմ օրերս կ'անցնեմ խեղճ քրոջս Հետ, որ կերակուրս կը պատրաստէ, որովՀետեւ եղբայրս Իզմիրի մէջ կորուսեցաւ, իր մէկ փեսայով:

ՏՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՍԵՆՍ

29 ՅՈՒՆԻՈՒՐ 1923. ԱՅԵԼՔ. ՊԱՅՈՑ ԵՆԵՂԵՑԻ

Յ. Գր. Եթէ կարելի է, այս նամակին ամբողջ պարունակութիւնը Հաղորդէ Վիեննայի Միսիթարեան վանուց միբարան Հայր Եկրաէս Ակիենանին: Նոյն:

Հատուածական Հրատ. Ն. Ակիենանի.- ԼԱ, 1923, էջ 551-2:

Ե.

ՍՈՒՍԱՅԱՖԱ ՔԵՍՍԼ ՓԱՇԱՆ ԱՐԵՎՍԱՄԱՅԵՐԻ 1915-1916 թթ. ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յրանսիայի Ազգային ժողովի ստորին պալատի 1998 թ. մայիսին ընդունած որոշումը՝ ճանաչել Հայերի ցեղասպանութիւնը, ինչպէս Հայասնի է, մեծ իրարանցում եւ աղմուկ առաջ բերեց Թուրքիայում: Երկրի պաշտոնական շրջանները Հատկապես խիստ Հարձակուձ սկսեցին բոլոր նրանց դեմ, ովքեր խոսում կամ գրում են այն մասին, թե 1915-1916 թթ. Օսմանյան կայսրութիւնում տեղի է ունեցել արեւմտահայութեան ցեղասպանութիւն: Այսպիսի կարծիք ունեցողներին Թուրքական իշխանութիւնները Համարում են իրենց երկրի թշնամիներ:

Զարմանալին, սակայն այն է, որ Թուրք աղմկարարները «մոռանում են» այն իրողութիւնը, որ Հայութեան Մեծ Եղեռնի փաստը զեռու տասնյակ տարիներ առաջ Հրապարակորեն ընդունել է նաև Թուրք Հայասնի նացիոնալիստ, Թուրքիայում այսօր գրեթե սրբազան Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը («Թուրքերի Հայրը»): Իսկ այն է, որ Թուրքական Հանրապետութեան Հիմնադիր, նրա առաջին պրեզիդենտ Մուստաֆա Քեմալը 1926 թ. Հունիսի 22-ին Անկարայում շվիցարացի լրագրող էմիլ Լիկտերրանտի Հետ ունեցած Հարցազրույցի ժամանակ, խոսելով Օսմանյան կայսրութիւնում 1915-1916 թթ. տեղի ունեցած բարբարոսութիւնների մասին, ասել է. «Երիտթուրքերը պետք է պատասխան տային մեր Հպատակ մի քանի միլիոն քրիստոնյաների Համար, որոնք դամանորեն արսորվեցին իրենց Հայրենի օջախներից ե ոչնչացվեցին»: (Young Turkey Party, who should have been made to account for the lives of millions of our Christian subjects who were ruthlessly driven in masse from their homes and massacred):

Այս տողերը տպագրվեցին «Լուս-Անջելես Իբրզամիներ» թերթի 1926 թ. օգոստոսի 1-ի Համարում: Անցել են շատ տարիներ, բայց ոչ ոք չի հերքել նշված Հրապարակումը:

Յրանախացի Հայտնի Հրապարակխոս Պոլ յուս Վուսն իր մի շարք աշխատություններում և մասնավորապես «Ալեքսանդրեոսի աղետը» աշխատության մեջ, որ լույս է տեսել Փարիզում, Փրանսերեն, 1938 թ., գրել է, որ Մուստաֆա Քեմալ փաշան 1919 թ. Հունվարի 27-ին Ստամբուլի ռազմական գաղտնարանում տված իր ջեզմունքներում երիտթուրքերի պարագլուխներ էնվեր, Թալեաթ, Ջամալ փաշաների և Երանջ զործակիցների մասին ասել է, որ «Նրանք Հաստատել էին բուսակալության բոլոր ձևերը, կազմակերպել տեղահանություն և կոտորած, նրանք այրել էին ծովեր երեսկաներին՝ Երանջ վրա նավթ լցնելով, բուսարարի կանանց և երիտասարդ աղջիկներին՝ ոտքերն ու ձեռքերը կապած ծնողների աչքերի առջև, խլել աղջիկներին Հայրերից ու մայրերից, բուսազրավել շարժական ու անշարժ գույքը և Միջագետքում թշվառ վիճակում գտնվող մարդկանց քաղաքի՝ ճանապարհչին զործարքելով ամեն տեսակի դաժանություն: Նրանք նավակներ են նստեցրել Հազարավոր անմեղ մարդկանց և ջրախեղդ արել ծովում: Իրենց մարդկանց միջոցով Հայտարարել են մահճակալանություն ընդունելու անհրաժեշտություն... Սովազած ծերունիներին Հարկազրում էին քայլել ամրիներով, քշում նրանց Հարկադրական աշխատանքի... Կանանց նետում էին Հասարակաց տներ. դնում նրանց այնպիսի պայմաններում, որոնք նախորդը չունեն ոչ մի ազգի պատմություն մեջ»:

Ինչպես տեսնում ենք, Մուստաֆա Քեմալն անվերապահորեն ընդունել է Հայերի ցեղասպանության փաստը: Ինչո՞ւ: Համենայն դեպս ոչ այն պատճառով, որ նա եղել է Թուրքիայի թիշնամի: Գուցե նա եղել է Հայաստանի: Ի Հարկե, այդ ևս բացառվում է: Հանրահայտ է, որ 1920-1922 թթ. Քեմալ փաշան Հայերի ու հույների նկատմամբ իրագործեց դաժան ցեղասպանության քաղաքականություն: Բավական է Հիշել նախորդ բաժնում մեր բերած փաստերը, թե ինչպիսի բարբարոսություններ կատարեցին քեմալիստ ազգայնամուլները 1920-1921 թթ. Արևելյան Հայաստանում և 1922 թ. Իզմիրում (Ջմյուռնիայում):

Ավելորդ չեմ Համարում նշել Հետևյալ Հանգամանքը ևս. Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիայի պետական արխիվներում պահվում են գաղտնի և խիստ գաղտնի բնույթի շատ փաստաթղթեր, որոնց մի զգալի մասը գեներալ 1919 թ. Հրապարակել է Յուսանես Լեպախուսը «Գերմանիան և Հայաստանը» գերմաներեն մեծածավալ գրքում: Այստեղ զետեղված փաստաթղթերում բազմեց խոսվում է այն մասին, որ 1915-1916 թթ. երիտթուրքերի (իթիխանականների) կառավարությունը նախօրոք կազմած ծրագրով ու ամենաալայրազ ձևերով իրագործել է արևմտահայերի Գեներալը: Հարց է ծագում, ինչո՞ւ մինչև այսօր ոչ մի Թուրք պատմաբան չհերքեց այդ փաստաթղթերը: Նկատենք, որ չեն հերքված նաև նման կարգի արխիվային այն նյութերը, որոնք Հրապարակվել են Ալստոր-Հուսեյնյանյում ու Բուլղարիայում: Հիշենք, որ այս երկու պետությունները ևս 1914-1918 թթ. պատերազմի ժամանակ նույնպես Թուրքիայի դաշնակիցներն էին և բնական է, որ չէին կարող կեղծ փաստաթղթեր Հորինել իրենց բարեկամ պետության դեմ:

Հայտնի է, որ Մեծ Եղեռնի արևմտահայությունյան 1915-1916 թթ. ցեղասպանության վերաբերյալ Թուսաստանի, Յրանախայի, Միացյալ Նահանգների և մի շարք այլ երկրների պետական արխիվներում ևս պահվում են Հարուստ նյութեր, որոնց մի զգալի մասն արդեն Հրապարակվել է: Թուրքական կառավարության անօրինակ ոճրագործությունների մասին կան բազմաթիվ անհերքելի փաստեր և վկայություններ մեծ ողբերգության ժամանակակիցներ ու ակամատեսներ Յ. Լեպախուսի, Ա. Վեզնեբի, Հ. Շույուրեբի, Ջեյմս Բրայսի, Ա. Թոյրբի, Յուս. Վեսելովսկու, Վ. Գորդլևսկու, Հ. Մորգենթաուի, Հ. Գիրբոնսի, Հ. Բարբիի, Յ. Նանսենի, Գ. Պալաքյանի, Պոլս Հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսի և որիշների Հիշողություններում ու աշխատություններում, ինչպես նաև Հետապետում տարբեր լեզուներով լույս տեսած ուսումնասիրություններում, որոնց թիվը բավական մեծ է (տես Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանությունը. մատենագիտություն. Երևան, 1995):

ՔԵՄԱԼԱԿԱՆ ՋՈՐՔԵՐԻ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԷԼՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ՎԵՐՃԻՆ ԵՎ 1921 Թ. ՍՎՋԲԵՐԻՆ

1920 թ. աշնանը քեմալական թուրքիայի արևելյան զորաբանակը, որի հրամանատարն էր ռուսիտա Քյազիմ Կարաբեքիր փաշան, ներխուժելով Արևելյան Հայաստան, խնդիր ուներ ոչ միայն ոչնչացնել երկրի պետականությունը, այլև դաժանորեն իրագործել արևելահայության ցեղասպանությունը: Սակայն Անկարայից ստացված հրահանգների համաձայն ռազմաշունչ փաշան պետք է խիստ զգուշորեն պահեր ջարդարարական այդ ծրագիրը և հանգես զար խաղաղասերի դիմակով: Հետաքրքիր է, որ, ինչպես ճիշտ նկատել է պատմաբան Վ. Դադրյանը 1995 թ. անդլերենով հրատարակված «Հայերի Գենոցիդի պատմությունը» իր ծավալուն աշխատության մեջ, թուրքական զորքերի այս արշավանքը մեծ ոգևորություն առաջացրեց արտասահման փախած երիտթուրքերի պարագլուխներ, Հայության գահճիճներ Թալիսի, էնվեր, Ջեմալ փաշաների և մյուսների շրջանում: Բնորոշ է, որ նրանք ողջունի նամակներ հղեցին Կարաբեքիրին:

Հայտնի է, որ քեմալիստները չկարողացան իրագործել իրենց նպատակը, քանի որ ինքնակազմի իրապետների 11-րդ բանակը, վճռականորեն պաշտպանեց Ռուսաստանի դարափոր բարեկամ Հայ ժողովրդին և ստիպեց Հայության նոր ջարդարարներին հեռ քաշվել Շիրակից և մյուս գավառներից: Բայց, դժբախտաբար, մինչ այդ թուրքական զորքերը այս անգամ էլ կատարեցին ոչ քիչ ջարդարություններ ու բարբարոսություններ:

Քեմալիստների կողմից Արևելյան Հայաստանում կատարած արյունոտ զործողությունների մասին հարուստ նյութեր են պահպանում Հայաստանի Ազգային արխիվում: Ներկա պարագային, սակայն, տպագրում ենք նրանցից որոշ էջեր միայն: Դրանք կարևոր տեղեկություններ են պարունակում կատարված ողբերգական անցքերի և մասնավորապես այն զանգվածային կոտո-

րածների մասին, որոնք տեղի ունեցան Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի գավառներում ու Հարևան շրջաններում: Արժեքավոր են հատկապես ինքնակազմի Հայաստանի իշխանության գանազան պաշտոնական մարմինների կողմից կազմված զեկուցագրերն ու տեղեկագրերը, կոտորածներից փրկվածների, ականատեսների ցուցմունքները և այլ նյութեր:

Արխիվային նյութերում կան նաև օտարերկրյա քաղաքացիների Հետաքրքիր վկայություններ: Ռումինացի Վասիլի Իոնեսկոն, որպես ականատես, գրել է Կարսում և Ալեքսանդրապոլում թուրքերի կողմից կատարված զազանությունների մասին: Զաչուրի շրջանում տեղի ունեցած կոտորածների վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են հայտնում Դարաքիլիսայում գործող Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչ Ջորջ Ֆ. Գրանալը, Վրաստանի կապի միսիստություն աշխատակից Կոստանոշվիլին և ուրիշներ:

Հրապարակվող վավերագրերը պահվում են Հայաստանի Ազգային արխիվում: Առանձին դեպքերում մենք նրանցում կատարել ենք քննության առարկային չվերաբերող որոշ կրճատումներ, այդպիսիք նշանակելով կախման կետերով: Վավերագրերում խուսափել ենք հատուկ անունները կամ տեղիանները միօրինակ զարմանելուց (Կարս, Դարս, սակյար, սակեր ևն): Եթե փաստաթղթի թարգմանական լինելու վերաբերյալ նշում չենք կատարում, ուրեմն հրապարակվողը քնազրի է: Աշխատությունը մանրամասնություններով չմանրաբեռնելու համար ավելորդ նկատեցինք առանձին վավերագրերի ունեցած հրապարակումների մասնակցություն կազմելը: Մեր աշխատություններին ծանոթ ընթերցողները գիտեն նրանց տեղը:

Բացատրութիւն Մեծ Ղարաքիլիսայում և շրջակայքում
 Թուրքերի կողմից կոտորած Հայերի դիակներին նկարահանումների
 կապակցութեամբ

Թարգմանութիւն ռուսերենից

Նկարները արված են 1918 թ. նոյեմբերի 1-4-ը, տեղի ունեցած դեպքերից հինգ ամիս անց:

Հայ բնակչությունը և զորքը, թուրքերի ճնշման ներքո նահանջելով, հավաքվեցին Մեծ Ղարաքիլիսայում, որը գրավելուց հետո, թուրքերը իրագործեցին Հայ բնակչության տղամարդկանց նկատմամբ ըստ ամենայնի կազմակերպած ոչնչացումը: Մեծ Ղարաքիլիսայում, ըստ տեղական բնակիչների հաղորդման, մնացել է 1500-2000 Հայ զինվոր ու սպա, որոնք ստիպված եղան զերի հանձնվել: Թուրքերին հավատալով, նրանք Հանձնեցին իրենց զենքը, իսկ շատերն էլ, որպես իրենց խաղաղասիրական վերաբերմունքի վկայություն, ձեռքերին սպիտակ շոր կապեցին:

Մի տեղ հավաքելով 17-ից 50 և ավելի տարիքի բոլոր Հասուն տղամարդ բնակչությունը, թուրքերը նրանց հանդեպ կատարեցին աննկարագրելի դաժանություններ: Դժբախտ զոհերի ձեռքերը կապելով թոկերով, տանում էին նրանց գնդակահարման: Ժողովրդի ոչնչացումը կատարվում էր հեղեղատաներում, բարձր սարերում, կիրճերում, խրամատներում, ջանալով արշավելով պայմաններ ստեղծել, որի ժամանակ կարելի կլիներ մահը ենթադրելու ուսումնական իրադրություն պատճառով: 400 կապակցված տղամարդկանց մի խումբ թուրքերը տարան երկաթգծի պատաստով դեպի Փամբակ գետի ափը «Բաղալի աղբյուր» կոչված վայր, և այդտեղ գնդակահարելով, սրբերով, հրացանի կոթերով հարվածելով առափնյա բարձրուկների վայր նետեցին, և այնտեղ առանց թողվելու մնացին նրանք, մինչև Հայկական զորամասերին Մեծ Ղարաքիլիսան հանձնելը: Այս խմբում գերակշռում էր խաղաղ բնակչությունը: Ենթերի և վայրի գազանների կողմից կրճատված մարդկային ոսկորները ցրված էին շրջապատում:

Առաջին շարքի առաջին նկարում երևում են թոկերը, որոնցով կապված են եղել զոհերը. այդ նույն շարքի երկրորդ նկարում երևում են Փամբակ գետի ափերին ցրված գանգեր ու ոսկորներ:

Երկրորդ շարքը իրենից ներկայացնում է Հենց Մեծ Ղարաքիլիսայում սպանվածների նկարները: Մեծ Ղարաքիլիսայում անտառից ոչ հեռու կա մի փոքրիկ հեղեղատ, այդ հեղեղատի մոտ սպանված է մոտ 600 Հայ զինվոր: Նրանք կապակցված, տարվել են դեպի հեղեղատը, որի մի ափին թողել են Հայերին, իսկ մյուս ափին տեղադրել են թնդանութները և այս ափից թնդանութազարկով սպանել են բոլորին: Կատարված է 2-րդ շարքի 6 նկար: 3-րդ նկարում պարզ երևում է 2-րդ հրետանային գնդի կամավորը, որի առաջ զրկված է պայուսակը, սրբիչը: 5-րդ նկարում Նոդի տակից երևում են թոկերով իրար կապված մարդկային մարմնի մասեր:

5-րդ նկարը ներկայացնում է վերոհիշյալ հեղեղատի ընդհանուր պատկերը: Այդ հեղեղատում բոլոր սպանվածների ձեռքերը կապված են թոկերով, լարերով, կաշեգոտիներով և այլն: Այս բոլորը երևում է 2-րդ շարքի բոլոր նկարներում:

3-րդ շարքը ներկայացնում է 12 սպանված սպանների նկարները, որոնք միմյանց են կապվել հաստ թոկերով, տարվել են անտառ և այնտեղ գնդակահարվել: Աջից առաջին նկարը ենթապարունչիկ Ավագյանցիին է: 2-րդը պրապորշչիկ Հարությունյանցիին է: 3-րդը պրապորշչիկ Ղազիյանցիին է: Մնացյալ դիակները գտնվում էին գերեզմանի խորքում, և խիստ քայքայված լինելու պատճառով դուրս չեն բերվել: Նրանք բոլորը թաղվել են տեղի Հայերի կողմից, մեկ եղբայրական գերեզմանում, անտառում գնդակահարման վայրից ոչ հեռու:

4-րդ շարքում կա երկու նկար. դա, այսպես կոչված, երկաթգծի աշխատողների դիակներն են. Մ. Ղարաքիլիսան գրավելու երրորդ օրը թուրքերը Հայտարարեցին, որ երկաթգծի աշխատողները աշխատանքի դուրս գան, և որ երաշխավորում են նրանց սպահնությունը: Դյուրահավատ բնակչությունը Հա-

վաքվեց, և թուրքերը նրանց կապկպելով տարան Մ. Ղարաքիլիսայից յոթ վերստ հեռու, բարձր մի սար, որի գագաթից սկսվում է Մեծ ձոր կոչված կիրճը: Այնտեղ նրանք, 400-ից ավելի մարդ, կոտորվել են և թողնվել առանց թաղվելու մինչև օրս: Շատ դիակներ հնգևզը կիրճով տարել է ցած և ամբողջ կիրճը, բարձունքից մինչև ստորոտը, սփռված է դիակներով: Առաջին նկարը՝ կիրճի ընդհանուր տեսքն է. 2-րդ նկարը առանձին տեսքն է, ուր երևում են թոկերը: Շատերի ոսկորները կրճտոված են զազանների կողմից, հազուստները ցիրուցան են:

5-րդ շարքի պատկերները ներկայացնում է Կարաբաշիյանցի ձմեռատան նկարը, Հաջի-Ղարա գյուղից ոչ հեռու: Ղարաքիլիսայից այս ձմեռանոց են բերվել կապկպված տղամարդիկ և խցկվել են այդ ձմեռանոց: Ձմեռանոցը Հրկիզվեց, և մարդիկ ողջողջ այրվեցին, իսկ նրանց, ովքեր պատահամար դուրս էին փախչում ձմեռանոցից, այդտեղ կանգնած թուրք ասկյարները, որ հիանում էին աննկարագրելի տեսարանով, գնդակահարում էին: Այժմ, ձմեռանոցից ոչ հեռու գտնվում են երեք խորը գերեզմաններ՝ լցված գիակներով: 1-ին և 2-րդ նկարները ներկայացնում են ձմեռանոցի ներքին տեսքը, իսկ 3-րդ նկարը՝ ընդհանուր տեսարան է:

Դարբաս գյուղից ոչ հեռու՝ Ղշլաղում և շատ այլ վայրերում, նույնպես կոտորված են շատ հայեր: Բոլոր սպանվածները բերված են Մեծ Ղարաքիլիսայից: Տեղի բնակիչների մոտավոր հաշվումներով սպանված են մինչև 5000—7000 մարդ: Կանանց և աղջիկների մեծ մասը բռնաբարված է, ունեցվածքը մեծ մասամբ թալանված է:

Ք. 114, ց. 2, գ. 33, թ. 51, 52:

Հեռագրի պատճեն

Ղարաքիլիսայից Երևան՝ Զորահրամանատարին

17 նոյեմբերի, 1920

Երևան

Թարգմանություն ուսուցիչից

Նոյեմբերի 17-ին Ղալթաղչիից փախած, Ղարաքիլիսայից եկած 65-ամյա Վարդան Աֆրիկյանը հետևյալ տեղեկությունը հայտնեց. «Նոյեմբերի 14-ին, հետ ճաշու թուրքերը մտան Ղալթաղչի գյուղը մեկ թնդանոթով, մեծ թվով զնդացիներով: Սպանվածներ և վիրավորներ նրանց հետ չկային: Մենք նրանց դիմավորեցինք հաց ու աղով: Նրանք հայտարարեցին, որ մենք չվախենանք և չփախչենք, քանի որ նրանք գործ ունեն թուրքահայերի հետ: Մեր առաջարկությունը՝ զորքի համար ճաշ պատրաստելու, նրանք մերժեցին, ասելով, որ կճաշեն վաղը: Մինչև մուխը ընկնելը, նրանք շրջապատեցին գյուղը և հետո պահանջեցին գյուղի քահանային և երեք ազդեցիկ գյուղացիների ու նրանց վերցնելով իրենց հետ, իրենց զորքով հեռացան Փոքր Կապանակի ուղղությամբ՝ թնդանոթը թողնելով գյուղում: Նոյեմբերի 15-ին՝ ճաշի մամին, թուրքերը մեծ ուժերով և երեք զորասյունով նորից եկան: Մեկ զորասյունը մտավ Ղալթաղչի, մյուսը գնաց Կարաբոյա, իսկ երրորդը՝ Աղբուլաղ: Մինչ մուխը ընկնելը, նրանք գյուղը պահեցին պաշարված վիճակում, իսկ երեկոյան գյուղի ամաղից պահանջեցին հավաքել բոլոր գյուղացիներին և նույնիսկ երեխաներին, ձերբերին ու կանանց, իբր ցուցակագրման համար, սպառնալով, որ ով չներկայանա, կամ թաքցնի, կախաղան [կ]արբժարացվի, իսկ նրանց տները Հրի կմատնվեն: Բոլորին հավաքելով նրանք առանձնացրին բոլոր տղամարդկանց և 20 հոգանոց խմբերով, յոթ ասկերների ուղեկցությամբ ինչ-որ տեղ տարան: Այդ խմբերը նրանք խցկում էին տները և այնտեղ կոտորում: Նրանք բոլորից վերցրին զանակներ[ը] և փողերը, որից Հե-

սու 4-ական մարդ մտցնում էին տները և սվիններով խողխողում: Սվինների առաջին հարվածից հետո ես ճշալով ընկա գետին: Մյուսները սկսեցին ընկնել ինձ վրա, և այսպիսով ակերները չէին կարող իմանալ, որ ես կենդանի եմ: Դիակների տակից ես լսում էի սպանվող կանանց և երեխաների ճիչերն ու Հեծկլտանքները: Երևի նրանց հետ դատաստան տեսնելուց հետո, նրանք սկսեցին կանանց և երեխաներին կոտորել: Վերջիններին կոտորելուց հետո արդեն մուլթն էր, և թուրքերը լույս վառեցին: Վիրավորներին հայհոյելով՝ նրանց սպանում էին սվիններով: Այդպիսով նրանք փոքրից մինչև մեծ կոտորեցին ողջ գյուղը: Գիշերը ինձ հաջողվեց դուրս գալ դիակների տակից և տներին միջով, որոնք նույնպես լցված էին դիակներով, հասնել գյուղի ծայրը: Թուրքերը խարույկներ էին վառել և ցնծում էին: Ես աննկատ փախա Փոքր Կապանակի կողմը ու, անցնելով երեք վերստ, շրջվեցի Ավզի-բեկ գյուղի կողմը և նոյեմբերի 16-ի լուսաբացին եկա Համամյու»:

Հակառակորդի մասին ես չկարողացավ ոչ մի տեղեկություն տալ:

Սեպուհ

Ք. 200, ց. 1, գ. 602, թ. 322

№ 3

Հեռագրի պատճեն

Ղարաբաղի իսլամյան զորահրամանատարին

17 նոյեմբերի, 1920

Թարգմանություն ուսուսերենից

Նոյեմբերի 16, ժամը 20-ի ռազմական գործողությունների ամփոփագիր.

Մեր հետախուզությունը պարզել է, որ Ղալթաղչի և Աղբուլաղ գյուղերը գտնվում են Հակառակորդի ձեռքում: Հակառա-

կորդի հետախուզները հասել են մինչ Ղալթաղ գյուղ և պահանջել են 800 մարդու համար տեղ պատրաստել: Հակառակորդը Բյուլուջան և Թոփալու գյուղերից պահանջել է 15 մարդ: Ղալթաղչից փախած մի կնոջ ասածով, Հակառակորդը երկու անգամ գրավել է այդ գյուղը, կոտորել է ողջ բնակչությանը չխնայելով նույնիսկ կանանց, երեխաներին և ծերերին: Պարզվում է, որ նոյեմբերի 16-ի մարտերի ժամանակ Հակառակորդը կորցրել է մեծ թվով սպանվածներ և վիրավորներ, որոնց չեն հասցրել տանել: Նոյեմբերի 16-ին Մյանիս ուղարկված հետախուզները մատախուղի պատճառով ոչինչ չեն նկատել: Նոյեմբերի 17-ին Նոր-Միխայ-լովկայի ուղղությամբ ուղարկում եմ հետախուզներ:

Սեպուհ

Ճիշտ է՝ փոխտեղակալ,

Հեռագրի գեներալ՝ Նազարբեկով

Ք. 200, ց. 1, գ. 602, թ. 307:

№ 4

Ջորբերի հրամանատարի շտաբի ամփոփագրից

17 նոյեմբերի, 1920

Թարգմանություն ուսուսերենից

Ջաջուռի շոկատ

Մեր հետախուզության կողմից պարզված է, որ Հակառակորդը նորից գրավել է Ղալթաղչի, Աղբուլաղ գյուղերը: Ղալթաղչի գյուղում թուրքերը կոտորել են ողջ հայ բնակչությանը: Ըստ ստացված լրացուցիչ տեղեկությունների, նոյեմբերի 14-ի և 15-ի կռիվներում թշնամին կրել է մեծ կորուստներ վիրավորներով և սպանվածներով, որոնց դիակները չեն հասցրել տանել:

Բաշ-Ապարանի ջուկում

Թուրքերը դրավել և կրակի են տվել Խինվայի գյուղը, բնակիչներին զուրս են քշել դեպի Չիրախլի գյուղը և այրել են նրանց ցախատներում:

Կասիտան (ստորագրութուն)
Ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 321:

№ 5

Մոսկվայի կոմիտեի պաշտոնյաներից Արամ Լյուլիկյանի վկայութունները Ղարսի դրության մասին

[23 դեկտեմբերի, 1920]

Լյուլիկյանը փախել է Ղարսից դեկտեմբերի 9-ին, ես այնտեղ թաքնված է եղել ամերիկացիների մոտ: Նրա ասելով երբ թուրքերը առաջին անգամ մտնում են Ղարս, զորքն ու խոժանը սկսում են թայանել և կոտորել Հայերին առանց սեռի և տարիքի խտրության, մոտավորապես տասնհինգ Հազար հոգի զոհ են գնում այդ կոտորածին: Կոտորածից ազատված տղամարդկանց պարբերաբար ուղարկում են դեպի Սարիղամիշ. մինչև իր մեկնելը թե քաղաքից և թե շրջակայքից ուղարկված կլինեն մինչև 30000 հոգի տղամարդ - 15-ից մինչև 60 տարեկան: Բուժաբուրության դեպքեր Հայ կանանց Հանդեպ շատ են պատահում: Թուրք սպայությունը և զորքը վարվում են Հայ կանանց Հետ այնպես, ինչպես ցանկանում են: Այժմ քաղաքում Հայ տղամարդ գրեթե չկա, մնում են միայն մասնագետները, որոնց թուրքերը օգտագործում են, և մի տասնյակ թաքնվածներ ամերիկացիների մոտ կամ այլուր: Թուրք զորական իշխանությունը Հայ բնակչության ինչքը և դուրքը սիստեմատիկ կերպով թալանում է, ուղարկելով դեպի Էրզրում այն ամեն, ինչ որ փոխադրելի է: Էրզրումից և շրջակայքից սկսել են Ղարս գալ թուրք առևտրական-

ներ, որոնք առևտուրը իրենց ձեռքին են պահում: Բացի թուրքական թղթադրամից ուրիշ ոչ մի թղթադրամ կուրս չունի:

Ամերիկյան կոմիտեն գործում է, բայց սահմանափակ: Վերջերս տարիլ են նրանց պաշտոնյաներից մոտ 90 հոգի և ուղարկել Էրզրում, դեռ որբերին ձեռք չեն տվել: Քաղաքական կուսակցություններ չեն գործում: Նախ թուրքերը խոտացել են քաղաքացիական իշխանությունը Հանձնել կոմունիստ ընկեր Բաբանյանին, բայց Լյուլիկյանի մեկնելուց մի քանի օր առաջ ընկեր Բաբանյանը և իր որդին ձերբակալվում են թուրքերի կողմից, սուսմ են, որ նրանք էլ ուղարկված են դեպի Էրզրում:

Քաղաքում կլինի մոտ երեք ոտս զորք: Թաղամասերը փոխադրում են դեպի Էրզրում:

Ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 36:

№ 6

Ալեքսանդրապոլի Լեղկոմի գեկույցից Հայաստանի Լեղկոմին

25 դեկտեմբերի, 1920

Ալեքսանդրապոլ
Թաղամասություն և ուսանողներից

Քաղաքում տրամադրությունը տազնապալի է, ահա արդեն երկու շաբաթից ավելի է, որ քաղաքից տարվում է բացաճակապես ամեն ինչ՝ գյուղատնտեսական գործիքներ, շոգեքարչներ, հեռագրային և հեռախոսային սպարատներ, ավտոմեքենաների մասեր, մեքենաներ, կահկարասի և այլն: Մի խոսքով, բնակիչների ողջ ունեցվածքը տարվել է. գալառը ամբողջովին ամայացված է. բոլոր անասունները քշվել տարվել են. բնակիչների մի մասը սպանված է, մյուսները փախել են: Իսկ այժմ, երբ իրենց կողմից թալանված է ամբողջ ունեցվածքը և մոզովրդական տնտեսությունը հիմնովին քայքայված է, նրանք մեզ անվերջ այս կամ այն

պահանջներն են ներկայացնում, ոչ թե ինչ-որ բան մեզնից վերցնելու նպատակով, այլ որպեսզի սրեն մեր փոխհարաբերությունները և առիթ ստեղծեն ընդհարման համար:

Հեղինակ անդամ

Մ. Ջավադյան

Ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 11. և գ. 33, թ. 1:

№ 7

Հայկական ՍՍՀ Հեղինակի ներկայացված զեկուցագրից

28 դեկտեմբերի 1920

Երևան

Թարգմանություն Բուսնից

Ալեքսանդրապոլի գավառում և Ախալքալաքի շրջանում սրի են քաշվել մոտ 30 գյուղ, մի մասը, որ հասցրել է փրկվել, գտնվում է ամենաթվառ վիճակում: Քաղաքում ամբողջ պարենը թաքցված է՝ թուրքերի բռնազրավումից վախենալու պատճառով...: Բռնազրավելու գործում թուրքերը իրենք իրենց գերազանցեցին: Տարվում է ամենայն ինչ, նույնիսկ կրոնական բովանդակություններ...: Չբավականալով իրենց զգեստով, նրանք փողոցներում նույնիսկ օրը ցերեկով, կողոպտում են քիչ թե շատ լավ կոշիկներ կամ վերարկու ունեցող քաղաքացիներին...: Նրանց կառավարման սկզբնական շրջանում էրզրում են ուղարկվել 14-ից 28 տարեկան բազմաթիվ երիտասարդներ, Կարսից եկածներին տեղեկություններով, նրանց լրիվ մերկացրել են, հագուստի փոխարեն տվել են պարկեր և ստիպել են աշխատել այդպիսի սառնամանիքին, իհարկե նրանցից շատերը մահանում են քաղցից ու ցրտից: Կարմիր բանակի նկատմամբ թուրքերի վերաբերմունքը թշնամական է, թեև նրանք փորձում են թաքցնել դա:

Մի սպա ինձ բացարձակ ձևով հայտնեց, որ ուսու բուլլետեններին պետք է կոտորել:

Ասորազրույթյուն

Հոկտ. Սոց. Մեծ ուկույ. և Սով. իշխ. Հաղթանակը Հայաստանում

(ժամատարների ժողովածու), Երևան, 1960, էջ 438-439

(այսուհետև՝ Փաստաթղթերի ժողովածու):

№ 8

Պատճեն

ՀՍՍՌ Ալեքսանդրապոլի գավառի 2-րդ գավառամասի կոմիտարը
Երևանի Հեղինակին

1 հունվարի 1921

Քյավթաուլու

Թարգմանություն Բուսնից

Անցյալ 1920 թվականի դեկտեմբերի 26-ին Քյավթաուլու ժամանեց թուրքական մի ջոկատ, բաղկացած 36-րդ թուրքական եգերական գնդից:

Քեմալական շարժումը, որպես ազգային շարժում, սկզբից իսկ մեր առջև բաց արեց իր քաղաքական նպատակը՝ Հայաստանի ամայացնելը, լինի դաշնակցական, թե սովետական, անկախ կուսակցություններից Հայերի ոչնչացնելը...:

Պարենամթերքները ամբողջովին տարված են, բոլոր անասունները՝ հափշտակված, մարդիկ սարսափահար փախել են անտառները, գյուղերը վերջնականապես ավերված են, սև ամպեր են կուտակվել Հայկական տիրալի իրականության վրա, ոչնչանում է ժողովուրդը, ոչնչանում է Հարստությունը, մոտենում է սովա-

մահութեան դատան ուրվականը, մանավանդ, որ առջևում ոչ մի լավ բան չի նախատեսվում...:

Կոմիսար
խոսկականի Հետ ճիշտ է՝
ՀՍՍՒ պատգամավորութեան քարտուղար
(ստորագրութեան)
7 մարտի 1921
Մոսկվա
Փ. 114, ց. 2, գ. 43, թ. 21,
նաև՝ Փաստաթղթերի ժողովածու, էջ 463:

№ 9

Չեզոք գոտու Արմինիստրացիայի կոմիսարի օգնականը
Կենտրոնական Հեղկոմի նախագահ ընկ. Կասյանին

2 Հունվարի, 1921
Չեզոք գոտի

Տանիկների վերաբերմունքը վերջին ժամանակ փոխվել է դեպի ժողովուրդը, նրանք ոչ մի միջոց չեն խնայում ժողովրդի քայքայման և ճնշման համար, ամեն օր տանկական զորավաճ վայրերի գյուղերից գալիս են Չեզոք գոտի մեզ մոտ և գանգատվում են նրանց ավարառութեան, բռնաբարութեան և սպանութեանների համար, բացի դրանից ամսի 1-ին եկան գյուղացիները և Հայտնեցին, որ առաջինը եղող տանկական հրամանատարութիւնը Հավաքեց ամեն մի նյութական բանից «բայրա», որի մասին ունենք ստացականներ և փաստաթղթեր, ներկայիս փոխվեցին, նրանց տեղը եկել են նորերը, կրկին պահանջում են բայրա, չնայած որ ունենք Համապատասխան ստացական: Այս գիշեր ստացաք 4-րդ գավառամասի կոմիսարից գրութիւն, որը նկարագրում է ժողովրդի խուճապի մեջ լինելը, նրանք գալիս են գյուղերը և ան-

պաշտպան գյուղացիութեանը թալանելուց Հետո, կատարում են անխնա սպանութիւններ, այս մի քանի օրվա ընթացքում միայն 4-րդ գավառամասում սպանված են Հայտնապես 200-ից ավելի Հայ գյուղացիներ, մենք մեր միջոցներով անզոր ենք այդ բաների առաջը առնելու, ուստի դիմում ենք ձեր կարգադրութեանը, Հայտնեցի՛մք ձեզ ի գիտութիւն, միևնույն ժամանակ խնդրում ենք դիմել կարուկ միջոցների, ուր հարկն է և ազատել խեղճ քայքայված գյուղացիութեանը այդ դրութիւնից:

Կոմիսարի օգնական Գալոյան
Փ. 114, ց. 2, գ. 43, թ. 30:

№ 10

Իգգիբըի ուսուցիչ Խշտոյանի Հայտարարութիւնը Ղարսի
դեպքերի մասին

6 Հունվարի, 1921
Երևան

Խշտոյանը փախել է Ղարսից դեկտեմբերի 7-ի գիշերը. Թուրքերը Ղարս գրավելու նրան հաջողվել է թաքնվել ամերկացիների մոտ: Թուրք զորքը քաղաք մտնելու, երեք օր անխնա և անպատիժ թալանել, բռնաբարել և կոտորել է: Երեք օրից Հետո փաշան հրամայել է մաքրել քաղաքը դիակներից, համաձայն Մոսկվայի Գույրերի կոմիտեի Հայտարարութեան, որ ականատես են եղել այդ մաքրումին, դրեթե յուրաքանչյուր տնից մեկ-երկու դիակ հանվել է: Հայ ազգաբնակչութիւնը այժմ զրկված է իր ամբողջ ունեցվածքից և ապրում է ստակալի դրութեան մեջ. սովա-մահութեան դեպքեր արդեն Խշտոյանի Ղարսում եղած միջոցին պատահած են: Թուրք զորական իշխանութիւնը զրազել է բոլոր վառելիքը. նույնիսկ Ամերիկայան Կոմիտեի Հաստատութիւնները մնացել են առանց վառելիանյութի:

Երեք օրից Հետո ընդհանուր կոտորած էլ եղել, բայց մասնակի սպանություններ Հաճախ պատահելիս են եղել: Բռնաբարությունները թուրք զորքի և զինվորի կողմից շարունակվում են, ասկյարները գիշերով, մտնելով Հայ տներ, պահանջում են կիներ: Ամերիկյան Հաստատությունները ևս գերծ չեն ասկյարների գիշերային այցելություններից: Խշոտյանը ականատես է եղել մի գիշեր, երբ ասկյարները գալով, իր թաքնված Ամերիկյան տնից պահանջել և ըռնի տարել [են] երկու կիներ, որոնց վերադարձրել են երկու ժամ պահելուց Հետո:

Թուրք իշխանությունը 18 տարեկանից մինչև 30 տարեկան տղամարդիկ Հավաքել է, գզեատները Հանելուց Հետո ուղարկել է Սարիզամիշ, մի ուսու, որ Հայ կարծվելով ուղարկված է եղել Սարիզամիշ, վերադարձվել է և պատմել, որ Սարիզամիշում ռազմագերիներին և տարագրյալներին դրությունը ստակալի է, թե զինվորներին և թե սպաների զգեստները առել են և սովել մեղոքից կարված ինչ-որ մի Հագուստ, աշխատեցնում են չարաչար, տալով միայն կես ֆունտ շաց և երբեմն բրնձալուր:

[Հարցաքննել է Արտգործմինիստրության
գրասենյակի վարիչ Վ. Թերբայանը]
թ. 114, ց. 2, գ. 43, թ. 32:

№ 11

Մարիամ Ջավարյանի Հայտարարությունը Ջաջուռի մոտ Հայ
գաղթականներին կողոպտելու մասին

10 Հունվարի, 1921
Երևան

Սանահինի մոտ և մեջը թափված կա անպատասպար 6000
Հայ գաղթականություն. Վրաց կառավարությունը կատեզորիկ
կերպով մերժում է նրանց թույլատրել շարունակել իրենց ճանա-

պարհը Վրաստանի միջով. Սանահինի Վրաց իշխանությունը
Հայանել է, որ եթե Հայաստանի կառավարությունը չուտով այդ
գաղթականության մասին որոշ կարգադրություն չանի, ինքը
ստիպված կլինի գաղթականներին դուրս Հանել Վրաստանի տե-
րիտորիայից:

Տիկին Ջավարյանը, որ եկել էր ամսի 21-ին Թիֆլիսից,
գաղթականների գործերով դիմում է Ղարաքիլիսայի Հեղկոմին,
որպեսզի նա միջոցներ ձեռք առնե այդ խեղճ գաղթականներին
փոխադրել Հայաստան: Հեղկոմը Հայտնում է, որ ինքը լիազոր-
ված չլինելով այդ Հարցում, ավելի լավ է դիմել Երևան ընկ. Կաս-
յանին: Մինչ այդ մի գնացք, բաղկացած Հինգ վագոններից լե-
ցուն գաղթականներով, Ղարաքիլիսայի Հեղկոմը ուղարկում է
ղեկ Ալեքսանդրապոլ: Գնացքում լինում է նաև Ղարաքիլիսայի
թուրք սպա իր Հետևորդներով: Գնացքը Ջաջուռի մոտ թունելի
մուտքի առջև կանգ է առնում մեքենան ձյունի մեջ խրվելու
պատճառով և մնում է երկու օր. Ջաջուռի թուրք զինվորները և
խուճանը, տեղեկանալով այդ մասին, գիշերով Հարձակվում են
գնացքի վրա և թալանում են գաղթականներին, շատերին թողնե-
լով միայն ներքին շորերով: Սարսափահար գաղթականությունը
ուղարկում է իրենցից մեկը Ղարաքիլիսե Հեղկոմին խնդրելով
նոր մեքենա՝ Հետ գնալու դեպի Ղարաքիլիսե, որովհետև այդ տե-
ղը մնալը իրենց սպանում է թուրքերի կողմից կոտորած: Հեղկո-
մը ուղարկում է խնդրված մեքենան, որը բերում է գնացքը Ղա-
րաքիլիսա՝ ահաբեկված գաղթականներով:

Մարիամ Ջավարյան
Ք. 114, ց. 2, գ. 43, թ. 39:

Հեռախոսագիր շտապ

Հայաստանի Հեղկոմի նախագահ ընկեր Կասյանին

11 Հունվարի, 1921

Մեծ Արթուրի

Հայտնում եմ, որ ամսին 11-ին առավոտյան ժամը 11-ին թուրքական 12 ասկերներ Հարձակվեցին Եկանյեար գյուղի վրա, և Հրացանաձգություն տեղի ունեցավ մեր և եկողների միջև. Հրացանաձգությունը տեղեց Հինգ բուսե, որից Հետո ասկերները թողեցին և փախան, զոհեր չկան ոչ մեկի կողմից: Խնդրում եմ Ձեր կարգադրությունը ուղարկել Ալեքս-պոլի թուրք Հրամանատարությունը, որպեսզի այդպիսի դեպքերը վերջ տրվեն, որը ահա կրկնվում է մի քանի անգամ և կարող են լուրջ Հետևանքներ ունենալ: Գրաված վայրերում ազգաբնակչության զրոյությունը խիստ վատ է, թալանից Հետո սպանությունները սովորական բան են դարձել: Համարյա թե մասսայական է, սպասում եմ Ձեր կարգադրությունը:

Չեզոք գոտի

Հեղկոմի նախագահ Գրիգոր Տեր Սարգսյան
Խ.Պ.Ք. Անուշավան Սարգսյան
Փ. 114, ց. 2, գ. 43, թ. 24, 25:

№ 13

Ալեքսանդրոպոլի Հեղկոմի անդամ Նահապետի վկայությունը

14 Հունվարի 1921

Ալեք-պոլ

Ամբողջ զավառը բաժանված է 8 զավառամասերի, որոնցից 4-ը Արվաշայի մյուս կողմն են գտնվում, որտեք բոլորովին դատարկ են: 1-ին զավառամասը ունի 34 գյուղ, այս գյուղերից

մնացել են կիսազավառված դրուժյան մեջ 4-ը միայն՝ Ղարաքիլիսա, Գյուզգբանդ, Թափաղոլլաք և Դիարչի: Մյուս գյուղերում ոչ մարդ կա և ոչ մի անասուն: Այս շրջանից տարած գերիների թիվը Հասնում է մոտ 8000-ի. բռնաբարված են բոլոր կանայք, չխնայելով նույնիսկ 12 տարեկան աղջիկներին. պատահել էր որ աչքովս նսա, որ սայլերով գյուղերից բերում էին խոտ, իսկ տակին թաքցրել էին կանանց, 2-3 անձ: Ահա դրուժյունը: 11 զավառամասից զբաղվել են միայն 6 գյուղ: Ղուլաթի և Ղուլիջան գյուղերը բոլորովին քանդել են. այս շրջանում սպանել են 150 մարդ. գերիների թիվը 200 է. բռնաբարված են կանանց 90%. բացի թալանից վերցրել են նաև ամբողջ տավարի և Հարստության 1/8 մասը. Վերջերս էլ Բիսվթառի գյուղում խոտերի դեզի մեջ սպանել են մեր կուսակցական 10-ը ընկերներին: 111 զավառամասը բոլորովին թույլ չտվին մեզից մարդ զնայու: Այս շրջանի 15 գյուղերի բնակիչներին գաղթեցրել են Ձիվթալի գյուղը, նրանց ամբողջ Հարստությունը թալանի մատնելով: Տարել են գերիներ, բայց անհայտ է թե ուր:

IV զավառամասի 39 գյուղից մնացել են Մոլլազողչա, Հոռոմ և Միազիտլու գյուղերը: Միայն կանայք: Մյուս գյուղերում ոչ ոք չկա: Գյուղը թալանեղծ Հետո կրակ են տվել. բացի այս գյուղից, մնացած մի քանի գյուղերն էլ քանդված են բոլորովին:

Ամբողջ զավառից տարել են 300000 (երեք Հարյուր Հազար տավար), որից 200000-ը տարված է Ղարսի շրջանի Բաշքյանդիկարի շրջանը, իսկ մնացածը այս կողմումն են ծախել:

Քաղաքից և զավառից տարած գերիների թիվն է 14140 անձ, սպանել են 4845-ը, բռնաբարված կանանց և աղջիկների թիվը 25 Հազարից անց է: Թալանած ցորենի և ալյուրի թիվը մեկ ու կես միլիոն փիթից անց է: Կարող եմ ասել, որ չուներք զավառ. ամբողջ զավառի 75 Հազար բնակչությունից 15-ը Հազիվ է մնացել, ոչ մի Հարստություն չկա. ամենուրեք ամայություն է. մեր միլիցիոներներից ոչ ոք չի կարող զավառ դուրս գալ: Դրանց կամ սպանում են և կամ անհետ կորցնում: Սպանված են մինչև այժմ մեզից 22 միլիցիոներ, որից 13-ը կուսակցական. սպանել են նաև

մեր 2 կոմիտարները: Գերի տանելիս նույնիսկ չէին խնայում մեր կուսակցական ընկերներին. տարված են 30-ից ավելի կուսակցականներ: Գիշերները մտնում են տները թալանում, կանանց բռնաբարում, իսկ տղամարդկանց տանում են ու սպանում: Դրությունը սարսափելի է...

Հեղկոմի անդամ Նահապետ
Փ. 114, ց. 2, գ. 43, թ. 5-7:

№ 14

Կարսի շրջանից ժխտատական Գևորգ Գևորգյանցի
վկայությունից

24 հունվարի 1921
Թարգմանություն Բուսերենից

Կարսի շրջանում թուրքական զազանությունների մասին կարող եմ վկայել հետևյալը. առհասարակ թուրք-քեմալականները քրիստոնյաներին, բացի մուսուլմաններից, վերաբերվում են թշնամաբար: Բոլոր քրիստոսաբողիքները, ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք, թաքնվել են թուրքերից: Կարս քաղաքում այժմ կարելի է հանդիպել միայն ծերերի, որոնց հաճախ քշում են հարկադիր աշխատանքի: Հայերին էրզրում ուղարկելու կապակցությամբ կասեմ Հետևյալ փաստերը. Կարսը զբաղեցրեց 5 օր անց, թուրքերը գերի ընկած բոլոր զաչնակ դիմորդներին, թվով 1500 մարդ ուղարկեցին էրզրում: Այնուհետև, բանտարկելով բոլոր քրիստոսաբողիքներին, մոտ երկու հազար հոգու, ուղարկեցին 18 վագոնով:

Ուղարկելուց հետո, ինչպես ասացի վերը, սկսեցին թալանել, բռնաբարել մնացածներին:

Հունվարի 10-ին Կարս բերեցին բազմաթիվ վիրավորների և պառկեցրին տեղական հիվանդանոցներում: Վիրավորների ա-

սաններից (իհարկե թուրք) թուրքերի և քրդերի միջև ինչ-որ տեղ կռիվներ են գնում, և վիրավորները այնտեղից են: Վերջին ժամանակներս ես վկա եղա, որ բազմաթիվ անասուններ, հացահատիկ Ալեքսանդրապոլից ուղարկեցին Կարս: Հունվարի առաջին օրերին Կարսից զորքեր ուղարկվեցին Արդահանի ուղղությամբ:

...Առհասարակ քրիստոնյաների զրությունը անտանելի է: Ամեն թուրք դիմվոր ու սպա իր պարտքն է Համարում ամեն ինչը տնօրինել իր կամքով:

Փ. 114, ց. 2, գ. 33, թ. 43, թ. 71:

№ 15

Հայաստանի Հեղկոմին, պատճենը՝ Ադրհեղկոմին, ՌԱՅԽՆՀ
Ժողովրդական Կոմիտարների Սերհրդին, III Կոմունիստական
Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեին,
բուրին, բուրին, բուրին

25 հունվարի, 1921
Ալեքսանդրապոլ

Երկարատև ռազմական տիրապետության անտանելի ծանր մամլիչը, քաղաքացիական իրավունքների կատարյալ ոչնչացումն և քաղաքում ու գավառում ստեղծված սարսափելի պայմանների պատճառով մեր հետագա աշխատանքների անհնար լինելը, ստիպում են մեզ դիմել ձեզ ներկա Հայաստանի կոմիտեին:

1. Հավաքված և ուղարկված են էրզրում մինչև հունվարի մեկը Ալէք-պոլի գավառից և քաղաքից 15000 բանվոր և գյուղացի ի թիվս որոնց բազմաթիվ կոմունիստները:

Անհայտ կորել են և սպանվել 5000 մարդ:

2. 1 գավառամասում 34 գյուղից ողջ մնացել է միայն 4-ը, այն էլ առանց տղամարդկանց, բացառապես կանանցի մեծոդ ազգաբնակչությամբ, որոնց հանդեպ բռնությունները չեն զաղաքում:

3. IV զավատամատւմ ողջ է մնացել միայն 3 զուգը:

Այէք-պօլի զավատի գյուղացիների ողջ ինչքը տարված է: Գրեթե ողջ զավատում սերմացուի համար հատիկ չի մնացել: Տարված են պարենավորման բոլոր պաշարները, նույնիսկ քաղաքի պահեստներից: Քչված է 300000 դուխ մանր ու խոշոր անասուններ:

4. Հանված են և տարված Ղարս ու Տաճկաստանի խորքերը դէպօրի մեքենաները, երկաթուղային գույքը, տպարանական և այլ մեքենաներ...:

5. Անվերջ պրոֆակացիոն սպանութիւնները, կամ մեղադրանքները այդպիսի սպանութիւններում, օրինակ, անհայտ մարդկանց ձեռքով սպանված ասկերի համար մինչև օրս ձերբակալված տասը միլիցիոներներին, որոնցից մեկը արդեն մեռել է, սկզբում ցանկանում էին զնդակահարել, սակայն այժմ ազատելու համար պահանջում են 500 տոկի լիբա զլխագին: Այս զլխագինները ինչպես մասնավոր, այնպես և պետական բնույթ կրող, սխտեմա են դարձել և այդպիսով քամում են առանց այն էլ քայքայված երկրի վերջին հյուսիսները:

Ասկերները կատարում են ձերբակալութիւններ, դուրս են հանում տներից, մերկացնում, թալանում, բռնաբարում: Ներքնահարկերում կատարում են գնդակահարութիւններ չքմեղ (իմ'անմեղ.— Մ. Ն.) բանավորների և գյուղացիների:

Հալաքում են և բռնի ուղարկում էրզրում մասնագետ բանվորներին և արհեստավորներին...:

Հեղկոմի նախագահ՝ Մ. Գրիգորյան և ուրիշ.
Փ. 114, ց. 2, գ. 43, թ. 2
և գ. 33, թ. 33—35:

Ռուսին քաղաքացի Վասիլ Իոսեկոյի վկայութիւնները
Վրաստանում Հայկական ՍՍՀ լիազոր ներկայացուցչութեանը

27 Հունվարի 1921

Թրֆլիս
Թարգմանութիւն ուսուերներից

Անցյալ տարվա հոկտեմբերի 30-ին գերի ընկնելով Կարսում թուրքերին՝ ես տեսա հետևյալը.

Քաղաքի բնակիչները, խուճապի ժամանակ վերցնելով իրենց ամեն արժեքավոր բան, փրկելու համար իրենց կյանքն ու ապրանքները, լցվեցին Մեղիք-քյոյ կայարանի ճանապարհին ընկած կիրճը: Առավոտյան ժամը մոտ 11-ն էր, երբ թուրքական հեծելախումբը գրավեց ճանապարհի վրայի բարձունքները, և միաժամանակ ամրոցի պարետի կողմից բարձրացվեց սպիտակ դրոշ և պատվերակութիւն ուղարկվեց թուրքական փայային Հայտնելու, որ Հայկական բանակն ամբողջովին Հանձնվում է: Երբ թուրքերը գրավեցին կարևոր բարձունքները, նրանք բարձրացրին կարմիր և սպիտակ դրոշները: Ժողովուրդը, տեսնելով այդ, Հանդարտվեց և, դրանից օգտվելով՝ թուրքերը զնդացրային կրակ բաց արին ժողովրդի վրա, որը տևեց մեկ ժամից ավելի: Վերջապես Հայտնվեցին թուրք սպաները և բռնեցին շենքում գտնվող ամրոցի պարետին, մարդկանց ու քիցեցին դեպի կայարան: Ես էլ ընկա նրանց մեջ, ու ճանապարհին մեզ քարկոծում էին և ուղեկցում Հայհոյանքներով: Բազմաթիվ կանաչք նետվեցին Կարս-Հայ գետը և խեղդվեցին: Տեսա Ամերիկայի ներկայացուցիչ պ. Ֆակսին ամբողջովին մերկ և դողողացող: Մեզ տեղավորեցին քաղաքում, 42 մարդ մի փոքրիկ սենյակում և 4 օր թողին առանց Հացի, այնուհետև տեղափոխեցին բանա, որտեղ առաջին օրը տվին յուրաքանչյուրին 1 ֆ. Հաց, բայց մնացյալ 3 օրերի ընթացքում ոչ միայն Հաց չտվին, այլև հրատարվում էին ջուր տալ, ինչի

պատճառով շատերի լեզուները ուռել էին: 5-րդ օրը 700-800 մարդ տեղափոխեցին ամերիկյան թելի գործարան, որտեղ թուրք զինվորները մեզ էլ ամբողջովին մերկացրին: Ողջ գիշեր խուզարկում էին մեզ և տարան նույնիսկ ամբողջ Հնոտինները: Ստիպված բոլորը ծածկվեցին բամբակով, իսկ վրայից՝ թելերով (գործարանում թել շատ կար): Երկրորդ օրը մեզ գնացքով ուղարկեցին Սարիզամիշ, իսկ այնտեղից՝ Էրզրում... Նրան տղամարդկանց բռնաբարման ղեպեր: Ես՝ որպես ռուսին, չուտով, այսինքն մի ամիս հետո ազատվեցի և եկա Կարս, որտեղ ապրեցի մոտ 3 շաբաթ: Կարսում ես թուրք ղոկտոր նուրի բնից իմացա, որ քաղաքում սպանված են 8 Հազար Հայեր (կանայք, երեխաներ ու տղամարդիկ), բայց իմ դիտարկումներով սպանվածների թիվը 10-12 Հազարից քիչ լինել չէր կարող, քանի որ մի ամիս անց քաղաքի չըջակայքում ղեռնա կարելի էր տեսնել բազմաթիվ դիակներ: Բոլոր կանայք, բացառութայամբ 2, 3 ընտանիքների, որոնց պաշտպանել են օսեթները, բռնաբարձված ու վարակված են: Ծառեր այժմ գտնվում են թուրք սպաների ու զինվորների մոտ, մի մասին էլ քրդերն են տարել իրենց գյուղերը: Քաղաքում կան մոտ 15-20 տղամարդ, որոնք էլ աշխատում են թուրքերի մոտ: Հայերի սպառնքներով լի բոլոր խանութները թուրքերը գրավեցին ու առևտուր են անում: Տները ամբողջովին թալանված են: Վերջին ժամանակներս չըջում էին խուզարկություններով, իրր փնտրում են պետական հանդերձանք և զենք և այդ պատրվակով Հափշտակում էին ամեն ինչ, որ գտնում էին տանը (սեղաններ, մահճակալներ և այլ) և բոլորը տանում են Էրզրում: Անմարտարակ տներում հանում են պատուհանների շըջանակները ու հատանկի փայտը և տանում են, իսկ մնացյալ մասը քանդում են փռեղու Համար: Ես՝ որպես ռուսինացի, իշխանութուններից թույլտվություն ստացա և, Հավաքելով փողոցի որբերից 50 երեխա (իսկ դրանք շատ շատ են և ամեն գիշեր տանյակներով սառչում են), բերեցի Ալեքսանդրապոլ և Հանձնեցի Հեղձոմին... Հունվարի 18-ին Ալեքսանդրապոլում, աղքատեղներում Հայտարեղված են մոտ 100 դիակներ, որոնց թվում էր գտնվում և Տեր Խորեն քահանան:

Պարզվել է, որ այնտեղ, երբ բանվորներին քշում են աշխատանքի, երեկոները հափշտակում են 2, 3 հոգու և քաղաքից դուրս սպանում են: Ալեքսանդրապոլից մինչև Նալբանդ կայսրանը գտնվում է թուրքերի ձեռքին և, ըստ տվյալների ոչնչացված է 140 գյուղ ու գլխովին կոտորել են 18-ից 45 տարեկան բոլոր տղամարդկանց: Մի խոսքով այս շըջաններում մնացած Հայերի, ինչպես նաև զերիների վիճակը Հուսահատական է: Գերիներից շատերը սառչում են, և շատերը մեռնում են սովից:

Վ. Իոնեկո
Ք. 114, ց. 2, գ. 33, թ. 72-73
և գ. 43, թ. 34:

№ 17

Ավանատեսի վկայություններ Կարսի իրադարձությունների վերաբերյալ

2 փետրվարի 1921

Երևան

Թարգմանութուն ռուսերենից

Անցյալ տարվա հոկտեմբերի 30-ին՝ մոտ ժամը մեկին, թուրքական առաջավոր մասերը Հայկական բանակի կողմից առանց որևէ դիմադրություն մասն Կարս: Իշխանութունների կողմից չզգուշացված խաղաղ բնակչությունը, փոքր բացառութայամբ, մնաց իր տեղում... Քաղաքի գրավումից հետո տեղի Հայ խաղաղ բնակչության Համար սկսվեց արյունոտ օրերի շըջան, ուր չխնայվեցին ոչ կանայք, ոչ երեխաներ: Բացառիկ ղեպերից բացի, ինչպես օրինակ հրեա ղեղաղորդ Ռեյշանի և իր կնոջ սպանությունը, սպանում էին միայն Հայերին: Սպանությունների բոլոր ղեպերը ես ի վիճակի չեմ հիշելու, բայց մի քանի առանձին

փաստեր, որոնք խորապես տպավորվել են, կաշխատեմ Համառոտ Հայտնել:

Իմ քաղաքացիական կինը՝ Աերա Պետրովնա Սոկա-նայանը գիտության բուրբեր Կասակովսկայայի, Ադամալյանի և Շի-չենինայի Հետ, որ շատ նման էր ուսուի, վիրակապական նյութերով 5-6 օր շրջում էին տներում, ձեղնահարկերում, վիրավոր բնակչությունը նկուղներում բժշկական օդնութիւն ցույց տալու Համար: Իմ կինը ամեն օր Հիվանդանոցում, որտեղ ես փոքրամիկ երջանիկների Հետ թաքնվում էի, ինձ Հայտնում էր իր տեսած թուրքերի գազանությունների մասին: Տներ էին լինում, որտեղ նա տեսնում էր տղամարդկանց, կանանց ու երեխաների մինչև 30 դիակներ: Մի քանի օրվա ընթացքում նրա տեսած դիակների ընդհանուր թիվը Հասնում էր մինչև 3 Հազար մարդու:

Կարել գրավման 8-րդ և 9-րդ օրը անձամբ տեսել եմ ինչպես 4-5 օրվա ընթացքում սայլերով տեղափոխում էին սպանված խաղաղ բնակիչների դիակները: Այդ ընթացքում ես Հաշվեցի մոտ 50 սայլ դիակներով:

Իմ տեսածների և իմ կողմից միանգամայն վստահության արժանի անձանց կողմից ստացված տեղեկությունների Հիման վրա, միայն Կարս քաղաքում թուրք Հյուրերի կողմից կոտորվել է մինչև 4 Հազար խաղաղ բնակչություն: Բացի դրանից բնակիչների ողջ ունեցվածքը ամբողջովին թալանված է: Կոտորածից և բնակչության վերջնական ջախջախումից Հետո սկսվեցին բոլոր փրկված Հայ տղամարդկանց ընդհանուր բանտարկությունները: Չեն խնայում 80-85 տարեկան ձեռքերին:

Բանտարկվածները տեղավորվել էին Կարսի մարզային բանտում և ամերիկյան արհեստագործական շենքերում, կայարանից Հետո: Նրանցից մի մասը մերկացվել էր մինչև բանտարկությունը, իսկ մնացյալ մասին մերկացրին կալանավորման վայրերում: Կարսի մարզային բանտի պետը ինձ Հայտնեց, որ իր մոտ գտնվում էին 3 Հազարից ավելի մարդ: Դրանից ավելին էր Հաշվվում ամերիկյան արհեստանոցներում: Բոլոր կալանավորների շուրթերը Հանելու մասին ինձ Հայտնեցին նաև ղեկավոր Տեր-Սարգիստ-

վը, Կարսի Ի-ին տեղամասի կոմիսարի օգնական Կարազեղովը, 4-րդ կուրսի ուսանող-բժիշկ Ադամովը, Կաղզման քաղաքի բնակիչ Պողոս Ասոյանը, որոնց Հաջողվել էր ազատվել բանտից: Բոլոր կալանավորներին մերկ վիճակում աշխատանքի ուղարկեցին, մի մասին Սարեղամիշ, մյուսին՝ էրզրում: Էշտազայում ստացված տեղեկությունների Համաձայն նրանց Հակայական մասը մահացավ:

Արամ Եսայան
Ք. 114, ց. 2, գ. 33, թ. 67
և գ. 43, թ. 33:

№ 18

ԼեՍՆ Ալեքսանդրապոլի նոր գալուստամասի Հեղկոմից Հայաստանի Սովետական Հանրապետության Նախագահ ընկեր Կասյանին

4 փետրվարի, 1921
Արևիպոլի

36-րդ գնդի 3-րդ գումարտակի գումարտակապետ Թայ-մաա Յարիկը, որի գումարտակը կանգնած է Ալեք-պոլի գավառի Բավթաուլի գյուղում, ճնշման տակ պահանջում է, որ Բավթաուլիի Պարսիի, Ղասամալիի և այլ գյուղերի բնակիչները ներկայացնեն իրան շնորհակալության թերթեր, այն մարդով, որ տեղիս թուրք Հրամանատարությունը լավ պաշտպան է Հանդիսացել խաղաղ ժողովրդին, տեղի չտալով ոչ անտեսական քայքայման, ոչ թալանի և ոչ էլ սպանության: Մի պահանջ, որը խտրով Հակասում է այդ ժողովրդի արդի կացության, որի անասելի սուկումների ու զուլումների տակ մահվան է գատապարտված տեղիս աշխատավոր գյուղացիությունը:

Երկյուղի տակ վերև Հիշատակված պահանջը կատարվեց:

ես Հասկանում եմ, որ խորամանկ և արեւելյան քաղաքականությունը յուրացնող իմպերիալիստ թուրք հրամանատարությունը այդ ստոր միջոցով ցանկանում է ազդել տեղի ունեցող կոնֆերանսի որոշումների վրա Հօդուտ իրենց քաղաքականության, Հայտնում եմ այս մասին պատշաճավոր կարգադրության Համար:

Լեզկոմի նախագահ (ստորագրութուն)
Ք. 114, ց. 2, գ. 43, թ. 23

№ 19

Համառոտ տեղեկություններ թուրքերի գործողությունների մասին իրենց կողմից սփուլացված շրջաններում և Չեզոք գոտում (ՌՍՖՍՌ-ի կառավարությանը ներկայացված Հայկական ՍՍՀ Լեզկոմի ղեկուցարկից)

7 մարտի, 1921
Մոսկվա
Թարգմանութուն ուստերներից

Չընդհատվող բռնություններ, թալան, խաղաղ բնակչության սպանություններ, բռնություններ կանանց նկատմամբ: Ամեն տեղից թուրքիս է տարվում Հայաստանի ՍՍՌ պետական գույքը — մասնավոր կայքի և տնտեսության թալան, գյուղացիների անասունների հափշտակում, բնակչության պարենի վերջին պաշարների բռնագրավում:

Կարտաճ: Քաղաքը գրավելուց Հետո առաջին երեք օրերի ընթացքում խաղաղ բնակչության սպանությունները, թալանը և կանանց նկատմամբ թուրքական զորքերի կողմից բռնությունները ստացել են զանգվածային բնույթ: Այնուհետև սպանությունների և բռնությունների թիվը պակասեց ու այդ չափով շարունակվում է և հիմա: Բնակչությունից պարենի ողջ պաշարը

խլված է, վառելիքը ամբողջովին գրավված է, նույնիսկ որբանոցների չեն թողել: 18-ից 50 տարեկան տղամարդիկ Հավաքված են, մերկացված, փոխարենը այլուրի պարկերից զգեստանման մի բան հագցված և այդ տեսքով ուղարկված են Սարիղամիշ և ավելի Հեռու, որտեղ տեղավորվելով ամենաժանր պայմաններում, անհրաժեշտ սննդից Համարյա զրկված, նրանք դատապարտվում են դատան Հարկադիր աշխատանքի:

Ալեքսանդրապոլում: Թալանի, սպանությունների, բռնությունների, բռնազավթումների առավել վատթար պատկերը, որ մանրամասն հաղորդվել է ՀՍՍՌ Զինկոմի կողմից Բաբու XI բանակի զորահրամանատարին:

Աղբուլաղի և Համամուլի շրջաններում: Թուրք զինվորների զինված առանձին զորախմբեր ներխուժում են գյուղերը իրագործելով թալան, սպանություններ, բռնություններ կանանց նկատմամբ: Դեկտեմբերի 13-ին ժամը 2-ին նման դեպք տեղի ունեցավ Քյուլուշա գյուղում: Դեկտեմբերի 26-ին թուրքական ջոկատի կողմից Քյաֆթաուլի գյուղը գրավելուց Հետո, նրա տեղաբաշխման Համար առանձնացված բանվորների թվից ինը երիտասարդ կոմունիստներ, նույն գյուղի բնակիչներ, աշխատանքների ավարտին զազանաբար սպանվել են գյուղի մարազները մեկուկ, նրանց զիակները տարվել են Քյաֆթաուլի բնակիչ Ստեփանոս Բաշաջյանի սայլով, որից Հետո Հանցանքը ծածկելու Համար վերջինս նույնպես սպանվել է:

Չեզոք գոտում: Թուրքական զորքերի կողմից Հաճախակի փորձեր են արվում վերջինս գրավելու Համար իբր այնտեղ տիրող խառնափոթ վիճակը վերացնելու պատրվակով: Գոտուն սահմանակից շրջանների բնակչության վերաբերյալ թուրքերի վերաբերմունքը զգալիորեն մատանում է: Ամեն միջոցներ զորք են դրված բնակչության վերջնական տնտեսական քայքայման և նրա ստրկացման Համար: Հարկահավաքման պատրվակով գյուղացիներից խլվում է նրանց ողջ ունեցվածքը, հափշտակվում է վերջին անասունը: Մի Հարկահավաքից Հետո անմիջապես նշանակվում է նորը, որ ուղեկցվում է թալանով, բռնություններով,

որ սկսում են ընդունել զանգվածային բնույթ: Ընդամենը մի քանի օրերի ընթացքում միայն 4-րդ գավառային տեղամասային կոմիսարիատում գրանցված է 200 այսպիսի սպանություն...:

Ճիշտ է: Հայկական ՍՍՀ պատվիրակության
քարտուղար (ստորագրություն)
Ֆ. 114, ց. 2, գ. 33, թ. 80 և գ. 43, թ. 17:

№ 20

Պատճեն

Ընկ. ՀԱՍՍ Արտոգործմանիստրին

14 մարտի, 1921

Մոսկվա

Թարգմանություն ռուսերենից

Քաղվածք Հայաստանի Հատուկ Հանձնաժողովի նախագահի տեղակալի Դիլիջանի, Ղարաքիլիսայի և Ալեքսանդրապոլի գավառներ 1920 թ. դեկտեմբերի 20-ից մինչ 1921 թ. Հունվարի 10-ը կատարած ծառայողական ուղևորությունից:

Ղարաքիլիսայի գավառում բնակչությունը ամեն ժամ սարսափի մեջ է նալրանդ և այլ գյուղերում տեղակայված թուրքական զորքերի վայրագությունների պատճառով: Ասկերների առանձին խմբեր ամեն օր շրջում են գյուղերը և պահանջելով վերցնում մթերք և թանկարժեք առարկաներ: Հանրահայտ պատճառներով ինձ չհաջողվեց բացահայտել առանձին փաստեր, սակայն, այնուամենայնիվ կարողացա արձանագրել հետևյալը:

1. Երկու փաստաթուղթ ձեռք բերի՝ Քյուլուջա և Փամբ գյուղերի մյուզիկների հրամանները, որտեղ հանձնարարվում էր գյուղական Համայնքներին յուրաքանչյուր գյուղից անմիջապես Հանձնել 1 ոչխար, յուղ, 1 արծաթե ժամացույց և 1 ոսկե մատանի՝ ժամանող փաշային (?) նվիրելու Համար: Փաստաթղթերը Հանձնված են Մուստաֆա Մուրադիին:

2. Համայնու գյուղում տեղակայված էր Ղարաքիլիսայի կայազորից կարմիրբանակայինների բաժանմունքը: Կայազորի պետը իր նկատառումներով հետ էր կանչել այդ բաժանմունքը: Այդ նույն օրը բազմաթիվ տեղեկություններ ստացվեցին թուրքական ասկերների վայրագությունների մասին ոչ միայն Չեղզք գոտում, այլև նրանից այն կողմ (անասունների հափշտակում, թալան, կանանց առևանգում և այլն): Հաջորդ օրը Համայնու հետ ուղարկվեց կարմիրբանակայինների մի փոքր շոկատ, որոնք Վորզնավ գյուղում, հանցանքի վայրում, ձերբակալեցին 5 զինված ասկերների թայանած ապրանքի հետ: Այդ ասկերները Հանձնվեցին Ղարաքիլիսայում թուրքական ներկայացուցչին: Այդ կապակցությամբ ես անձամբ խոսակցություն ունեցա թուրք ներկայացուցչի հետ, որը նման երևույթը բացատրեց որպես թյուրիմացություն:

3. Ականատեսների պատմածներով Կարալ, Կարարան, Ղաչաղան, Քյուլուջա, Սպիտակ, Փամբ գյուղերը սարսափի մեջ են. թուրքական զորքերը իրենց պահում են, ինչպես թշնամու զեմ հաղթանակածներ և տանում են այն ամենը, ինչ որ կարելի է տեղադարձել:

4. Ալեքսանդրապոլի գավառը իրենից ներկայացնում է ավելի սարսափելի տեսարան. ըստ II և IV գավառամասերի ստուգված գյուղերի հաղորդագրության՝ այդ շրջաններում ոչնչացված են 54 գյուղեր: Գյուղեր կան, որտեղ նույնիսկ շուն չկա: Բնակիչները մասամբ կոտորված են, մի մասը զեռ-զեն են փախել, իսկ մեծ մասին ուղարկել են Կարս, Թուրքիայի խորքերը: Ես հավաքել էի փաստացի տվյալներ, որոնք հետագայում ստիպված եղա ոչնչացնել Ալեքսանդրապոլի կայարանում թուրքերի կողմից ինձ սպառնացող վտանգի պատճառով:

5. Ս. թ. Հունվարի 2-ին Հաջինազար ու Ղոնախկրան գյուղերի 2 տարեքավոր գեղջկուհիներից զիմում ստացա այն մասին, որ իրենց գյուղերից թուրք ասկերները առևանգել են 4 անչափահաս աղջիկ, որոնք այժմ գտնվում են Ալեքսանդրապոլում: Ձեռք առած միջոցներով հաջողվեց պարզել, որ այդ աղջիկ-

ները գտնվում են Արշակունի գյուղում, Կարախաչի փողոցում: Չնայած տեղի Հեղկոմի միջամտությանը՝ աղջիկները ոչ միայն չազատվեցին, այլև բողոքովին անհայտացան:

6. Լուսնվարի 3—4-ին լուր ստացա, որ գյուղերից բերվել են 20 հայ օրիորդներ: Թուրք սպաները, նրանց զինվորների շուրքեր հագցնելով, պատրաստվում են Կարս ուղարկել: Հեղկոմի եռանդուն բողոքները ոչնչի է հասցրին: Մեզ շատ լավ հայտնի էր, որ այդ աղջիկները գտնվում են վագոններում: Մեզ թույլ չափեցին նայել վագոնները: Թուրք պարետը մենակ մտավ վագոն և նույնիսկ հայտնեց, որ այնտեղ ոչ մի կին չկա:

7. Համարյա ամեն օր թուրքական հրամանատարությունը պահանջում էր 100 բանվոր, որոնք մեկ-երկու օր աշխատելով, սովորաբար անհայտանում էին. ըստ լուրերի նրանց ուղարկում էին Կարսի կողմը:

8. Իմ ներկայությամբ թուրքական հրամանատարությունը որոշակի հայտարարությամբ Հեղկոմից պահանջեց մեկ օրվա ընթացքում 10000 հրացան տրամադրել, որ չկատարելու դեպքում կսկսվեն համընդհանուր խուզարկություններ: Այդ սպառնալիքը չիրագործվեց լուկ շնորհիվ Մզիվանիի և Մուստաֆա Սուրբիի միջամտության:

9. Ալեքսանդրապոլի Հեղկոմը պաշտոնապես հայտարարեց, որ կարծեցյալ դաշնակների շատ մերթափառությունները և Ալեք-պոլի Չեկալի (Արտակարգ Հանձնաժողովի) բոլոր գնդակահարությունները կատարվել են թուրքական հրամանատարության ճշման ներքո:

10. Իմ Ալեք-պոլում եղած ժամանակ, ամեն օր, [Թուրքերը] գիշերով ներխուժում էին քաղաքի ծայրում գտնվող տները, վայրագություններ էին կատարում, հափշտակում էին այն ամենը, ինչ որ ուզում էին: Գանդատներն ու բողոքները Ռուշտի փաշայի կողմից չէին ընդունվում:

Առհասարակ Ալեք-պոլի և զավառի բնակչության վիճակը տաղանապալից է: Նա նվազում է ամեն օր, նվազում է և Ֆիդիկական և բարոյական իմաստով: Հեղկոմը, կոմկազմակերպությունը

ները և այլ, խաղալիք են թուրքական հրամանատարության ձեռքին, իսկ հաճախ էլ գործիք՝ Անկարայի բանակի Ալեք-պոլի կազարի քմահանույթները կատարելու համար:

Հայաստանի Չեկալի եսխազաչի տեղակալ Ամատունի
 իսկական հետ ճիշտ է.
 ՀՍՍԹ պատգամավորության քարտուղար (ստորագրություն)
 Ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 15:

№ 21

Ալեքսանդրապոլի Հեղկոմը Հայկական ՍՍՀ Հեղկոմին*

Թարգմանություն ռուսերենից

Հնարավոր չէ ներկայացնել զազանությունների և ավերածությունների լրիվ պատկերը, որ իրագործվել է Ալեքսանդրապոլում և նրա զավառներում թուրքական կարճատև տիրապետության ժամանակ, նախ այն պատճառով, որ զեռես շարունակվում են ստացվել սպանվածների, գերի տարվածների, վիրավորների, բռնաբարվածների, թալանվածների, ինչպես նաև ավերված գյուղերի, զոդացված անասունների, կողոպտած ունեցվածքի և այլ ցուցակները: Ստացված նյութը տալիս է հետևյալ մտավոր թվերը: Մարդկային զոհերը և ունեցվածքի կորուստը պատկերվում է հետևյալ կերպ.

Մարդկային զոհեր

	Տղամարդիկ	Կանայք	Երեխաներ
1 - սպանվածներ	3000	25000	5000
2 - գեղակահարվածներ	25	-	-

* Փաստաթուղթը թվական չունի, ըստ երևույթի կազմված է 1921 թ. ապրիլին - Ս. Ս.:

3 - սոփյոց մահացածներ	10000	12000	10000
4 - վերափորձներ	20000	15000	3000
5 - բուստորվածներ	-	50000 (զբանցից 20000 աղջիկներ)	-
6 - գերի տարվածներ	-	8000 (զբանցից 3000 աղջիկներ)	-

Հավաքված է Ալեքսանդրապոլի Հեղկոմի կողմից ստեղծված Հատուկ Հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովը շրջաբերական նամակով դիմել է տեղամասային հեղկոմներին՝ Հետաքրքրող Հարցի կապակցությամբ ստույգ տվյալներ հավաքելու համար և մշակված ձևով ստացել է տվյալներ, որոնք ի մի են բերված այստեղ:

Ստորագրություն
Ք. 114, ց. 1, գ. 46, թ. 4:

№ 22

Հուլի 2 շտապ

Ռուսաստանում և ողջ Կովկասում Հայ-կաթողիկեների Հոգևոր վարչությունից գիմուճը Վրաստանում ՀՍՍԻ դիվանագիտական ներկայացուցչին

7 մայիսի, 1921

Թիֆլիս

Թարգմանություն ուսուցիչներից

Արզվինի շրջանից սույն Հոգևոր վարչությունը ստանում է խիստ ցավալի տեղեկություններ. թաթարական գիշատիչ բանդաները ամայացնում են հիշյալ շրջանի գյուղերը և սիստեմատիկորեն կոտորում են Հայ խաղաղ բնակչությանը: Սաթլիել գյուղից, կոտորածից ինչ-որ հրաշքով փրկված, կամաններով, սարերով Ախալցխա եկած և պատահմամբ այստեղ հասած մի փախուստական պատմում էր, թե ինչպես ինքը ականատես է եղել իր համագյու-

ղացիների տանջամահությունը, արտակերպ խոսքերով նկարագրում է, թե ինչպես կտոր-կտոր են արել ու թառուհիս գտարեկան իրենց վանաՀայր քահանա Տեր Պողոս Բոյաջյանին: Այդպիսով ամայացան ու ջնջվեցին երկրի երեսից Սաթլիել, Պիսիկուր, Մամանելիս և ուրիշ գյուղերը, իսկ դրանց բնակչությունը գլխովին կոտորված է:

Այժմ նույն վտանգն է սպառնում Արզվին քաղաքին, որտեղ ներթալումն գտնվում է շրջանի ծաղկուն երիտասարդությունը և լավագույն մտավորականությունը, նույն ճակատագիրն է սպասվում քաղաքի բնակչությանը և մտավորականությանը:

Սույն Վարչությունը ենթակա հիշյալ քաղաքի ղեկան վարդապետ Կարապետ Դիրուզյանը ինձ հասցեագրված ապրիլի 12-ի իր վերջին նամակում, որքան որ թույլ են տվել տեղի ու ժամանակի հանգամանքները, ինչպես նաև քեմալականների խիստ հսկողությունը, ակնարկել է իրենց սպառնացող այդ վտանգի մասին և խնդրում է կենտրոնական Համապատասխան իշխանություններից անհապաղ օգնություն՝ այդպիսի վտանգը կանխելու համար:

Հարկ է նաև նշել, որ թուրքական բանակի երկու Հարձակումների ղեկավարում վերջին եմրուպական պատերազմի ժամանակ Արզվինի բնակչությունը երկու անգամ փրկվել է տեղի թաթար բնակչության շնորհիվ, որը մշտապես, փոխադարձ բարի դրացիական Հարաբերություններ է տածել Հայերի նկատմամբ, և հստակապես տեղացի մի քանի ազգացիկ մահմեդականների շնորհիվ, որոնք ամեն կերպ պաշտպանում ու Հովանավորում էին քաղաքի քրիստոնյա բնակչությանը:

Իսկ այժմ, վերջին Հավաստի տեղեկությունների համաձայն, տեղի թուրքական իշխանությունները քաղաքից հեռացրել և գերի են տարել այդ նույն մահմեդական պարագլուխներին, որոնք հովանավորում էին Հայ բնակչությանը:

Այս միակ փաստը երևի թաթարների զարգելի մտադրության միակ ապացույցն է Արզվին քաղաքի և արվարձանների Հայ բնակչությանը սպառնացող կոտորածի նախորդին:

եվ այդ պատճառով սույն Հոգեւոր վարչութիւնը թախան-
ձագին խնդրում է Ձեզ վերոշարադրյալը Հասցնել ուժ Հարկն է՝
չուտախույթ և անհապաղ միջոցներ ձեռք ստնելու, կանխելու Հա-
մար վտանգը և փրկելու հիշյալ շրջանում մնացած խաղաղ բնակ-
չութեանը, հիշելով, որ փոքրագույն դանդաղումը կավելացնի
Հարյուրավոր և Հազարավոր անմեղ զոհերի թիվը:

Վ. փոխտեղդ Առաքելական Ազմինիստատորի
և Հոգեւոր Վարչութեան անդամ Ա. Գապոյան
Փ. 114, ց. 1, գ. 131, թ. 6-7:

№ 23

Քաղվածք

Կապի աշխատակից Կոստանովիլու Հայտագրից ուղղված
Վրացական ՍՍՌ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարին

13 մայիսի 1921

Քիֆիս

Թարգմանութեան ուսերեկից

...Ահա ինչպես է նկարագրում թուրքական զորքերի գոր-
ծողութիւնները Ալեքսանդրապոլի Հեղկոմի նախագահ ընկ
Սարգսյանը...:

Նոյեմբերի 7-ին, ժամը երեկոյան 10-ին Ալեքսանդրապոլ
քաղաքի կայարանն ու բերդը գրավեցին թուրքերը: Նրանք բռ-
կոտն էին, Համարյա մերկ, նույն զիւեր Հարձակվեցին կայարա-
նամերձ մասի և բերդին մոտ գտնվող շրջանի խաղաղ բնակչու-
թեան վրա: Առաջին իսկ վայրկյանից խախտվեցին Հայտութեան
պայմանները և անարգվեց պատվի ու ունեցվածքի անձեռնմխե-
լիութեան տարրական իրավունքը: Առաջին իսկ քայլերից պարզ-
վեց, որ քաղաքը տրվել է Հրոսակախմբերի քմահաճույքին: Թա-
լանը շարունակվեց նաև ցերեկը նույնիսկ քաղաքի կենտրոնում,

բայց ոչ այնպիսի արագութեամբ, և ոչ այնպիսի չափերով, ինչ-
պես ծայրամասներում:

Վաղ առավոտից Քաղաքային ինքնավարութիւնը Հեղեղ-
վեց զանազան զորամասերի՝ Հարյուրավոր փութ միջբքի պա-
հաններով, մինչդեռ կառավարութեան պահեստները Համարյա
թե գատարկ էին:

...Թուրքերը Հանեցին բոլոր Հեռագրային սարքերը, քա-
ղաքը անջատեցին ողջ աշխարհից և ձեռնամուխ եղան իրենց
հրեշավոր ծրագրի իրագործմանը՝ մի ողջ ժողովրդի ոչնչացման
ծրագրին: Բոլոր ճանապարհները քաղաքից դուրս է Հակառակը
